



32203

891 99/09	Էրևանի քաղաքի	կենտրոն
1-78	Պետական	արխիվ
	արխիվի	կենտրոն
		Տ. 60








АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

*Институт литературы имени М.Абегяна*

М. Т. АВДАЛБЕГЯН

ХАЧАТУР  
КЕЧАРЕЦИ

XIII - XIV в.в.



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

*Ереван*

*1958*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գյումրիանոթյան ինստիտուտ

891.99.092 [Խաչատուր Կնչառեցի]

Ա-78

Մ. Թ. ԱՎԴԱԼԵԳՅԱՆ

ՄՏՈՒՎԱՄ Կ 1961 96

# ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՅԻ

XIII - XIV դ.դ.

~~32203~~  
A II  
31766



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երեզան

1958

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ



Ե Ր Կ Ո Ի Խ Ո Ս Ք

Խաչատուր Կեչառեցին 13—14-րդ դարերի հայ գրականության հետաքրքրական դեմքերից մեկն է: Նրա անունը հանախ է հիշատակվում ձեռագրերում, ինչպես նաև ստեղծագործության մեջ: Սակայն նրա ստեղծագործությունները, կյանքն ու գործունեությունը մինչև այսօր ամբողջական ուսումնասիրությամբ դեռ հրապարակի վրա չեն դրված: Հայ գրականության պատմության հեղինակները (Գ. Զարբհանալյան, Ա. Զամինյան, Վ. Փափազյան) հիշատակում են նրա անունը մեծ մասամբ իբրև գանձասացի: Նրա կյանքին ու անձնավորությանն անդրադարձել են մեր հայագետ բանասերները (Ա. Զորանյան, Հ. Պոտուրյան, Ն. Ակինյան, Տիրայր արեւելահայոս), սակայն Կեչառեցին նրանց գործերում ֆննդվում է իրենց հետաքրքրող այս կամ այն հարցի կապակցությամբ միայն:

Համեմատաբար ընդարձակ՝ Խաչատուր Կեչառեցու մասին խոսել են Հ. Տաշյանը «Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսրենեայ վարուց Աղեմսանդրի» և Գ. Հովսեփյանը «Խաղբակյանք և Պոռոշյանք հայոց պատմության մեջ» արժեքավոր աշխատություններում: Վերջիններում մի ֆանի էջով ներկայացվում է Խաչատուր Կեչառեցու ընդհանուր դիմանկարը: Նրան հատուկ գլուխ է նվիրել «Հայոց հին գրականության պատմության» մեջ Մ. Աբեղյանը:

Սակայն այս բոլորը, այնուամենայնիվ, չեն ամբողջացնում Խ. Կեչառեցու կյանքի ու գործունեության բոլոր կողմերը, մանավանդ թերի են ներկայացված ստեղծագործությունները:

Ներկա աշխատության մեջ ամփոփված են Խաչատուր Կեչառեցու ստեղծագործությունները, նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող բոլոր տվյալները: Փաստական այս հիմքի վրա փորձել ենք բնութագրել Խաչատուր Կեչառեցուն իբրև ստեղծագործողի և ցույց տալ նրա տեղը հայ միջնադարյան գրականության պատմության ընդհանուր շղթայում:

Այս ուսումնասիրությունը, ինչպես նաև Խաչատուր Կեչառեցու բանաստեղծությունների բնագրերը պատրաստվել են 1945 թվականին և հաջորդ տարի պաշտպանվել իբրև քեկնածուական դիսերտացիա: Հրատարակության կապակցությամբ նորից վերանայել ենք այն, առանց, սակայն, էական փոփոխություններ մտցնելու աշխատության կառուցվածքի և եզրակացությունների մեջ:

ԿՅԱՆՔՆ  
ՈՒ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



11  
W. H. G.

## Ժ Ը Մ Ը Ն Ը Կ Ը

1236 թվականին մոնղոլական զորաբանակները ներխուժեցին Հայաստան:

«Պտուտակեալ, փոթորկեալ հասին յաշխարհս մեր. և առհասարակ տիրեալ հնազանդեցին զամենայն տիեզերս. կոխեցին, կործանեցին զամենայն թագաւորութիւնս»<sup>1</sup>:

Կուլտուրապես և արտադրապես ցածր էր այդ ժողովուրդը, արշավանքներում դաժան ու արյունարբու: Հոծ զանգվածներով հեղեղում էր աշխարհը, անխնա ոչնչացնելով ու նվաճելով անհամեմատ զարգացած, առաջավոր ժողովուրդներ ու տերություններ: Նրանց պետք էին միայն տարածություններ—արոտավայրեր, անասուններ արածացնելու համար. «Մոնղոլները վարվում էին իրենց արտադրության եղանակի համապատասխան, երբ ամաչացնում էին Ռուսաստանը,— գրում է Մարքսը,— Անասնապահության գլխավոր պայմանն էր անմարդաբնակ տարածությունները»<sup>2</sup>:

Երկուսից-երեք տասնամյակի ընթացքում նրանք արդեն նվաճել էին հյուսիսային Չինաստանը, Կորեան, Խորեզմը, Խորասանը, Կովկասը, Արևմտյան, Լեհաստանը, Մորալիան, Հունգարիան: Պատմագիրների գեղեցիկ նկարագրությամբ արյուն ու արցունք էին ողողում այն ժամանակ Ինդոսի, Յոհանգոյի, Արաքսի, Վոլգայի, Օդերի ու Դանուբի ափերը: Որտեղից անցնում էին մոնղոլները, թողնում էին միայն ավեր ու թալան: Ամաչանում էր երկիրն, ինչպես բնության մեծ արհավիրքներից: «Սփռեալք առհասարակ ընդ

<sup>1</sup> Մ տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Ն, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 402:

<sup>2</sup> Կ. Մ ար ք ս, Քաղաքաանտեսության քննադատության շուրջը, Երեւան, 1932, էջ 39, 1948, էջ 251—252:

երեսս դաշտաց, լերանց և ձորոց, իբրև դմարախ բազմերամ, կամ իբրև զանձրև յորդութեամբ տեղեալ ի վերայ երկրի...», — գրում է ականատես պատմագիր Կիրակոս Գանձակեցին<sup>1</sup>: «Անդ էր տեսանել այնուհետև աղէտք տրտմագինք, և աշխարհ արժանի ողբոց, — շարունակում է նա, — զի ո՛չ երկիր թագուցանէր զմտեալսն, և ո՛չ վէժք և անտառք պահէին զասպատանեալսն, և ո՛չ ամրագոյն շինուածք բերդից և խոխոմք ձորոց... Մօր արտասուաց՝ ոչ ողորմէին, և յալիս երբէք ո՛չ գթային, ի սպանութիւնս խրախութեամբ ընթանային, իբր ի հարսանիս, կամ ի գինարբունս: Լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց. և ոչ ոք էր՝ որ թաղէր զնոսա. հատեալ էր արտօսը յաշաց սիրելեաց, և ոչ ոք էր՝ որ իշխէր լալ զանկեալսն յահէ անօրինացն... Իբրև խաւարեալ մածեալ էր ամենայն աշխարհ, և սիրէին մարդիկ զգիշեր առաւել քան զտիւ. երկիր թափուր մնաց ի բնակչաց իւրոց. և շրջէին ի նմա որդիք օտարաց... և ո՛չ ինչ մնաց, զոր ո՛չ առին. շրջէին այսր անդր արագութեամբ, իբրև զայծեմունս և կեղեքէին՝ պատառէին իբրև զգայլս. երիվարք նոցա ո՛չ վաստակէին յընթացս, և ո՛չ նոքա ձանձրանային ի ժողովել զաւարս...»<sup>2</sup>:

Մոնղոլական արշավանքների ահուկի թափն ու առասպելական հաջողությունները, նաև դիմադրական ամենաթուլլ ուժ ցուցաբերող ժողովուրդներին իսպառ բնաջնջող քաղաքականությունը, զինաթափ էին անում պայքարի պատրաստ, արի ու կորովի ռազմիկներին. «Քրանէր անձն՝ արի արանց, և լուծանէր ձեռք՝ կորովի աղեղնաւորաց, թաքուցանէին զսուրն, որք ունէին զնոսա. զի մի՛ թշնամեացն տեսեալ անողորմ սատակեսցեն»<sup>3</sup>:

Առավել ծանր էր դրութիւնը Հայաստանում, ուր ժողովուրդը դեռ չէր սթափվել սելջուկների ավերածություններից, Զալալեղզինի արշավանքներից, շուներ միասնական ուժ ու նպատակասլաց կազմակերպվածություն:

Բայց չնայած սրան, մոնղոլական հորդ զանգվածները դիմադրության հանդիպեցին հայ ազգաբնակչության կողմից. դիմադրության փորձեր եղան Անիում, Շամքորում և այլուր:

Անիի քաղաքային «ամբոխն» ու քաղաքի պատսպարությունը

<sup>1</sup> Կ Ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 225:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 225—227:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 225:

դիմած «ռամիկները» ոչնչացնում են Չուրմազունի ուղարկած դեսպաններին և ուժեղ դիմադրություն կազմակերպում: Գազազած մոնղոլները մեծ դժվարությամբ քաղաքի պարիսպները խորտակելուց հետո, դաժան հաշվեհարդարի են նստում քաղաքի պաշտպանությունը կազմակերպող բնակչության հետ: Դաժան թրատումից ազատվում են միայն սակավաթիվ արհեստավորներ, կանայք և երեխաներ<sup>1</sup>:

Դիմադրության փորձեր են արվում և այլ վայրերում, բայց ամենուր դրանք ավարտվում են ապստամբների անողոք ու անխնա ոչնչացումով:

Ժողովրդական հերոսական դիմադրությունը պարտության է մատնվում:

Ժողովուրդը թշնամու հետ խոսելու այլ միջոց չուներ:

Թշնամու հետ լեզու գտնել կարողացան երկրի տերերը, Կիլիկիայում՝ Հեթում թագավորն իր կողմնակիցներով, Արևելքում՝ հայ-վրացական իշխանական մի շարք տներ, որոնք Կիրակոս Գանձակեցու խոսքերով, «անձնապահ եղեն ամենեքեան, գաղթեալք յամրոցս ո՛ւր և կարացին»<sup>2</sup>, և մեկը մյուսի հետևից հպատակություն հայտնեցին նվաճողներին՝ պարտավորվելով վճարել հարկեր և իրենց զորքերով մասնակցել մոնղոլների հետագա արշավանքներին<sup>3</sup>:

Մոնղոլների հետ համագործակցության ընթացքում իրենց ծառայություններով, հատկապես պատերազմական գործողություններում, աչքի են ընկնում մի շարք զորավար իշխաններ Օրբելյանների և Խաղբակյանների տնից, որոնք մոնղոլ խաներից ստանում են հողային պարգևներ, տնտեսական, իրավական, քաղաքական արտոնություններ, երկրի ներքին գործերում առժամանակյա անկախություն. թեթևանում է հարկը նրանց երկրներում, դադարում կամայական կողոպուտն ու թալանը օտար նվաճողից:

Սրա հետևանքով Արևելյան Հայաստանում, հատկապես Սյունիքը և Պոռչյանների տիրապետության տակ գտնվող Վայոց ձորը զերծ են մնում մոնղոլական ասպատակություններից. և թեև, ըստ Կիրակոս Գանձակեցու, հայ ֆեոդալները, ընդունելով մոնղոլների

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 245:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 225:

<sup>3</sup> Մաղաքի արեղա, Պատմութիւն վասն ազգին նետողաց, Պետերբուրգ, 1870, էջ 8:

գերիշխանութիւնը, շին դադարում «ի նեղելոցն և ի պահանջել վասն իւրեանց շահելոյ» և առաջվա նման «զրկէին և կողոպտէին զաղքատս, և ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ազանէին, ուտէին և ըմպէին և մեծամեծս փքանային»<sup>1</sup>, այդ չի խանդարում Ստեփանոս Օրբելյանին հիշատակելու, թե «ծագեաց խաղաղութիւն որպէս արեգակն ի մէջ գիշերի» և կամ տեսնել «շնորհօքն աստուծոյ զտունս զայս իբրև զտապանն նոյեան ի մէջ աշխարհակործան ալեացն»<sup>2</sup>:

Հայ իշխանների՝ մոնղոլների հետ լեզու գտնելու փաստի մեջ, անշուշտ, առկա են ֆեոդալական իշխող տների դասային շահագրգռութիւնները, և մեր պատմագիրները այդ փաստը տեսնում, արձանագրում և գնահատում են յուրաքանչյուրն իր հասարակական հետաքրքրութիւններից ու դասակարգային համակրանքից ելնելով, բայց հասարակութեան իշխող շերտերի շահագիտական մղումներից բխած այդ քայլը տվյալ պայմաններում փաստորեն համընկնում էո բուն ժողովրդական խավերի շահերին. ժողովուրդը շահագրգռված էր պահպանել երկիրն ու իր՝ առանց այն էլ շարքաշ գոյութիւնը օտար նվաճողի դաժան ասպատակութիւններից ու թալանից, մանավանդ որ թշնամուն դիմադրաւելու փորձերն աղետալի հետեւանքներ ունեցան:

Ինչպես իր ռազմական կորուվով ու խիզախութեամբ, այդպես էլ երկրի կրթական գործին հովանավորելու իր եռանդով, միջնադարում աչքի է ընկնում Պոռշը՝ Խաղբակյան տնից, որի անունով հետագայում Խաղբակյան ֆեոդալական տունը վերանվանվում է Պոռշյան:

Պոռշի հայրը՝ Վասակ Խաղբակյանը, դեռ Զաքարյանների օրոք, իր ծառայութիւնների համար ստացել էր կալվածներ Գառնիից մինչև Բարգուշատ:

Ըստ Ղևոնդ Ալիշանի և Գ. Հովսեփյանի, Խաղբակյանց տան իշխանութեան վայրն էր հիմնականում Վայոց ձորը<sup>3</sup>, «որի կենտրոնն էր Սրկղունիք ավանը՝ այժմ Բաշքենդ, ուր գտնվում էր՝ ըստ ավանդութեան, Պոռշի պալատը կամ միջնադարյան լեզվով՝ «Դարպասը»<sup>4</sup>:

<sup>1</sup> Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն, էջ 303:

<sup>2</sup> Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Կ Ն, Պատմութիւն, էջ 411, 431:

<sup>3</sup> Ղ. Ա լ ի շ ա ն, Սխական, Վենետիկ, 1893, էջ 130:

<sup>4</sup> Գ. Հ յ Վ Ս Ե Փ Ե Կ Ն, Խաղբակյանք և Պոռշյանք հայոց պատմութեան մեջ, մասն Ա, Վաղարշատ, 1928, էջ 5:



«Բշնիի արևելյան մասը, Կեչառվաց վանքով, Խաղբակյանների սեփականությունն էր և նույն իսկ Վասակ Խաղբակյանի սիրելի վայրը, ուր նա շինեց յուր գողտրիկ և գեղեցիկ կաթուղիկե եկեղեցին»<sup>1</sup>:

Բացի Կեչառվաց վանքից, այլ շինություններ, ավաններ, եկեղեցիներ ու վանքեր կան Վայոց ձորում և այլուր, որ շինված են «իշխանութեամբ Պոռշոյ», «Ի բարեպաշտ իշխանութեան Պոռշոյ», «չարիական և քաջատոհմ յիշխանութեան Պոռշոյ» և այլն:

Քիչ շնն նաև այն կոթող-հուշարձանները, որ բարձրացրել է ինքը Պոռշ իշխանը. բավական է հիշել միայն Գեղարդի վիմափոր տաճարներն ու Թանատի վանքը:

Բնական է, որ այս ամենը հիացում պետք է պատճառեին մեր տոհմային պատմիչներին ու գործիչներին, մեծարելու Պոռշին և ցավով հիշատակելու նրա մահը. «Փոխեցան ի Քրիստոս աշխարհաշէն իշխանքն Պոռշ և Սադուն Արծրունի», «Ի թուին ՉԼԳ (1284)... մեռանի մեծ և բարի իշխանն հայոց Պուաշ և դնի ի Կեչառուա»<sup>2</sup>:

Որքան էլ տոհմային և աշխարհայացքային միտումնավորությունից բխած համարենք ֆեոդալ-իշխանի մեծարումն ու իդեալականացումը հայ պատմիչների գործերում, այնուամենայնիվ շնք կարող անտեսել այն, որ հայ պատմիչների գերակշիռ մասը, շնայած իր ֆեոդալական աշխարհայացքին, իբրև օտար նվաճողների տիրապետության տակ կքած ժողովրդի ներկայացուցիչներ, իրենց պատմություններում դասային շահագրգռությունների հետ միատեղ մի զգալի շափով արտահայտել են նաև ժողովրդասիրական, հայրենասիրական գաղափարներ:

Այս պատճառով էլ դժվար է ենթադրել, թե Պոռշ իշխանը «մեծ» և «բարի», «աշխարհաշէն» անուն վաստակել է սոսկ նեղ դասակարգային գնահատություններ. այդ տրվել է նրան մոնղոլական տիրապետության պայմաններում երկրի խաղաղ վիճակն ապահովելու, շինարարական-ճարտարապետական գործունեության համար: Պատահական չպետք է համարել Պոռշի շուրջը հյուսված հայ ժողովրդական բանահյուսական զրույցներն ու ավանդությունները, որտեղ նա հանդես է գալիս իբրև խաղաղության ջատագով ու երկրի

<sup>1</sup> Գ. Հ ո վ ս ե լ յ ա ն, Խաղբակյանք և Պոռշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 7:

<sup>2</sup> Մ ի թ ա Ր Ա յ Ր ի վ ա ն ե ց ի, Պատմութիւն հայոց (ժամանակագրութիւն), Մոսկվա, 1860, էջ 68:

պաշտպան<sup>1</sup>: Պոռշն անվանված է և «աջու բազուկն նոր Սիրնի»-  
այս արտահայտությունն ավելի լայն առում ունի և կապվում է  
Պոռշի կրթական-«լուսավորական» գործունեության հետ: Այդ գոր-  
ծունեության պսակը կազմում են հայ միջնադարյան դպրոցների  
կազմակերպումն ու հովանավորությունը:

Ձեռագիր մի հիշատակարանում Պոռշյաններն անվանված են  
«տէր և իշխեցող սուրբ մենարանիս և տանս ժողովելոց»<sup>2</sup>, որով  
պարզ է դառնում Գլաձորի բարձրագույն դպրոցի գոյությունը  
Պոռշյանների միջոցներով:

Միջնադարյան այդ դպրոցները հանդիսացել են այն օջախնե-  
րը, որտեղից դուրս են եկել մեր միջնադարյան գործիչներից շատ  
շատերը, ուստի այստեղ անհրաժեշտ է մի քանի խոսք ասել միջ-  
նադարյան այդ դպրոցների՝ վարդապետարանների և այնտեղի  
ուսուցիչների՝ վարդապետների մասին:

«Վարդապետ» հասկացողությունը հին դարերում ամենապատ-  
վելի ու բարձր հասկացողություններից մեկն է եղել: Այն չի նշա-  
նակել «արեղա» կամ «սարկավադ»<sup>3</sup>, այլ «ուսուցիչ», «գիտնական»,  
«ուսուցչապետ». այն համապատասխանել է երբայական «բարունի»  
բառին, որը շատ տարածված գործածություն է ունեցել մեզ մոտ  
հատկապես միջին դարերում. «բարունապետն Ներսէս», «քաջ  
բարունն Խաչատուր» և այլն, և այլն:

Այդ աստիճանը տրվել է վարդապետարաններում որոշ անհրա-  
ժեշտ գիտելիքներ ստացած անձանց հասարակական քննությունից  
հետո<sup>4</sup>, ընդ որում կոչում տալը երաշխավորվել է անսլայման արդեն  
վարդապետի կոչում ունեցող երկու անձնավորությունների կողմից:

<sup>1</sup> Ստ. Կանայան, Ջոջանց տուն կամ Սասմայ ձուեր վեպիճերեք փո-  
փոխակ, Վաղարշապատ, 1910, էջ 28—30:

<sup>2</sup> Գ. Սրվանձտյան, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 84:

<sup>3</sup> Է. Բ. Ի. Կյան, Պատկերադարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վե-  
նետիկ, 1907, էջ 147—148:

<sup>4</sup> Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, Բ, էջ 197:

<sup>5</sup> Месроп Тер-Мовсисян, История перевода Библии, СПб, 1902, стр. 239. Այս աշխատությունը քննադատության ենթարկեց Մառը,  
որից և այստեղ օգտվում ենք (Н. Марр, Критика и мелкие статьи, 1903,  
стр. 34).

<sup>6</sup> Լ. Սաչիկյան, Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտա-  
կան ատենախոսությունները, Պետ. համալս. «Գիտ. աշխատ.», XXIII, էջ 423:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց վարդապետաց» գլխում՝ ասվում է «Յերկուց և յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թէև պատահի միոյ աշակերտիլ. և թէ զկամս եպիսկոպոսի և կամ ևս առաւել զհայրապետի ընդ իւրեանս առնուցուն, նաև զիշխանի, բարիոք ևս գործիցեն. ապա թէ ոչ՝ ըստ օրինացն յերկուց և յերիցն հաստատեսցի»:

Սակայն վարդապետը ոչ միայն գիտուն է և ուսուցանող. նա հեղինակավոր է իբրև դատավոր: Այստեղ ոչ ոք, անգամ կաթողիկոսը, չունի այն դերը, ինչ վարդապետը: Բնորոշ է այս տեսակետից Այգեկցու առակներից մեկը՝ «Թէ ով է իշխան դատել», ուր բացահայտ արտահայտված է վարդապետի ամենից բարձր դիրքը նաև այս բնագավառում: Բերենք առակի մեզ հետաքրքրող մասը միայն. «Եւ ըմբռնեցին զմէկ աշխարհակայն ի մեղս և բերին առ սարկաւակն. և սարկաւակն ասաց. թէ երէցն աստ է և քան զիս մեծ է և ունի իշխանութիւն. առ նայ տարէք. և տարին. և երէցն ասաց, թէ եպիսկոպոսն աստ է, առ նայ տարէք, և տարին, և եպիսկոպոսն ասաց, թէ կաթողիկոսն աստ է, առ նայ տարէք, և տարան և կարողիկոսն ասաց, վարդապետն աստ է. առ նայ տարէք, և տարան, և վարդապետն եղ կանոնս և արժանացուց ասաշխարութեամբ...»<sup>2</sup>:

Չափազանց հետաքրքրական է ն. Յա. Մառի այն կարծիքը, թէ «Мхитар Гош, автор сборника церковных и мирских законов, был вардапетом, и этого было достаточно, чтобы упрочить за его книгою значение официального судебного»<sup>3</sup>.

Այս կոչումն ու իրավունքները կրող մարդիկ՝ վարդապետները, սակայն, միմյանցից անկախ, անհատ գործիչներ չէին, այլ հատուկ դպրոցներ անցած կազմակերպված մի ամբողջության՝ միաբանության ներկայացուցիչներ: Սրանք վարդապետարաններում ուսած, երբեմն մի քանի վարդապետների աշակերտած, հանրահոշակ դպրոցներ անցած անձնավորություններ էին, որոնք իրենց հերթին նոր դպրոցների հիմնադիրներ էին դառնում<sup>4</sup>:

<sup>1</sup> Մ խ ի Թ ա Ր Գ ո շ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 88:

<sup>2</sup> Մ ա ո ն., Ժողովածոյք առակաց Վարդանայ, մ. Բ, ՄՊԲ, 1899, էջ 164—165:

<sup>3</sup> Н. М а р р, Критика и мелкие статьи, 1903, стр. 34.

<sup>4</sup> Հետուն չգնալու համար հիշենք թեկուզ Մխիթար Գոշին, որ արդեն վարդապետի անուն ստացած՝ զնաց կիլիկիա՝ կարմիր վանք, շէկրթությունը լրացնելու:

Մեծ վարդապետի հմտությունից և վայելած հռչակից մեծապես կախումն ունեն հարկավ աչն դպրոցի հռչակն ու գիրքը, որ նա ղեկավարում էր<sup>1</sup>: Վարդապետների ու վարդապետարանների հեղինակությունն է ապացուցում աչն փաստը, երբ պատմական որևէ դեպքի կամ իրադարձության ժամանակն ու թիվը ձեռագրերում որոշվում է աչս կամ աչն դպրոցի կամ ուսուցչապետի ժամանակով. ասենք թե «Ի դպրապետութեան մեծ հոետորին Եսայեայ»: Իհարկի, քիչ վարդապետներ են արժանացել աչդ պատվին, որոնց թվում ամենից ավելի Եսայի Նշեցին, գլաձորյան հռչակավոր համալսարանի ամենափայլուն դեմքերից մեկը:

Դժվար էր աչդ դպրոցների պահպանումը. հսկայական ծախսեր կային կապված սաների սննդի ու հագուստի, մազազաթի հայթայթման, մելանի, կազմի, ձեռագրեր ձեռք բերելու և մանր ու մեծ աչլ պարագաների հետ: Աչդ իսկ պատճառով, պատահական չէ, որ աչդ վարդապետարանները ստեղծվում էին հարուստ վանքերին կից և կամ հովանավորվում միջոցներ արամադրող իշխանների կողմից: Հատկապես ծանր էր վարդապետարանների վիճակը պատերազմների ժամանակ, երբ հալածական օտարներից ավերվում էին վանքերը, ոչնչացվում էր տարիների դառն աշխատանքը և վարդապետները ցիր ու ցան եղած, որը գերության մեջ անհայտանում, որը սպանվում, որը ապաստանած մի աչլ դպրոցի պատերի ներքո, գրի էր անցնում իրենց կյանքի դժբախտ հուշը... «Ի դառն և դժնեայ ժամանակիս, յորում խստագոյն տիրէր լուծ աչլասեռիցն...», — ավանդում են բազմաթիվ ձեռագրեր:

Աչս պատճառով հաճախ մեր միջնադարյան ուսուցիչները չէին ունենում իրենց մշտական բնակատեղին, հալածական շրջում էին վայրից վայր, գավառից գավառ: Վանականի աշակերտ Վարդան Արևելցու դպրոցը մի քանի տարվա ընթացքում փոխադրվում է Թեղենյաց վանք, Սաղմոսավանք, Հառիճի վանք, Աղջոց վանք:

Բայց այսպես թե այնպես, խաղաղ թե խառն ժամանակներում, աչդ վարդապետարանները հանդիսացան հայ ժողովրդի կուլտուրայի և հոգևոր արժեքների պահպանման կարևորագույն բջիջներից մեկը: Հայ ժողովրդի հոգևոր, գրավոր մշակույթը ձևավորվեց ու կուրվեց միջնադարյան աչդ դպրոցներում, այնտեղ զարգացավ

<sup>1</sup> Կարապետեպ., Մահմեդական լուծը և նրա բռնության ներքո ծաղկող հայ վարդապետարանները, Էջմիածին, 1913, էջ 10:

գրչութեան արվեստը, պատմագրութիւնը, սկզբում հոգևոր-եկեղեցական, ապա և աշխարհիկ բանաստեղծութիւնը. այնտեղ էին ուսումնասիրվում փիլիսոփայութիւն, տոմարագիտութիւն և այլ գիտութիւններ. այստեղ էին բախվում նաև գաղափարական հոսանքները՝ կրօնա-գավառաբանական սքեմ հագած:

Միջնադարյան բազմաթիւ վարդապետարանների մեջ փայլեց «Իրրև զարեգակն ի կորնթարթն վերին» Գլաձորի բարձր դպրոցը կամ համալսարանը, որի ծագման պատմութիւնը կապված է Պոռշ իշխանի անվան հետ: Նա հիմնվել է Պոռշ իշխանի օրոք, ոչ հեռու նրա «գարպասից» (Վայոց ձորում):

«Մայր իմաստից Գլաձոր», «հոշակաւոր սուրբ մենաստան համալսարան»<sup>1</sup>, «եւ Գալուձոր, ուր վարժարանն է սուրբ վարդապետացն մերոց»<sup>2</sup>, այսպես են որակում Գլաձորի վանքը ժամանակակից և հետագա հեղինակները: Իսկ Հակոբ Թադորցին գրում է. «Համարձակիմ զսա կոշիկ երկրորդ Աթէնք և մայրաքաղաք ամենայն իմաստից»<sup>3</sup>:

Առանց այս հիշատակութիւնների, Գլաձորի գիտական մակարդակը կարելի է շարիւղ նրա ներկայացուցիչներով:

Եսայի Նշեցի, որ աշակերտից ուսուցիչ դարձավ և ուսուցչապետ, Ստեփանոս Օրբելյան, Հոհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, որ մատենագրական հարուստ ժառանգութիւն թողնելուց բացի, եղավ Տաթևի դպրոցի հիմնադիրը, Մխիթար Սասնեցի՝ Մեծոփա դպրոցի հիմնադիրն ու մատենագիր, Տիրատուր վարդապետ՝ Հերմոնի դպրոցի հիմնադիրը և բազմաթիւ փիլիսոփաներ, մատենագիրներ, բանաստեղծներ, նկարիչներ ու գրիչներ: Գլաձորը դառնում է մի հոգևոր կենտրոն, որտեղ գիտութիւնների տարածումը սերտ կապակցվում է ժամանակի գաղափարական հարցերին: 13-րդ դարի վերջին երկու տասնամյակից սկսած մինչև ԺԴ դարի կեսերը հոգևոր, քաղաքական-կուլտուրական բնույթ կրող բոլոր երևույթները, մեծ կամ փոքր շարիւղ, կապված են Գլաձորի հետ:

Գլաձորի միջավայրի հետ է կապված նաև Խաչատուր վարդապետ Կեչառեցու անունը:

1 Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք, Բ, էջ 200—201:

2 Ձեռ. Մատ. 8076, էջ 83: Ա լ ի շ ա ն, Սիսական, էջ 130:

3 Ա լ ի շ ա ն, Սիսական, վեներիկ, 1893, էջ 133:





## Կ Յ Ա Ն Ք Ը

Խաչատուր վարդապետ Կեչառեցու անունը հաճախ է հանդիպում միջնադարյան ձեռագրերում, հատկապես դանձարաններում և տաղարաններում: Տարբեր առիթներով նրա անունը հիշված է և մատենագրության մեջ: Համարյա բացառապես, նա հիշվում է իբրև հեղինակ այսինչ կամ այնինչ գանձի կամ տաղի: Զեռագրերում պատահում են նրա անվան այլևայլ գործածությունները. «Խաչատուր Կեչառեցի», «Խաչատուր Կեչառացի», «Խաչատուր Կեչառվեցի»: Ծիշտ պետք է համարել «Կեչառվեցի» ձևը, ելնելով նրան պատկանող ձեռագիր մի ժողովածուից, որի էջերի վրա նա թողել է իր ձեռքի գրոշմը «Կ[ա]լ[ա]տ[ու]ր վ[ար]դ[ապետ] Կեչառվեցի ստացող ս[ուր]բ տառիս յաղաւթս յիշեալ»<sup>1</sup>:

Բայց շնայած իր սեփական գրություններում նա «Կեչառվեցի» է, գերադասում ենք պահպանել նրա անվան տարածված և ընդունված «Կեչառեցի» ձևը:

Խաչատուր Կեչառեցու կենսագրության հավաստի տվյալները սակավ են և աղքատիկ. ավելի ճիշտ՝ այդպիսիք համարյա թե չկան:

Ալեքսանդր Մակեդոնացու Պատմության Զաքարյան հիշատակարաններից ելնելով, Ղ. Ալիշանը Կեչառեցուն համարում է Պոռշյան տոհմից սերված, Հոռմում ուսած և Յսայի նշեցուն աշակերտած<sup>2</sup>: Հետագա բանասիրությունը<sup>3</sup> ապացուցել է այդ տվյալների

<sup>1</sup> ՀՄՍՌ Մատենագրարանի ձեռագիր, № 1879, էջ 16ա:

<sup>2</sup> Ա. Ալիշան, Այրարատ, էջ 268, Սիսական, էջ 134:

<sup>3</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրություններ Ստոյն Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 88—90, Ն. Ալիշանյան, Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց (սչանդէս ամսօրեայ), 1909, էջ 231, 279, 341), Գ. Հոսիսյան, Խաղբակյանք, Ա, էջ 45:

Զաքարիա Գնունյաց եպիսկոպոսին վերաբերելու փաստը: Ապացուցված է նաև, որ Եսայի վարդապետը չէ՛ Եսայի Նշեցին, այլ 15—16-րդ դդ. մի այլ վարդապետ Սպիտակավոր վանքից<sup>1</sup>, հետևաբար վերոհիշյալ տեղեկությունները ոչ մի կապ չունեն հաշատուր Կեչառեցու հետ և իբրև պարզ թյուրիմացություններ պետք է հանվեն նրա «կենսագրությունից»:

Զաքարիա Գնունյաց եպիսկոպոսի հիշատակարանից մի հարց է մնում միայն հաշատուր Կեչառեցու հետ կապված. դա այն է, որ Զաքարիան իրեն անվանում է հաշատուրի «շառավղից»՝ «Որք լսէք զաղիողորմ բարանութիւնս զյարմարող սորա զհաշատուր Կեչառեցիս և ի սոցին շառաւիղէ Զաքարիա զծողս և նկարողս Աղեքսանդր զրոց յիշել ի տէր». ապա և այն, որ Զաքարիան իր գիրքը նվիրաբերել է «պարոն եղբարցն իմոց և հարցն պառւշանց տոհմին», որից պարզ երևում է նրա Պոռշյանների տոհմից սերված լինելու հանգամանքը: Իսկ քանի որ Զաքարիան ինքը Պոռշյաններից է և իրեն էլ հայտարարում է հաշատուրի «շառավղից», ապա պարզ է, որ Պոռշյաններից է նաև հաշատուր Կեչառեցին:

Հավանական է, որ հաշատուրը եղել է Կեչառույք կամ Կեչառիսի<sup>2</sup> վանքի վարդապետներից մեկը, գուցե և ուսուցչապետը, որը և անվանել է իրեն վանքի անունով: Մեր գրականության մեջ քիչ չեն այդպիսի փաստերը, երբ վարդապետն անվանվում է տվյալ վանքում ուսած կամ վարդապետած լինելու պատճառով, հիշենք թեկուզ Գրիգոր Նարեկացուն, Ներսես Կլայեցուն, Գրիգոր Տաթևացուն, Հովհ. Ծործորեցուն և այլն:

Հաշատուր Կեչառեցու ծննդյան թվականը անհայտ է, բայց նրա կյանքի մի քանի թվերի հիման վրա կարելի է մոտավորապես որոշել այն: Հաշատուրի անվան հետ կապված մի քանի թիվ է մեզ հայտնի. առաջինն այն է, որ Ստ. Օրբելյանն իր էջմիածնի հայտնի ողբը<sup>3</sup> գրել է «ըստ խնդրոյ վարդապետին հաշատուր Կեչառեցու ի ՉԽԸ (=1299) թուիս մերոյ»: Այնուհետև մեր պատմագրությանը

1 Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք, Ա, էջ 243:

2 Վանքը դանվում է Նիզի և Վարածնունքի սահմանում՝ այժմ Ծաղկաձոր (Գարաշիշակ):

3 Ողբը և հառաչանք ի դիմաց մօրս մեր սրբոյ աթոռոյն էջմիածնի Տեառն Ստեփանոսի Սիւնեաց այցելուի, Թիֆլիս, 1885:

հայտնի է «արևելյան երկրի» իշխանների և վարդապետների հակա-  
ճառության թուղթն՝ ուղղված հոռմեադավան կաթողիկոս Գրիգոր  
Անավարդեցուն 1295 թվականին: Այդ թուղթը ստորագրող վարդա-  
պետների շարքում կա նաև Խաչատուր Կեչառեցու ստորագրու-  
թյունը:

Եթե նկատի ունենանք նաև այն, որ 1314—15 թվականի մի ձե-  
ռագրում գրիչ ծաղկողը խնդրում է ազդեցություն չի լինի նրա  
Խաչատուր Կեչառեցուն էլ, ապա անհավանական չի լինի նրա  
ծննդյան մոտավոր ժամանակը համարել 13-րդ դարի հիսունական  
թվականները, իսկ կյանքն ու գործունեությունն ընկած 13-րդ դարի  
վերջերին և 14-րդ դարի սկզբներին, ավելի ճշտված՝ 1260—1330-ա-  
կան թվականները, քիչ շուտ կամ ուշ:

Խաչատուր Կեչառեցու մահվան տարեթիվը համարվում է  
1330—31 թվականը: Այս թիվն են նշում և՛ Ա. Զորանյանը, և՛ Տի-  
րայր արքեպիսկոպոսը, ինչպես և Գ. Հովսեփյանը<sup>1</sup>: Կեչառեցու  
մահվան թվականի սկզբնաղբյուրները մեզ անհայտ են: Ենթադրում  
ենք, որ նշված հեղինակները հենվել են Հ. Պոտուրյանի մի հայտա-  
բարություն վրա, որի մատենագրական հիմքերը մեզ չհաջողվեց  
հայտնաբերել:

Խաչատուր Կեչառեցու կենսագրությունը վերաբերող վերջին  
տվյալները վերաբերում են նրա գերեզմանին: Մեր մատենագրու-  
թյան մեջ նրա գերեզմանը հիշվում է երկու տեղ. ըստ Հակոբ Կար-  
նեցու, այն գտնվում է ներքին Բասենում. «Իսկ ներքին Բասենն է  
պարոնանիստ և ունի դիւղաքաղաք զԽորասան աս ափն Երասխայ-  
և ունի բերթ Զիւին. և ունի ջերմնբուխ ջուր, որ բազում ցաւոց օգ-  
տակար է, Մեծըկերտ և Կէշէվան, և է ի մէջ բերդին գերեզման  
Խաչատուր Կեչեռեցուն: Եւ այլ բազում դիւղք ունի և մայրիք, որ  
գնացեալ հասանէ մինչև ի Կարս...»<sup>2</sup> և այլն:

Երկրորդ տեղեկությունը քաղում ենք Վարդանի Աշխարհացույ-  
ցից. այստեղ Խաչատուրը թաղված է համարվում Այրարատում.  
«Այրարատ ունի բազում գաւառս... անդ և գաւառն Գաբեղենից և  
քերզն Կապոյտ, որ կոչի Արտագէրէից. անդ է և Կեչրար քաղաքն»

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, Թագրահյանք, Բ, էջ 44:

<sup>2</sup> Մանր ժամանակագրություններ 13—18-րդ դդ., կազմեց Վ. Ա. Հա-  
կոբյան, 5. 2, էջ 556 (Հակոբ Կարնեցի, Տեղեկագիր Վերին հայոց):



Ծառաքարի վիմափոր վանքն, որ կայ գերեզման Կեչառեցի Խաչատուր վարդապետին»<sup>1</sup>:

Առաջին հայացքից անհամատեղելի են թվում այս տեղեկությունները, բայց խորամուխ լինելու դեպքում պարզ է դառնում հարցի էությունը: Խնդիրն այն է, որ Ներքին կամ Ստորին Բասենին հարևան է Գաբեղենից գավառը. երկուսն էլ Այրարատի գավառներն են: Հակոբ Կարնեցին Նրասխի ամիրն գտնելով Խորասանի, Մժընկերտի, Զիւին բերդի հետ հիշատակում է և Կեչեվանը, որ իրոք այդ վայրերից հեռու չէ, բայց գավառների ստորաբաժանմամբ մտնում է Գաբեղենից երկրի մեջ: Վարդան վարդապետի Պատմության ծանոթագրության մեջ Ալիշանը Կեչրորն ու Ծառաքարը դնում է Այրարատյան գավառում. «Ծառաքար վանք և Կեչրոր քաղաքաւան», յԱբեղեան գաւառի Այրարատայ, ի կողմանս Բասենոյ մերձ յՆրասխաձոր»<sup>2</sup>:

Ուրեմն այստեղ հարցը գավառի անվանման տարբերության մեջ է և ոչ թե Հակոբ Կարնեցու սխալ տեղեկության:

Ինչ վերաբերում է Կեչրոր և Կեչեվան անունների տարբերության, ապա այդ մասին Ալիշանը գրում է. «Կէչուան վիճակ և քաղաքաւանն է ի գլուխս Պայամ գետակի. թուրք կոչեն Կէչէվան և յայտնի ածանցեալ ի Կէչ անուանէ, և այսպէս սոսկ Կէչ կոչեն զտեղին ոմանք ի մերոցս աշխարհագրաց յԺԸ դարու. և թէ ոչ այսպէս ի հնումն, այլ յաւելուածոյ իմն անսովոր մասնկամբ լսի Կէչրոր կամ Կէչրօր»<sup>3</sup>:

Նշանակում է միաձայն են տեղեկություններն այն մասին, որ Խաչատուր Կեչառեցու գերեզմանը գտնվում է Արարատյան Գաբեղենից գավառի Կեչրոր կամ Կեչեվան քաղաքավանի Ծառաքարի վիմափոր տաճարում, որ Կարնեցու մոտ հիշվում է իբրև բերդ, իսկ Վարդանի մոտ իբրև վանք:

Եթե կասկածելի համարենք մեր մատենագրության մեջ մնացած այս տվյալների ստուգությունը, ապա պետք է ենթադրենք, որ այս մի ավանդություն է՝ ժողովրդական ստուգաբանության հյուսված Կեչրոր և Կեչառեցի անունների նմանության վրա:

<sup>1</sup> Չեռագիր № 8076, էջ 485:

<sup>2</sup> Վարդանայ վարդապետի հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 131:

<sup>3</sup> Ղ. Ա. Ալիշան, Այրարատ, 1890, էջ 47:

Խաչատուր Կեչառեցու հոգևոր սննդի և կրթության մասին տեղեկությունները նույնպես սուղ են, բայց, այնուամենայնիվ, որոշ հնարավորություն տալիս են մոտավոր դադարաբար կազմելու նրա անձնավորության և կյանքի մասին:

Խաչատուր Կեչառեցին մեր բանասիրության մեջ երբեմն նույնացվել է Խաչատուր Տարոնացու հետ<sup>1</sup>, իսկ երբեմն էլ դիտվել իրրև Ֆրիկ գրական կեղծանվան հեղինակ<sup>2</sup>: Իբր Ֆրիկ եղել է Խաչատուր Կեչառեցու գրական անունը:

Տեսնենք, թե որքան իրավացի են այսպես կարծողները, թե մեկ և թե մյուս դեպքում:

Խաչատուր Կեչառեցուն և Տարոնացուն միմյանց հետ խառնելը գալիս է դեռևս մեր ձեռագրերից. սա ծագում է երկու գանձասացների նույնանունությունից և երկու հայտնի վարդապետների կենսագրության առանձին գրվածքների նմանությունից:

Հարցն այն է, որ միջնագարում ստեղծված սովորությամբ շարականների, գանձարանների, տաղերի, մեղեդիների հեղինակները գրում էին այնպես, որ ոտանավորի տողերի կամ տների սկզբնատառերը, կամ թե, վերջնատառերը հոգեին իրենց անունը (ակրոստիք). ասենք թե. «Ի տրուպ Յովհաննիս է ասացեալ է տաղս», «Ի Ներսիս է երգս», կամ ուղղակի «Գրիգոր», «Մկրտիչ», «Խաչատուր» և այլն:

Ակրոստիք պատահում է նաև արձակ գործերում, այսպես օրինակ՝ Կ. Գանձակեցու Պատմության նախաբանության պարբերությունների սկզբնատառերը հոգում են «Կիրակոս»: Սա շատ տարածված է միջնագարում և հատկապես, ինչպես ասացինք, գանձարան-

<sup>1</sup> Հ. Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն ց, Ստորագրութիւն Կաթուղիէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 122:

Ռ. Բ. Ե Ր Ղ Ն Կ յ ա ն ց, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ, Վարդաշապատ, 1886, էջ 73—74:

Ս. Ջ ա լ ա լ յ ա ն ց, Ծանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Տըփսիս, 1842, էջ 121—122:

Ս. Տ և կ ա ն ց, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ Ժ:

Հայ հին և միջին դարերի գրականության բիբլիոգրաֆիա, կազմեց Հ. Պետրոսյան, 1941, էջ 149:

<sup>2</sup> Տե՛ս այս աշխատության 25—28 էջերը:

ներում: Հենց այս դանձարաններից էլ ծագել է և Խաչատուրների շփոթութիւնը:

Գանձարանների բոլոր խմբագրութիւններում կան Խաչատուր հողող բազմաթիւ գանձեր: Այս գանձերը գրված են վանազան տոնների առթիւ՝ եկեղեցիներում կարդալու կամ երգելու համար: Իսկ քանի որ տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակներ գանձեր են գրել նույն տոների առթիւ, ավետարանական և պատմական նույն դեպքի կամ անձնավորութիւնների մասին, այդ պատճառով էլ դրանք շատ նման են մեկը մյուսին, և շափազանց դժուար է նրանց զանազանելը հեղինակի ոճական առանձնահատկութիւններից ելնելով, մանավանդ, որ ոճական տեսակետից էլ հեղինակներն ազատ չէին ընդունված և ընդհանրացած պատկերներից ու արտահայտութիւններից:

Ինչպես տեսնում ենք, քիչ շեն նույնանուն հեղինակներին շփոթելու պատճառները:

Այսպես շփոթվել են և Խաչատուր Կեչառեցու և Տարոնացու ստեղծագործութիւնները, որի հետևանքով և շփոթութիւն է առաջացել նաև նրանց անձնավորութիւնների հարցում:

Ձեռագրերի այս շփոթութեան բացահայտմանն անդրադարձել է ժամանակին Հ. Չամչյանը, որն առանձնացրել է Խաչատուրներին, ստեղծագործական առավելութիւն, սակայն, տալով Տարոնացուն՝<sup>1</sup> Երկու Խաչատուրների առանձնացումը հաստատվում է հետևյալ մի քանի փաստերով.

1. Խաչատուր Տարոնացին հիշվում է Կիրակոս Գանձակեցու Պատմութեան մեջ: Մանրամասնութիւնների մեջ շմտնելու համար, բավականանանք ասելով, որ Տարոնացուն Գանձակեցին ներկայացնում է իբրև Մխիթար Գոշի ժամանակակից մի անձնավորութիւն, նրա մտերիմ բարեկամներից մեկն ու գաղափարական գործակիցը: Գետիկ վանքի շինութիւնը նկարագրելիս Գանձակեցին հետևյալն է պատմում<sup>2</sup>. «Սկսաւ այնուհետև վարդապետն սքանչելի (խոսքը Գոշի մասին է — Մ. Ա.)... ձեռն ի գործ արկանել շինութեան վանիցն եկեղեցոյ... և շինեցին եկեղեցի մի գեղեց-

<sup>1</sup> Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1876, էջ 96, 121, 181:

<sup>2</sup> Գանձակեցի, Պատմութիւն, էջ 199:

կաշէն փայտակերտ, և օծեալ կնքեցաւ յանուն սուրբ Լուսաւորչին: Էր ի տօնախմբութեան եկեղեցոյն և սուրբ վարդապետն Խաչատուր Տարօնացի, առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Հաղարծին, այր սուրբ և առաքինի, և գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժըշտական արուեստիւ...»<sup>1</sup>:

«Սա պայծառացոյց զսուրբ ուխտն՝ որում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալն նորա՝ ամայի էր և խամբացեալ: Զսա պատուէր մեծապէս թագաւորն վրաց Գրիորգի, հայր թամարին...»<sup>2</sup> և այլն:

Այնուհետև Տարօնացու անունը հանդիպում է մեզ Հաղբատի և Սանահնի մի խումբ վարդապետների շարքում, որոնք թուղթ են ուղարկում Գրիգորիս (փոքր վկայասեր) կաթողիկոսին<sup>3</sup>. «Բասիլ եպիսկոպոս որ յարևելս հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր Սանահնի և Հայր Յօհաննէս, վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատոյ՝ Իդնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ, Խաչատուր վարդապետ Հաղարծնի, Մխիթար վարդապետ Խոռակերտոյ և միւս Մխիթար վարդապետ Գետկոյ և այլ աշակերտք ամենեքեան սրբոց կտակարանաց աստուծոյ երկիրպագանեմք որպէս ի մօտոյ սուրբ աթոռոյդ...»:

Ինչպես տեսնում ենք, Խաչատուրը երկու դեպքում էլ հիշվում է որպես Հաղարծնի վարդապետ կամ առաջնորդ և երկու դեպքում էլ նրա անունը կապված է Մխիթար Գոշի հետ:

Միանգամայն պարզ է, որ Գրիգոր փոքր վկայասերի, Մխիթար Գոշի (մհ. 1213), վրաց Գրիորգի թագավորի (մհ. 1184) ժամանակակիցը չէր կարող ժամանակակից լինել նաև Գրիգոր Անավարդեցուն (մհ. 1307), Ստեփանոս Օրբելյանին (մհ. 1303): Այս երկուսին բաժանում է ամենաքիչը մեկ դար ժամանակ:

Սրանով միանգամայն պարզ է դառնում Խաչատուր Տարօնացու և Խաչատուր Կեչառեցու տարբեր անձնավորություններ լինելու փաստը, բայց դեռ մնում է նրանց ստեղծագործությունները միմյանցից զատելու բարդ խնդիրը:

<sup>1</sup> Ասենք, ի միջի այլոց, որ այս բառերը Հայ հին և միջին դարերի զրահանության բերլիոգրաֆիայում վերագրված են Խաչատուր Կեչառեցուն:

<sup>2</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 99:

<sup>3</sup> Թուղթ վարդապետացն հայոց հիւսիսային կողմանցն որ ի Հաղբատ և ի Սանահն առ պատուական կաթողիկոս Տէր Գրիգորիս:

Մեր բանասիրութեանը հետաքրքրել է նաև Ֆրիկ-Կեչառեցի հանգուլցը: Բանասերների մի խումբ նույնացրել են Ֆրիկին Կեչառեցու հետ, համարելով սրանց միևնույն անձնավորութունը, ավելի ճիշտ՝ Ֆրիկ համարվել է հաշատուր Կեչառեցու գրական կեղծանունը:

Բանասիրութեան այս կարծիքին նպաստել է ձեռագրերից եկող շփոթությունը: Զեռագրերում պատահում են դեպքեր (ձեռ. 2939, էջ 226), երբ ոտանավորը վերնագրված է անորոշ. «Խրատ ոգեշահ հաշատուր Կեչառեցոյ ասացեալ կամ Ֆրրրկի»: Ի՞նչպես հասկանալ այս: Մի դեպքում այս նշանակում է հաշատուրի հենց Ֆրիկ լինելը, մյուս դեպքում, ընդհակառակը, հակադրում է նրանց: Բացի այս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմության մեջ մի շարք կաֆաներ ձեռագրերում վերագրվում են և՛ Ֆրիկին, և՛ Կեչառեցուն:

Ֆրիկի և Կեչառեցու նույնութեան մասին առաջին գրավոր ենթադրությունն արտահայտված է 1876 թ. Երուսաղեմի «Սիոն» ամսագրում: Այնտեղ տպագրված է Ֆրիկի «Վասն Թալեհի և Պրճի» ոտանավորը, որի վերջին քառյակում հիշվում է Սերաստացու անունը. «Մեղապարտ Սերաստացույս լեր յաւուրն յեանում ողորմած...»:

Այս առթիվ արված է (չգիտես ում կողմից) հետևյալ ծանոթագրությունը. «Սոյն ռամկական ոտանաւորն, որ օրինակուած է Ս. Աթոռոյս թանգարանի գրչագիրներէն, քանի մի ձեռագրաց մէջ կը գտնուի, և ոմանց մէջ վերջին շորս տողերն կը պակասին, որ թերևս օրինակողի անուն և հաւելուած լինի, քան թէ հեղինակի: Իսկ Ֆրիկ (ընդգծումը՝ Սիոնի) անուն, յայտնի է թէ բանաստեղծական անուն է, և հատկապէս կը կարծուի, որ կամ Յով. Պլուզ վարդապետինն է կամ հաշատուր Կեչառեցոյն»: Թե որտեղից է հայտնի և որտեղից է վերցված Ֆրիկի բանաստեղծական անվան դադափարը մեզ համար անհայտ է:

Այնուհետև.

«Հայ էջեր»-ի հեղինակը, իր ժողովածուի մեջ տեղ տալով Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծությանը, ծանոթագրության մեջ ասում է. «Այդ դորժը որ միջնագարչան խրատական բանաստեղծութեան մեջ առաջնակարգ տեղերեն մին կը բռնե, արժանի է ամբողջապես հրատարակվելու և ուսումնասիրվելու: Հեղինակին անձն ալ կարոտ է ուսումնասիրվելու. «Ֆրիկ» կեղծանուն մըն է, ի՞նչ էր իր բուն

անունը, և՛րբ և ու՛ր ապրած է շինք դիտեր դեռ: Հ. Պոտուրյան ասե՛նով ինձ գրած է թէ «Ֆրիկը» Խաչատուր Կեչառեցվոյն կեղծա-  
նունը կկարծես ինք. ասիկա վարկած մըն է, որ չէ ապացուցված  
դեռ. պետք է լուծել այդ հանելուկը»<sup>1</sup>:

Չոսպանյանը նույն կարծիքն է պաշտպանում նաև իր  
«Les trouveres Armeniens» աշխատության մեջ (էջ 121), վկա-  
յակոչելով դարձյալ Պոտուրյանին. ֆրանսերեն այս ժողովածուի  
մեջ զեռեղված է Ֆրիկի «Գանգատը», որին կցված է հետևյալ ծա-  
նոթագրությունը, որ բերում ենք թարգմանաբար. «Ֆրիկը» կեղծա-  
նունն է, ըստ Հ. Պոտուրյանի, վարդապետ Խաչատուր Կեչառեցու,  
որ ծնվել է 13-րդ դարի 2-րդ կեսում և մեռել մոտ 1330 թվերին Կեչա-  
ռուիում (Այրարատում). նա թողել է բավական քանակությամբ դի-  
ղակտիկ և միստիկ պոեմներ, գրված հայ կլասիկ և ռամիկ լեզու-  
ներով. մասնակցել է նաև Կալիսթենեսի Աղեքսանդրի Պատմության  
թարգմանության խմբագրությանը, միաժամանակ գրել է բովան-  
դակության համապատասխան ոտանավորներ»:

Երկու դեպքում էլ Չոսպանյանի հիմքը Պոտուրյանն է:

Հավանաբար այս նույն աղբյուրն է նկատի ունեցել Վալերի  
Բրյուսովը, երբ իր «Поэзия Армении и ее единство на протя-  
жении веков» աշխատության մեջ գրում է. «Кто именно был  
Фрик, пока не выяснено. Есть мнение отождествляющее его со  
священником по имени Хачатур Кечареци, который жил в ту  
же эпоху и так же писал стихи»<sup>2</sup>.

Այնուհետև նա ասում է, որ այդ կարծիքն արդեն հնացած է և  
չի ընդունվում:

Ինչպես ցույց են տալիս վերը բերված հատվածները, Կեչառե-  
ցի-Ֆրիկ տեսակետն առաջադրողները հեռու չեն գնում: Նրանք են-  
թադրում են կամ կրկնում ու մեջ են բերում ուրիշի կարծիքները,  
սակայն որևէ փորձ չեն անում հաստատելու և հիմնավորելու իրենց  
ենթադրությունը: Այս տեսակետից միակ հեղինակավորն, ըստ  
երևույթին, Հ. Պոտուրյանն է, որի կարծիքը, դժբախտաբար, փաս-  
տերով չի հիմնավորված, այլ ներկայացվում է իբրև սոսկ ենթա-  
դրություն:

1906 թ. «Բազմավեպ»-ում նա գրում է. «Համոզիչ պատճառներ

<sup>1</sup> Ա. Չոսպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 199:

<sup>2</sup> В. Брюсов, Поэзия Армении, Москва, 1916, стр. 49.

ունիմ, որոնցմով ուրիշ անգամ պիտի ցուցնեմ, թե Ֆրիկը (ընդ. Պոտ.) Խաչատուր Կեչառեցոյ կեղծ անունն է»<sup>1</sup>: Դժբախտաբար Պոտուրյանն այլևս այս հարցին իր աշխատութիւններում չի անդրադառնում:

Եվ շնայած բանասիրութեան մեջ բավական հետևողականորեն զարգացած այս տեսակետին, փաստերը շէն հաստատում այդ<sup>2</sup>:

Խաչատուր Կեչառեցին Ֆրիկը չէ:

Տիրայր արքեպիսկոպոս Մուշկամբարյանը 1918 թ. Ֆրիկին նվիրված իր հոդվածում<sup>3</sup>, իսկ այնուհետև մեծարժեք «Ֆրիկ-Դիւան» աշխատութեան մեջ հանդամանորեն անդրադառնում է այս խնդրին և վերջնական լուծում տալիս այս հարցին: Նպատակահարմար ենք դնում շարադրել Տիրայր արքեպիսկոպոսի մտքերը, այլ մեջ բերել նրա արխիվից հանած այս հարցի առթիվ կազմած կոնսպեկտնշումը, որ նա անփոփոխ մանրամասնել է հետո իր աշխատութեան մեջ:

«Ֆրիկը չէր կարող Խաչատուր Կեչառեցու (+1330) կեղծ անունը լինել, ինչպես ենթադրում է Հ. Պոտուրյանը (Les trouveres Armeniens, p. 121, Ars. Thb.), թեև նույն դարու և շրջանի մարդիկ, որովհետև Ֆրիկի տողերի մեջ յուր մասին իսկ սպրտած մի քանի կենսագրական տեղեկութիւններից պարզ երևում է, որ նախ նա վանական չէր, երկրորդ անգրագետ մեկն էր, այնինչ Կեչառեցին և վանական է, և նույնիսկ վարդապետ տիտղոսով և գրագետ. յուր ժամանակի հայտնի գրական անձն...»<sup>4</sup>:

Այս նույն եզրակացութեամբ է նա ամփոփում իր Ֆրիկի կենսագրական հատվածը «Դիւան»-ում. «Նա (Ֆրիկը) աշխարհական

<sup>1</sup> Բաղմալէպ, 1906, № 8, էջ 348:

<sup>2</sup> Ֆրիկ-Կեչառեցի նույնութեան վարկածին «լուծում» տալու նպատակով 20-րդ դարում մի կեղծ վկայութիւն է հորինվել իբրև ահանախեցիկոյմից, որը տեսել է Ֆրիկի գերեզմանաքարը: Այդ տապանագրում նույնացված է Ֆրեֆուկը Խաչատուր Կեչառեցու հետ: «Փաստաթուղթը» դրսևում է Տիրայր արքեպիսկոպոսի արխիվում (անհատական արխիվներ, Տիրայր արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 131, վավ. 6): Ինչպես հայտնի է, Տիրայր արքեպիսկոպոսն անհրաժեշտ չի համարել իր մեծարժեք ու մեծածավալ աշխատութեան մեջ գեթ նշելու այսպիսի փաստաթղթի դոյութիւնը: «Փաստաթղթի» շինծուութիւնն ու ստորագրողի անունը նրան վստահութիւն չեն ներշնչել այն իբրև իրականութիւն ընդունելու և ներկայացնելու:

<sup>3</sup> Արարատ, «Մուսգոված մի հայ երգիչ», 1918, էջ 64, 171:

<sup>4</sup> ՀՍՍԻ Մատենադարանի արխիվ, թղթ. 131, փաստ. 5:

է, առանց որևէ ուսման ու դպրոցական դիտութեան, օժտված բնական տաղանդով ու ձիրքով...»<sup>1</sup>, իսկ մի ծանոթագրութեան մեջ նա բացահայտ գրում է. «Թե Ֆրիկը կարդալ իսկ չը գիտեր, այդ պարագան մեզ դարմանք պիտի չը պատճառե»<sup>2</sup>:

Մենք բաժանում ենք Տիրայր արքեպիսկոպոսի կարծիքը՝ այն, որ Ֆրիկը չէր կարող խաշատուր Կեչառեցու կեղծ անունը լինել: Բայց այս եզրակացութեանը հանդում ենք նաև այլ փաստարկներով:

Նախ մեզ համար ընդունելի չէ նրանց նույն ժամանակում ապրելու հանգամանքը, նրանց նույնացնելու առումով: Իհարկե, երկուսն էլ 13—14-րդ դարերի գրական դեմքերն են, բայց նրանց ապրելու ժամանակի մեջ կա որոշակի տարբերություն: Ֆրիկի ստեղծագործություններից հանված տվյալների համաձայն 13-րդ դարի վերջում նա արդեն կատարյալ զառամյալ ծերունի է և հազիվ թե կարողանար գրանից հետո դեռ մի 30, եթե ոչ ավելի, տարի էլ ապրել՝ մինչև 1330, իսկ ըստ Պոստուրյանի 1331 թվականը, որ խաշատուր Կեչառեցու մահվան թվականն է և որը, ըստ վերը բերած մի քանի փաստերի, ծնված պետք է լինի 1250—60-ական թվականներից ոչ շուտ և 1286 կամ 1295 թվականներին չէր կարող իրեն «ալեվոր» անվանել կամ հայտարարել, թե «մաղերը դեղին են դարձել», որ ուշ ծերութեան հասկանիչ է: Իրոք, թե Ֆրիկը և թե Կեչառեցին նույն դարու և շրջանի մարդիկ են, բայց նրանց մեջ պիտի տեսնել մոտ մի սերնդի տարբերություն: Ֆրիկն արդեն զառամյալ է, մինչդեռ խաշատուրը ապրում է իր գործունեության ամենաեռուն շրջանը:

Երկրորդ, հաստատելով Տիրայրի կարծիքը, որ խաշատուր Կեչառեցին Ֆրիկը չէ, միանգամայն ժխտում ենք իբրև ապացույց բերվող Ֆրիկի անգրագետ լինելու վարկածը, բավականաչափ հիմքեր ունենալով, որոնց մեծ և հիմնական մասն արդեն օգտագործված և բերված է բանասերների կողմից (Մ. Աբեղյան, Գ. Հովսեփյան, Մ. Մկրչյան, Աշ. Հովհաննիսյան): Չկրկնելով մյուսների կողմից բերված հավաստի փաստերը, ավելորդ չենք համարում անել մի երկու դիտում, որոնք արժանի են ուշագրութեան այս տեսակետից: «Այլ բանք Ֆրիկանն ասացեալ» (Գեղեցիկ պատկերք ու հեր...) ոտանավորում ասվում է.

<sup>1</sup> Տիրայր արքեպիսկոպոս, Ֆրիկ-Դիւան, Նյու-Յորք, 1952, էջ 36:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 18:



Ձաշ քո հրգօր դիր պահապան  
Կարդացողացս, և լսողիս<sup>1</sup>,

նշանակում է նրան կարդում են:  
Մի այլ տեղ՝

Աստուած օրհնէ զայն կարդացողն,  
Որ իմ խրատն առ ինքն մընայ...<sup>2</sup>

Կամ խոսելով աշխարհի ունայնության մասին, եզրակացնում է.

Աշխարհս ամէն սուտ կու դատին,  
Ես վտել եմ հանց քէմիայ  
Ոսկի արծաթըն զայն շարժէ,  
Ինձ յիշատակ այս կու մընայ:

Ինչը կարող է Ֆրիկին հիշատակ մնալ, եթե ոչ այն գրվածքները՝ բանաստեղծությունները, որ պիտի կարդացվեին և հենց սրա համար էլ նա դաժանությամբ սաստում է հետնորդներին, որոնք կփորձեն մոռացության մատնել հեղինակին:

Ով զիմ անունըս խափանէ  
Զիւրն գրէ պարծենալոյ,  
Աստէնս շաննէ ինքն թողութիւն,  
Անդէնն զըրկի ինքն ի լուսոյ<sup>3</sup>:

Ավելի ցայտուն է նրա հետևյալ արտահայտությունները.

Անալի դարձել եմ ի միտս ու անհամ  
Ոչ առնում ըզգրոցս ճաշակ և ըզհամ<sup>4</sup>:

Ծիծաղելի կլիներ ենթադրել, թե նա գրքերից ճաշակ ու համ առել է ուրիշների կարդալով: Այսքանից հետո առարկությունները,

1 Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 38:

2 Նույն տեղում, էջ 49:

3 Նույն տեղում, էջ 104:

4 Նույն տեղում, էջ 206:

թվում է, կլինեն ավելորդ և բռնազբոսիկ: Բոլոր փաստերն ասում են, որ Ֆրիկն անդրադետ չի եղել: Ընդհակառակը. Ֆրիկը լավ տեղյակ է աստվածաշնչին, ավետարանին, շոշափում է դավանաբանական հարցեր, դորժ է ածում եկեղեցական ընդհանուր ոճեր, նրա ստեղծագործությունները նույնիսկ տեղիք են ավել նրան համարելու ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը<sup>1</sup>:

Այնուհետև.

Բացի դադափարական-արմատական տարբերություններից, որ ակներախ է երկու ստեղծագործողների երկերում, կան նաև աշխարհագրական-քաղաքական իրադրությունների տարբեր միջավայրերի արտացոլում նրանցից ամեն մեկի ստեղծագործությունում: Միանգամայն ճիշտ է գիտված, որ Ֆրիկի ստեղծագործության մեջ արտացոլված է մոնղոլական արշավանքներին խիստ ենթակա այն շրջանները, որոնք ավերածությունների, ավարի ու թալանի են ենթարկվել հրոսակախմբերի կողմից. մասասշինների գործունեության բուն կենտրոնի, հարկատվական ծանր սիստեմի արտացոլումը կա Ֆրիկի բանաստեղծություններում<sup>2</sup>: Օտար ու սեփական շահագործման հակասությունների հանդուցակետում է ապրել Ֆրիկը և այդ քաղաքական, հասարակական բախումների ու հակասությունների արտացոլումն է նրա հանձարեղ «Գանդատը»՝ անհաշտ ու խիզախ բողոքը տիրող իրականության նկատմամբ: Ճիշտ է Ֆրիկի ստեղծագործությունում էլ կա օտար նվաճողների կամայականությունների տակ կքած հայ ժողովրդի վիճակի ծանր նկարագրությունը և իր ցասումը նաև ազգային հալածանքների դեմ.

Որքա՞ն տանջեն զմեզ յաշխարհի

եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի.

եւ դու՛ ներես յամենայնի,

ի անտես առնես զմեզ ի վըշտի.

Գիտե՞ս մարմին եմք մըսեղի,

Գէմ արձան շեմք ինչ սլըղնձի.

Եղեզըն շեմք, կամ խոտ վայրի,

<sup>1</sup> Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք, Բ, էջ 200:

<sup>2</sup> Ս. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Ֆրիկը ուսումնաքննական լույսի տակ, Երևան, 1955, 113—116:

Որ խանձ արկեալ նս կըրակի.  
Քան զանդաստան փըշաբերի,  
Կամ մացառաց ինչ պըրակի<sup>1</sup>.

Սակայն Ֆրիկի ստեղծագործութիւններում այդ չի վերածվում քաղաքական տենչանքի: Նա աշխարհում արդարութիւնն ու հավասարութիւնն հաստատելու ելքը չի փնտրում սոսկ օտար նվաճողներից երկիրն ազատելու մեջ. նա ֆեոդալական միջնադարին, հասարակական տիրող օրենքներին անհաշտ մի քաջամարտիկ է, որը խիղախում է դատաստանի նստել ժամանակի հայացքով այդ կարգերի ստեղծողի հետ, և աներեսպաշտ ու անկեղծ զրույցով բացել իր հոգու անլուծելի ողբերգութիւնը, ճշմարտութեան հասնելու իր անկարողութեան ողբերգութիւնը:

Ո՞րն էր նրա ողբերգութիւնը. անվերջ և անընդհատ անհավասարութիւնը. ո՞րն է ելքը նրա համար, ինքն էլ չգիտէ, բայց իր դժգոհութեան անդրադարձ կողմից բացահայտվում է նրա երազանքը — տեսնել մարդկային մի արդար հասարակութիւն առանց «պապանց պարոնորդու» և առանց «հարանց» մուրացիկների, առանց այլասեռից, մի այնպիսի վիճակ, որ մարդ էակը դժբախտ չզգա իրեն ոչ բնութեան, ոչ հասարակութեան անհավասարակշռութիւնից: Արդար և հավասար կյանքի տենչանքն էր արտահայտված Ֆրիկի ստեղծագործութիւններում, և այդ մի տենչանք էր, որ արտացոլում էր բոլոր ժամանակների կեղեքվող ու շահագործվող մարդու սրբազան իդեալը:

Ֆրիկի ողբերգութիւնը կրկնապատկվում էր նրանով, որ հակասութիւն կար ոչ միայն նրա վսեմ երազանքների և բիրտ ու դաժան իրականութեան մեջ, այլև նրանով, որ նա հավատում էր աստծու արդարութեանը և երկյուղածորեն երկբայում, թե մի գուցե իր պահանջած արդարութիւնն ու հավասարութիւնը տարբեր է արարչագործի արդարութիւնից: Այդ է պատճառը, որ Ֆրիկի ստեղծագործութիւնը միջնադարյան ու պատմական լինելով հանդերձ, վեր է իր ժամանակից. այն պատկանում է բոլոր ժամանակների մտածող ու տառապող այն մարդկանց, որոնց իդեալն է եղել մարդկութեան՝ ազգութիւնների և դավանութիւնների, դասերի ու դասակարգերի իրավահավասարութիւնը:

<sup>1</sup> Ֆրիկ, Բանաստեղծութիւններ, էջ 234:

Խաչատուր Կեչառեցու ստեղծագործությունը միանգամայն այլ ուղղություն ու բովանդակություն ունի. այն կապված է օտար բռնակալական լծից երկիրն ազատագրելու քաղաքական տենչանքների հետ<sup>1</sup>: Կեչառեցու ստեղծագործություններում արտացոլում է գտել Հայաստանի՝ մոնղոլական տիրապետությունից համեմատաբար զերծ մնացած կյանքի պատկերը: Այն արտահայտում է Սյունիքի և Վայոց ձորի ֆեոդալական տների, հատկապես Պոռշյան իշխանական տան նկրտումները երկիրը մոնղոլական տիրապետությունից ազատագրելու և սեփական անկախություն ստեղծելու մասին: «Ողբ վասն աւերման տանս արևելեան» հայրենասիրական ողբում նա վերհիշում է Պոռշ, էլիկում, Մկզեմ, Պապակ զորավար իշխանների օրոք Հայաստանի օրոշ շրջանների համեմատաբար բարեկեցիկ վիճակը և հակադրում նրանց իր ժամանակի հայ տկար և անգործունյա իշխողներին: Այստեղ արտահայտվում է նրա ստեղծագործությունների գաղափարական տարբերությունը Ֆրիկից և ուրույն սոցիալ-քաղաքական միջավայրը:

Բացի այդ, միանգամայն տարբեր են Ֆրիկի և Կեչառեցու ստեղծագործական հնարանքները: Կեչառեցին բանաստեղծությունը սեղմում է, հասցնելով այն ամենափոքր շափերի: Նրա բանաստեղծությունները մեծ մասամբ իր եզրահանգումներն են աշխարհի ունայնության, վաղանցիկության, հոգու և մարմնի և այլ հարցերի մասին, նա կոնկրետ է, ամեն մի բանաստեղծություն մի հույզի դրսևորումն է փաստորեն. այնինչ Ֆրիկը հորդ է, հախուռն, նա չի կաշկանդում իր միտքն ու երևակայությունը, գրում է այն, ինչ այդ վայրկյանին հուզում է նրան: Մի միտքը աղբյուր է դառնում մի ուրիշի, և այսպես ինքնաշարժ աճում է նրա բանաստեղծությունը: Ամենևին պատահական չպետք է համարել, որ Ֆրիկի կենսագրության մասին եղած բոլոր փաստերը հանված են իր իսկ ստեղծագործություններից: Սրանց մի մասը հիմնական մտքից արված շեղումների արգասիք են:

Եվ չնայած այս տարբերություններին, նրանց բանաստեղծությունները իրօք նման են թվում. պատճառն այն է, որ նրանք ապրում են պատմական միևնույն ժամանակաշրջանում, նրանց հու-

<sup>1</sup> Ա. Շ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Գրվազներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, էջ 328—329:

զում են միևնույն հարցերը, գրում են հաճախ միևնույն հարցերի մասին, մեծ մասամբ միևնույն տաղաչափությամբ և միջին հայերենով:

Սակայն այս վերջին հանգամանքը՝ միջին հայերենի գործածությունը, որքան էլ նրանց նմանություն պատճառներից մեկն է, տարբեր է երկուսի մոտ: Այն ոճերն ու դարձվածքները, նաև օտար բառերը, որ Տիրայր արքեպիսկոպոսն առանձնացրել է իբրև «Յրիկի ոճեր ու դարձվածքներ», շնչին շարժվում են տարածվում Կեչառեցու ստեղծագործությունների վրա. հիշենք թեկուզ լսենալ—լսել, սիրենալ—սիրել, յիշենալ—յիշել, երևնալ—երևալ, շահեալ—շահել, վառինալ—վառել, մյուս կողմից՝ հրամել—փոխ՝ հրամայել, մօտիլ—մոտենալ, յիմարել—յիմարանալ, արեր—արարել, հարըստել—հարստանալ բայակազմության առանձնահատուկ ձևերը կամ ածականների, մակբայների ակ մասնիկով՝ թերակ—թերի, միակամակ—միակամ, զոհակ—զոհաբերող, հզորակ—հզոր, քննակ—քննող կազմելը և այլն:

Այդ ոճերի և դարձվածքների այն մասը, որ կարելի է տարածել Կեչառեցու ստեղծագործության վրա, համարյա ընդհանուր է մեր միջնագարյան բոլոր գրողների համար:

Ավելորդ չենք համարում անել մի դիտողություն ևս. որքան էլ միջին հայերենը համարվում է մի լեզու, որ միջին տեղն է գրավում գրարարի և աշխարհարարի միջև, որքան էլ նա դիտվում է իբրև միջին դարերի գրականության միասնական լեզու, նրա մեջ այնուամենայնիվ պետք է տեսնել երկու տարբեր ուղղություն. մեկն ավելի մոտ գրարարին, մյուսն, ընդհակառակը, հեռու գրարարից և մոտ ավելի աշխարհարարին: Կեչառեցու և Յրիկի լեզուների մեջ պետք է տեսնել այս տարբերությունը: Յրիկն ավելի հարուստ է ժողովրդական բարբառային արտահայտություններով՝ բառերով ու դարձվածքներով, քան Կեչառեցին: Վերջինիս բանաստեղծություններում չես հանդիպի Յրիկի գործածած «մտվի», «ճորով», «հնչուր», «հալուր», «չխսնէ», «պացխուն», «լալայուն» բարբառային ձևերը: Այստեղ նկատվում է ավելի գրարարյան բառապաշարի և դարձվածքների կիրառություն:

<sup>1</sup> Այս մասին Տիրայր արքեպիսկոպոսն արել է իր եզրակացությունը, որի հետ կարելի է ծանոթանալ ՀՍՍՌ Մատենադարանի արխիվում, թղթ. 131, վավ. 3, նաև Դիւան, էջ 141—157:

Ինչպես տեսնում ենք, Խաչատուր Կեչառեցու և Ֆրիկի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությունը միայն հաստատում է նրանց տարբեր անձնավորություններ լինելու փաստը, հետևաբար և Ֆրիկի կենսագրությունը Խաչատուր Կեչառեցու կենսագրությունը լինել չի կարող:

\* \* \*

Խաչատուր Կեչառեցու կենսագրության հետ կապված մի ուրիշ թյուրիմացություն էլ կա մեր բանասիրության մեջ:

Գ. Հովսեփյանը, որ երկար տարիներ զբաղվել է Խաղբակյան-Պոռշյան տոհմի պատմությամբ և մանրամասն ուսումնասիրել է նրանց տոհմական ճյուղագրությունն ու գործունեությունը, նրանց հոգևոր կապերը ժամանակի այս կամ այն անձի հետ, 1340-ական թվականներին վերաբերող արձանագրություններում ու հիշատակարաններում նկատում և ուշագրության է առնում Մպիտակավոր Աստվածածնի վանքի վանահայրերից մեկին՝ Մկրտիչ վարդապետին: Այս վարդապետն իր ուսումն ստացել է Գլաձորում՝ հատկապես Դավիթ վարդապետի ձեռքի տակ<sup>1</sup>: Այս Դավիթը նկարագրող էլ է մի Ավետարան և նվիրել իր սանին՝ Մկրտչին. «Նուաստ ի շարս ուսուցչապետաց Դավիթ շնորհեցի Աւետարանս սուրբ Աստուածածնին և առաջնորդի սուրբ անապատին Մկրտչին՝ հոգևոր որդեկին իմոյ ի յիշատակ հոգւոյ իմոյ»<sup>2</sup>:

Մի արձանագրության մեջ (1243 թվականի), հանդիպելով ոմն հայր Մկրտչի անվանը, որ հիշված է որպես վանքի առաջնորդ, Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ այս Մկրտիչը պետք է լինի Խաչատուր Կեչառեցու որդին, քանի որ «Չորրորդ ասուր ծննդեան և աւետեաց Աստուածածնին» գանձը («Խնդութեան ձայն բարբառ աւետեաց» սկսվածքով) Կեչառեցունն է և ըստ Ալիշանի խորագրված է եղել այսպես.

<sup>1</sup> Այս Դավիթը հեղինակությամբ ետ չէր մնում Եսայի Նչեցուց: 1321 թվականին Կյուրեղ գրիչը նրանց մասին գրում է. «Ի վարժապետութեան սուրբ և բազմերջանիկ բաջ հռետորաց հայոց, երկուց ամուլաց ճշմարիտ հաւատոց մերոց... Դաւթի և Եսայեա ի հռչակավոր սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ...» (Խաղբակյանք-Պոռշյանք, Բ, էջ 218):

<sup>2</sup> Ալիշան, Սիսական, էջ 134, նաև Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, հավելված Բ, էջ 23:

Երգեաց ըզսա Կեչառեցին  
Հայր՝ Մկրտիչ վարդապետին:

«Ափսոս, — շարունակում է Հովսեփյանը, — Ալիշանը յուր սովորութեան համեմատ լիովին չի հիշում աղբյուրը. ձեռագրի ծագման տեղը և ժամանակը գուցե կլուսավորեին մութ խնդիրը»<sup>1</sup>:

Հ. Տաշյանն էլ Ալիշանի բերած այս տեղեկութեան հիման վրա կզրակացնում է, թե «Գանձին խորագիրը, որ է

Երգեաց ըզսա Կեչառեցին,  
Հայր Մկրտիչ վարդապետին,

կրնա ցուցնել, որ (Կեչառեցին) աշխարհիկ երեց էր»<sup>2</sup>:

Տարօրինակ է, որ Հովսեփյանի աշքից վրիպել են ՀՍՍՌ Մատենադարանի №№ 424 և 2736 (նաև 7507 ձեռագրերը), ուր պահպանված է այս դանձր Կեչառեցու անունով:

Մեր հնագույն դանձարաններից մեկում (№ 3540, դրված 1406 թվականին) այս գանձը՝ «Գանձ աւետեաց Աստուածածնին և ճրագալուցին» վերնագրով, տրված է առանց Խաչատուր Կեչառեցու անվան հիշատակության:

Մատենադարանի վերոհիշյալ ձեռագրերը չնչին տարբերությամբ պահում են այն հիշատակությունը, որ բերում է Գ. Հովսեփյանը, քաղելով Ալիշանի Այրարատի 269 էջից.

№ 424 (Ժ է դ.)

№ 2736 (1621 թ.)

Գանձ աւետեաց Աստուածածնին	Գանձ աւետեաց Աստուածածնին
ի տիրամայր սրբոյ կուսին	ի տիրամայր սրբոյ կուսին
Երգեաց ըզսայ Կեչառեցին	Երգեաց ըզսա Կեչառեցին
Տէր Մկրտիչ վարդապետին:	Հայր Մկրտիչ վարդապետին:

№ 2736 ձեռագիրը լրիվ համապատասխանում է Ալիշանի մեջ բերածին. այն է՝ շորթորդ տողում երկուսն էլ ունեն Հայր Մկրտիչ վարդապետին արտահայտությունը: Դրա փոխարեն № 424 ձեռագիրն ունի «Տէր Մկրտիչ» բառերը:

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, Խաղրակյանք, Ա, էջ 209—210:

<sup>2</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք, էջ 125:

Նշված «Տեր Մկրտիչ վարդապետին» բառերը ցույց են տալիս, որ «Հայր» բառը մյուս փոփոխակում ոչ թե մարմնական հայր է նշանակում, այլ ավելի շուտ հոգևոր հայրի իմաստ ունի, և երկրորդ, ինչպես կտեսնենք ստորև, այն հավաստի չէ, այլ գրիչների անտեղյակության արդյունք միայն:

Թե ինչպես է շարունակվել ստանալորն Ալիշանի մեջ բերած ձեռագրում, չգիտենք: Մեր ուսումնասիրությունը պարզ դարձնելու համար բերենք ստանալորն ամբողջությամբ (ըստ № 2736 ձեռագրի), ուշադրություն հրավիրելով հատկապես այն բանի վրա, որ այն գրված է գանձից ներքև՝ տողատակին, ինչպես գրվում են մեր այժմյան ծանոթագրությունները:

Գանձ աւետեաց Աստուածածնին  
Ի տիրամայր սրբոյ կուսին.  
Երգեաց ըզսայ Կեչառեցին  
Հայր Մկրտիչ վարդապետին,  
Երգեաց ըզսա ի յատենին  
Քաղցր և անոյշ և մեղմագին  
Հանց որ ժողովրդն հաւանին  
Նւ փառս տան քո ստեղծաւղին:

Բանից կարծես դուրս է դալիս, որ իրոք Կեչառեցի Խաչատուրն ունեցել է որդի՝ Մկրտիչ անունով:

Այս հաստատում է նաև մեր Մատենադարանի № 7507 ձեռագրի (35 էջ) մի այլ նույնպիսի տողատակի հիշատակությունը. «Գանձ սրբոյն Սարգսի զօրաւարին» վերաբերող.

Գանձ ասացեալ տէր Մկրտչին  
Որդոյ Խաչիկ վարդապետին... և այլն:

Տեսնենք այս հիշատակությունների հավաստիությունը:

Բավական է թերթել № № 424, 2736, 7507 և այլ ձեռագիր գանձարաններ, համոզվելու համար, որ հիշատակություններն արված են ոչ թե հեղինակի, այլ ուրիշ մեկի կողմից: Վերցնում ենք № 7507 ձեռագիրը (էջ 2ա).



Գանձ աւետեաց Աստուածածնին,  
Ասա զսա յերեկոյին  
Երգեաց զսա քաջ բարունին  
Տէր Առաինկ Բաղիշեցին.  
Ասա թէ ձայն ունիս յոճին  
Հանց, որ ժողովն հաւանին,  
Երկու ընկերք բանք քաղցրագին,  
Աւարտեցէք զգանձս ընդ տաղին...

Սրան ավելացնենք մի երրորդ գանձի կապակցութեամբ արված նույնպէս տողաւաւի ծանոթագրութիւնը (էջ 45բ).

Գանձս պատուական է քան զոսկի  
Եւ քան զականս պատուականի.  
Երգեց զսա քաջ բարունի  
Տէր Մխիթար Էրեւնցին.  
Առաջին մեծ սիւնհոգոսին.  
Հանց, որ ժողովն հաւանին  
Եւ փասս տան քո ստեղծաւորին:

Եթէ համեմատենք ընդգծված տողերը, ապա ավելորդ կլինի ապացուցել, որ սրանք ոչ թէ հեղինակների՝ իրենց հիշատակութիւնն է, այլ հետագայի գրիչների: Սա մի ընդունված ձև է, որ օգտագործել են գրիչները, տեղագրելով միայն անուններ ու որոշ ավյալներ:

Որ իրոք գրիչներն են արել այդ գիտողութիւնները և հաճախ իրենք շփոթութեան մեջ լինելով, սխալն իրրև իրականութիւն են հրամայել ապագային, անկասկած են գառնում հետևյալ փաստերով:

Նույն № 2736 ձեռագրի 201 էջում (նաև № 7507 ձեռագրի 71բ էջում) Մխիթար հոգող գանձի տակ հանդիպում ենք հետևյալ «ծանոթագրութեանը»:

Գանձս ասացեալ Մխիթարի  
Այրիվանից առաջնորդի  
Աստուածարան վարդապետի,  
Որ մականուամբ Գոշ կոչի,  
Ասա զսա ի յատենի  
Կալոս աշօք և ողբալի... և այլն:

Միայն ուշ հետադայի և այն էլ անգետ գրիչը կարող էր Մխիթար անունը բավական համարել, նույնացնելու համար 13—14-րդ դարերի Գեղարդա կամ Այրիվանի առաջնորդ, հայտնի ժամանակագրության ու բազմաթիվ գանձերի հեղինակ Մխիթար Այրիվանեցուն՝ Մխիթար Գոշի հետ:

Բերված օրինակները ապացուցում են, որ հիշատակությունները, որոնց մեջ և

Երգեաց ըզսայ Կեչառեցին  
Հայր Մկրտիչ վարդապետին

արտահայտությունը չի կարող ստույգ համարվել ասելու համար, թե Կեչառեցին աշխարհիկ երեց է եղել, վերոհիշյալ Մկրտիչ վարդապետի հայրը, մանավանդ որ այն «Աւետեաց Աստուածածնի գանձը», որի տակ նշված է այս ծանոթագրությունը, Հ. Տաշյանն իր Յուզակում խաչատուր Տարոնացունն է համարում:

Սրանով սպառվում են խաչատուր Կեչառեցու մասին եղած տվյալներն ու ակնարկները:

Նրա կենսագրությունը մնում է բացահայտել ու վերականգնել իր ժամանակակիցների, նրանց հետ ունեցած կապերի միջոցով միայն:

Երկու դեմք 13—14-րդ դարերում անմիջականորեն կապում են խաչատուր Կեչառեցուն Գլաձորի բարձր գալրոցի կամ համալսարանի հետ:

Առաջինը բուրբիս հայտնի Սունյաց մեարոսադիրտ Ստեփանոս Օրբելյանն է «Միսական տան» պատմիչը, մյուսը՝ համեստ մի գրիչ՝ Պողոս Ակներցի կամ Կիլիկեցի անվամբ:

Օրբելյանն իր Պատմության հիշատակարանում, ինքնակենսագրական կարգի որոշ դրվագներ տալով, գրում է. «Վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տառից՝ սակաւ մի տոեալ զճաշակ ուտնի քաղցրութեան առի հրաման յաստուածազգեաց և յաշխարհալոյս բարունապետէն Ներսիսէ (խոսքը Ներսես Մշեցու մասին է—Մ. Ա.) և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»<sup>1</sup>:

Նա Գլաձորի սան է: Գլաձորի գալրոցի բարերար ազդեցությունը զգացվում է նրա մեծարժեք պատմության վրա, որտեղ լայնորեն

<sup>1</sup> Օրբելյան, Պատմութիւն, էջ 478:

օգտագործված են վիճական արձանագրություններ, կալվածագրեր, այլևայլ պաշտոնական փաստաթղթեր: Գիտական ու քաղաքական այդ միջավայրի արդյունքն է նաև նրա նախաձեռնությամբ դամարված 1295 թվականի Սյունիքի հայտնի ժողովը, որտեղ կազմվեց Գրիգորիս Անավարդեցուն ուղղված ընդդիմախոսական հայտնի թուղթը:

Օրբելյանի գրչին է պատկանում էջմիածնին նվիրված նշանավոր ողբը՝ «Ողբը և հառաչանք ի դիմաց մերոյ սրբոյ աթոռոյն էջմիածնի»: Այս երկը երկրորդն է Շնորհալու Եղեսիայի ողբից հետո, ուր հեղինակը գովերգում է հայ ժողովրդի անցյալն ու ողբում ներկան, ապագայի երազներով: Ի դեմս՝ էջմիածնի Օրբելյանը տեսնում է հայ ժողովրդի խորտակված միասնականության և կործանված պետականության դաղափարը: Վերջինս վտանգված համարելով Գրիգորիս Անավարդեցի կաթողիկոսի օտարադավան քաղաքականությամբ, Օրբելյանն իր Ողբով զգաստանալու կոչ է անում հայրենակիցներին.

Ու՛ր են փեսայքն իմ առաջին  
Հայրապետաց ջոկքն որ անցին.

Ու՛ր թագաւորքն են նախկին

Ուր ազատքն ընդ սեպուհին.

Ուր են իշխանք գահազլխին

Նախարարաց կոյտքն որ կային.

Ու՛ր զօրութիւնք բիր բանակին

Խառնեալ ամբոխ անթուելին.

Ո՛ւր բաբունիքն, որ յիս կային

Ո՛ւր ձայն երգոյ, պաշտօնէին

Արդ զո՞ւր կարեմ ըստ պատշաճին

Թուել զիմ փառսն որ նախ էին...<sup>1</sup>:

Ազգային ինքնուրույն պետականության երազանքն է, որ արձարծում է Օրբելյանը և հորդորանքը՝ քաղաքական այդ տենչանքն իրականացնելու:

<sup>1</sup> Մտ. Օրբելյան, Ողբը և հառաչանք, Ն. Նախիջևան, 1770, էջ 22—23, 31:

Այս Ողբը Օրբելյանը գրել է Խաչատուր Կեչառեցու խնդիրքով, «Արարեալ տեանն Ստեփանոսի նախագահ Մետրապոլիտին Սիւնեաց՝ որդւոյ Տարսալիճ իշխանին, ի խնդրոյ շնորհազարդ սուրբ վարդապետին Խաչատրոյ Կեչառեցոյ. ի Չեմ (1299) քուակամիս մերոյ»:

Ողբի վերջում՝ «Յիշատակարան բանիս՝ ըստ անուան ոգոյին» գլխի շորքորդ հատվածում Օրբելյանը ճշտում է իրերի գրությունը. Կեչառեցին ոչ թե խնդրել է, այլ փութով ստիպել, հարկադրել, զրգել գրելու այս ողբը.

Փութով մեծաւ ըզմեզ հարկեալ  
Ի յայս հանդէս բանից մըղեալ  
Բարունապետն՝ հոգւով լըցեալ  
Անյազթ հռետոր շնորհօք ծաղկեալ.  
Եւ բանիրուն մեղ ճանաչեալ  
Յազդաց բազմաց դովարանեալ.  
Որ Խաչատուր սա յորչորչեալ  
ՅԱյրարատեան տանէն եկեալ<sup>1</sup>:

Այստեղ մեզ այնքան չի հետաքրքրում Օրբելյանի բարձր գնահատականները Կեչառեցուն, որ իհարկեւ, ուշադրության արժանի է<sup>2</sup>, այլ այն, որ Խաչատուր Կեչառեցին Օրբելյանին մոտ կանգնած մի մարդ է եղել: Այս ցույց է տալիս, որ եթե Կեչառեցին Գլաձորում չի էլ ուսել անգամ, սերտ, կամ ինչպէս Գ. Հովսեփյանն է ասում «հոգևոր» կապ է ունեցել նրա ներկայացուցիչների հետ:

Այս ավելի հաստատւում է, երբ նկատի ենք առնում Ստ. Օրբելյանի «Հակահառությունը»<sup>3</sup> դավանաբանական այլևայլ հարցեր պարունակող մի ամբողջ գիրք, տասներկու գլխից բաղկացած, զըր-

<sup>1</sup> Ստ. Օրբելյան, Ողբ և հառաչանք, էջ 31:

<sup>2</sup> Չպետք է մոռանալ, որ Ստ. Օրբելյանը ինքը մեր մեծագույն սլաւոմազիրներից մեկն է և Տարսալիճ Օրբելյանի որդին, իշխանական տնից, և Խաչատուրի նկատմամբ տածած նրա ջերմ հարգանքը ստեղծական զովեստ չէ լուր, այլ Կեչառեցու հեղինակավոր լինելու փաստն է ազդեցութեամբ:

<sup>3</sup> Տեանն Ստեփանոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի, Հակահառութիւն ընդդէմ երկարնակաց, շարագրեալ ի թուին հայոց ՉԾԱ (1302) ի կաթողիկոսէ Գրիգորի Անաւարդեցոյ, Կոստանդնուպօլիս, 1756:

ված 1302 թ., որի կարևորագույն մասերից մեկը՝ 11-րդ գլուխը գրված է Խաչատուր Կեչառեցու հորդորով:

«Բոլոր պատճառ ժողովոյն Քաղկեդոնի: Եւ բացայայտութիւն նոցին ազանդոյն: Եւ յայտարարութիւն տօմարին Լեոնի, զոր ինքեանք ընկալան, և զմեզ հարկեն յանձն առնու: Վիպասանեալ նորին Ստեփանոսի ի խնդրոյ Խաչատուր վարդապետի Կեչառեցոյ»:

Գրքի 7-րդ գլուխը գրված է Բարսեղ վարդապետի խնդիրքով:

Տ-րդը՝ «Ի խնդրոյ տեառն Յովհաննէսի Արարատեան նահանգի վերագիտողին»:

Թե ով էր Բարսեղ վարդապետը, որին կոչում է սրդի «Սմբատայ բարեպաշտի» շկարճղացանք ճշգրիտ պարզել: Հովհաննէս «Արարատեան նահանգի վերագիտողը» էր Հովհաննէս Բջնեցին, որի անվանը հանդիպում ենք նաև Անավարդեցու դեմ թուղթն ստորագրող ցանկի մեջ՝ «Ես տէր Յովհաննէս ասթուակալ Բրջնոյ միախոհ և միաբան եմ այս վերողրեալ ուղղագաւան հայրենացանկ սահմանադրութեանս»<sup>1</sup>:

Նույն թուղթն ստորագրել են նաև Գլաձորի դպրոցի ուսուցչապետ Եսայի Նչեցին և Դավիթ վարդապետը:

«Ես Յեսայի յեաին վարժապետ և կրտսեր բանասիրաց իմով աշակերտօքս համախոհ եմ այսմ դրոյ և վերագրեալ արանց: Ես Դավիթ նուաստ հոգի քարող բանի և վարժապետ Հայաստան եկեղեցոյ համախոհ եմ այսմ թղթոյս որ ունի ճշմարտիւ զսուրբ հարանցն աւանդութիւն»:

Սրանցից անմիջապես հետո, ըստ № 3276 ձեռագրի, գալիս է Խաչատուր Կեչառեցու ստորագրութիւնը. «Ես Խաչատուր վարդապետս Կեչառեցի վկայ եմ այսմ դաւանութեանս»<sup>2</sup>:

Նշված փաստերը ցույց են տալիս, որ Խաչատուր Կեչառեցին կապված է Գլաձորյան դպրոցի գիտա-գաղափարական միջավայրի հետ:

Այս է ապացուցում նաև Գ. Հովսեփյանի կողմից նշված մի փաստ, որ բերում ենք ամբողջութեամբ նրա աշխատութիւնից: «Երևանի թանգարանի № 37/383 ձեռագրում (այժմ № 7853—1366 թվ.—Մ. Ա.) «Խաչատուր» հոդող բազմաթիվ գանձերից մեկը՝ ունի այսպիսի վերնագիր. «Գանձ սրբոց առաքելոցն Թաղէոսի և Բարդուղիմէի, Յուդայի Յակոբեան և Շմաւոնի նախանձայոյզ[ի] ասա-

1 ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 3276, էջ 58բ:

2 Նույն տեղում:

ցեալ ի խնդրոյ հեզի և քաջ գրչապետի վարդապետի Պաւղոսի ի նահանգէն Կիւլիկեայ»... Այստեղ հատուկ շեշտված է խնդրողի «ի նահանգէն Կիւլիկեայ» լինելու հանգամանքը, որ ապացույց է, թե ոչ հեղինակը և ոչ խնդրողը Կիլիկիայում չեն. ուրիշ աղբյուրներից էլ հայտնի է մեզ շնորհալի գրիչ և մանրանկարիչ Պողոս վարդապետի տեղն ու ժամանակը: Նա Գլաձորի դպրոցի գրիչ է, Նչեցու աշակերտներից, ծագմամբ Կիլիկիայի Ակններ վանքից»<sup>1</sup>:

Պողոս Կիլիկեցու մասին տեղեկությունները քաղված են իր իսկ հիշատակարաններից<sup>2</sup>. «Առդ ես տկարս ի գարեղս և ապիկարս ի վարդապետս, շնչինս ի յիմաստս և փանաքիս ի քերթողսն, Պաւղոս վարդապետ ծրեցի իմով տկարութեամբս զսուրբ Աւետարանս յուով աշխատանաւք և քրտնաջան տառապանաւք ի գաւառիս Վայո ձորասի և ի մեծ մենաստանիս որ Գլաձոր յորջորջի, ի դրան սուրբ Նախավկայիս ի թվականութեանս հայկազեանս 24Թ (1293 թ.): Ի վարժապետութեան մերոյ մեծի Եսայեայ...»:

Մի այլ տեղ՝ «Յայսմ թուաբերութեան... 24Գ (1294) ես Պաւղոս ըստ շնորհատուր անուանն սոսկ վարդապետ կոչեցեալ աշխարհաւ Կիլիկեցի, ի սբ. ուխտէն Ակնէր կոչեցեալ... Եկեալ բնակեցայ ի կողմն նահանգիս Սիւնեաց, ի գաւառս Վայոց ձոր կոչեցեալ, ի վանս Գլաձոր առ ոստ սուրբ երիցս երանեալ բարունապետին Եսայեայ...»:

Ահա այս Պողոս Կիլիկեցու խնդրանքով է խաչատուրը գրել վերոհիշյալ գանձը, և Գ. Հովսեփյանն այս բերում է ապացուցելու, որ գանձարանում եղած մյուս բոլոր «խաչատուր» հողող գանձերն էլ Կեչառեցունն են: Մենք ընդունելով այս մի գանձի Կեչառեցուն պատկանելը, կասկածի տակ ենք դնում մյուս գանձերի նրան պատկանելու հարցը, սակայն այս փաստն օգտագործում ենք անկասկած դարձնելու համար խաչատուր Կեչառեցու ուղղակի և անմիջական կապը Գլաձորի միջնադարյան համալսարանի և նրա սաների հետ:

<sup>1</sup> Գ. Հովսեփյան, Խաղբաղյանք, Բ, էջ 41:

<sup>2</sup> Նույն տեղում, Գ (հավելված Բ, 79), էջ 166, Բ, էջ 233, Հ. Թովհաշյան, Յուզակ ձեռագրաց Գաղյան Խաչիկ վարդապետի, Բ, Վաղարշապատ, 1900, էջ 29—30:



## Գ Ո Ր Թ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Խաչատուր Կեչառեցին ձեռագրերում և մատենագրության մեջ մեծ մասամբ հիշվում է իբրև բանաստեղծ: Սակայն նա լուրջ բանաստեղծ չէ, այլ նաև հասարակական գործիչ և ուսուցիչ:

Խ. Կեչառեցու բաղմակողմանի գործունեության համատեղությամբ միայն հնարավոր կլինի ամբողջացնել նրա դեմքը և նրա գեղարվեստական ստեղծագործությունը դիտել իբրև նրա գործունեության բնագավառներից մեկը միայն:

Այս առումով ահա անհրաժեշտ ենք համարում առանձին-առանձին կանդ առնել նրա գործունեության կարևոր կողմերի վրա:

Վերևում տարբեր առիթներով խոսել ենք Խաչատուր Կեչառեցու անմիջական մասնակցության մասին Գրիգորիս Անավարզեցի կաթողիկոսի դեմ եղած պայքարին: Բայց թե ո՞րն էր այդ պայքարի հասարակական-քաղաքական շարժառիթը, ի՞նչ հետևանքներ էր սպասվում դրանից, այս մասին անհրաժեշտ է համեմատաբար մանրամասնորեն կանդ առնել այստեղ:

1294 թվականին, բավական մեծ աղմուկից հետո, հայ եկեղեցու գլուխ կանգնեց Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը:

Մինչև Գրիգոր Անավարզեցին էլ, Կիլիկիայում հոգևորականության որոշ մասի մեջ արդեն սկսել էր հակում դեպի լատինական եկեղեցին: Այդ շարժումն ծայր էր առել դեռ 11-րդ դարից. խաչակրաց արշավանքների հետևանքն էր այդ, այդտեղից էր սկսվել Հռոմի Պապի ու հռոմեական եկեղեցու ազդեցությունը սկզբում Կիլիկիայի, ապա նաև բուն Հայաստանի գործիչների վրա: Այդ կրոնական ազդեցություն չէր միայն, այլ հետապնդում էր քաղաքական նպատակներ:

Շարժումն սկսվեց 11-րդ դարից, բայց ամբողջական արսա-

հայտնությունները դրսևորվեց 13-րդ դարի վերջին և խիստ բնույթ ստացավ 14-րդ դարի սկզբներին:

Կիլիկյան հայկական թագավորության խոշոր ֆեոդալներից և եկեղեցական գործիչներից շատերը, հավատ ընծայելով կաթոլիկ եվրոպայի և պապի հավաստիացումներին՝ զինական ուժերով օգնել Կիլիկյան թագավորությանը նրա հակառակորդներին պարտության մատնելու գործում, հակված էին դավանարանական դիճումներ անել վատիկանին: Նրանք հնարավոր համարեցին ընդունել Հռոմի պապի և լատինական եկեղեցու պահանջած նորամուծությունները հայ եկեղեցում: Կաթոլիցիզմը տարածվում էր սկզբում Կիլիկյան վերնախավերում, ապա նաև Արևելյան Հայաստանում. այն ներթափանցեց մինչև իսկ Գլաձորի միջավայրը: Գլաձորի սաներից կաթոլիկություն ընդունած Հովհաննես Քոնեցուն հաջողվեց նույնիսկ կենտրոն ստեղծել Գլաձորի հարևանությամբ՝ Քոնայում:

Այս պայմաններում, բնականաբար, հայ եկեղեցին պետք է լուրջ քայլերի դիմեր իր անկախությունը սպառնացող վերահաս վտանգի առաջն անելու համար: Հայ եկեղեցու գործունեությունը վայելում էր աշխատավոր մասսաների հավանությունն ու գործակցությունը, որովհետև անհախ պետականությունից զրկված ժողովուրդը եկեղեցու մեջ տեսնում էր իր պետականության կրողին:

Եկեղեցին այդ դարերում ոչ թե սոսկ կրոնական մի հաստատություն էր, այլ մասամբ նաև հայ ժողովրդի ինքնուրույն պետականության և մշակույթի կրողը:

Քչերն էին հայ եկեղեցու պաշտպանության մեջ տեսնում կրոնական շերմեռանդություն. մեծամասնության համար եկեղեցին մի պատվար էր, որով հայ ժողովուրդը որոշակիորեն սահմանադատում էր իրեն օտար նվաճողների գաղափարական ներգործությունից: Եվ հասկանալի է, թե ինչու հայ եկեղեցու ինքնուրույնության ոտնահարման փորձերը ուժեղ դիմադրության էին հանդիպում ժողովրդական լայն մասսաների կողմից<sup>1</sup>:

<sup>1</sup> Միանգամայն ճիշտ է գրված, որ հայկական եկեղեցու զավանդների հարցում պատմականորեն ճշմարիտ գուրս եկավ ժողովրդական լայն խավերի բանած գիբբը:

«В спорах и борьбе вокруг унии армянской церкви с католической, правильной и исторически оправданной оказалась точка зрения



Եթե ասենք, որ 1294 թվականին կաթողիկոս դարձած Գրիգորիս Անավարդեցին լատինադավան շարժման կողմնակիցներից էր, ապա սյարզ կլինի թե ինչու նրա կաթողիկոս դառնալն այսպիսի դժգոհությունների ու անհամաձայնությունների տեղիք ավելց հայ և՛ հոգևորականության, և՛ հասարակական տարբեր խավերի մեջ:

Երբ դեռ 1287 թվականին Լևոն 3-րդ թագավորը համոզում էր հայ եպիսկոպոսներին և վարդապետներին՝ ընտրող ժողովի անդամներին, կաթողիկոս ընտրել Անավարդեցուն, վերջիններս ընդդիմացան, պատճառաբանելով թե Անավարդեցին «հոռոմ» է:

Բայց, այնուամենայնիվ, 5—6 տարի անց, Հոռոմի Պապի գրղմամբ և Հեթում թագավորի ջանքերով Անավարդեցին կաթողիկոս ընտրվեց:

Չարիքի առաջն առնելու համար Սունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը հրավիրեց վերոհիշյալ Սյունիքի ժողովը՝ 1295 թվականին, ուր հեղինակավոր հոգևորականների, երկրի իշխանների ու գիտնականների ստորագրությամբ թուղթ ուղարկեց Գրիգորիս Անավարդեցուն, որտեղ բացահայտում էր ստորագրողների դավանանքն ու հաստատակամությունը: Նամակը, որ հիշեցնում է 449 թվականին Աշտիշատի ժողովի պատասխանը Միհրնես սեհին, գրված է նուրբ երգիծանքով և հետևողական սկզբունքայնությամբ:

«Հաւանիմք մեք, — գրում են թղթում ստորագրողները խիղախությամբ, — ընդ մեր հարս ի դժոխս իջանել և ոչ ընդ հոռոմոցն յերկինս ելանել...» և ապա ավելի խրոխտ. «Եւ թէ թագաւորական սասախւ պատժէր զմեզ, մեք պատրաստ եմք ի տանջանս, յաքսորս, ի բանտ, ի մահ և մեռանել ի վերայ սուրբ և առաքելական հարցն աւանդից». այնուհետև ստորագրություններ<sup>1</sup>:

народных масс. В условиях полной потери государственности и политической независимости армянская церковь взяла на себя также функцию политического представителя народа и сыграла определенную роль в сохранении культуры и национальной самобытности армянского народа». С. С. Аревшатян, Философские взгляды Григора Татеваци, 1957, стр. 14, տե՛ս նաև էջ 12:

<sup>1</sup> Բերում ենք ստորագրություններն ամբողջությամբ. «Մեր տէր Սարգիս և տէր Գրիգոր ի սոյն վիճակէ, համախոհ և միաբան եմք այս վերողբելոյս մեր հարցն աւանդիցն. և որք ոչ միաբանին այսմ հայրենաւանդ և հայրապետական հաստահիմն դաւանութեանցս, նզովեալ եղիցին ընդ

Ահա այս հայրենապաշտպան թղթի տակ ժամանակի հեղինակավոր անձանց՝ Գլաձորի համալսարանի տեսարանների՝ Եսայի Նչեցու և իր աշակերտների՝ Դավթի, Հովհաննես Բջնեցու, Վանական վարդապետի եղբորորդի Մարգարե վարդապետի, Իվանի և Տարսալիճ Օրբելյանների որդիներ՝ Էլիկումի և Լիպարիտի, Պոռ իշխանի որդիներ՝ Պապաքի և Էաշու ստորագրությունների կողքին տեսնում ենք և Խաչատուր Կեչառեցու ստորագրությունը. «Ես Խաչատուր վարդապետս Կեչառեցի վկայ եմ այսմ դաւանութեանս»:

Սա ապացուցում է, նախ՝ Խաչատուր Կեչառեցու ճանաչված և հեղինակավոր անձ լինելու հանդամանքը և երկրորդ՝ այն ներգործող-ակտիվ վերաբերմունքը, որ ունեցել է նա իր ժողովրդին վերաբերող, նրան հուզող հարցերի նկատմամբ:

Պատահական չէ, ամենևին, նույն թվականներին գրված նրա «Ողբ վասն աւերման տանս արևելեան» հայրենասիրական երկը, որտեղ նա կսկծագին ողբում է հայրենի երկրի քայքայված վիճակը:

Սարէլ և Արիս: Ես տէր Յովհաննէս աթուակալ Բրջնոյ միախոհ և միաբան եմ այս վերողբեալ ուղղադաւան հայրենացանկ սահմանադրութեանս և նդովիմք զոչ հաւանողսն ընդ շար հերձուածողացն: Ես Գրիգոր աշակերտ և սղաօաւոր բանի, որ մակաղբեալ կոչեցա Բջնեցի, հրամանատար այսմ աթոռոյ, սերտ և անքակ միաբանութեամբ համախոհ եմ: Ես տէր Յովհաննէս եպիսկոպոս Հողբատայ իմով վիճակելովքս համախոհ եմք այսմ նամակիս: Ես տէր Մխիթար Հաւութաւոյ եղիսկոպոս, անքակ միաւորութեամբ համախոհ եմ այսմ սահմանիւ մահուն: Ես տէր Մարգարէ՝ եղբորորդի Վանական վարդապետի, համախոհ եմ վերողբելոյս, ի յանդարձոյ հօրեղբօրն իմոյ, որ հրամայէր թէ՛ օձն կամի շարժել դառւան, ջանացարուք ոչ տալ տեղի գլխոյն, և մի հաւատայք խարողին: Արդ, հակառակողք այսմ առաջին հարցն աւանդիցս որոշեալ եղիցին ի փառայ որդւոյն աստուծոյ: Ես Յեսայի յետին վարժապետ և կր(տ)սեր բանասիրաց, իմով աշակերտօքս համախոհ եմ այսմ գրոյ և վերոյգրեալ արանցս: Ես Դաւիթ նուաստ հոգի քարոզ բանի և վարժապետ Հայաստան եկեղեցւոյ համախոհ եմ այսմ թղթոյս, որ ունի ճշմարտիւ զսուրբ հարանցն աւանդութիւն: Ես Խաչատուր վարդապետս Կեչառեցի վկայ եմ այսմ դաւանութեանս: Մեր անպիտան ծառայքս Քրիստոսի Էլիկումս և Լիպարիտս, որդիք փառաւոր իշխանացն Տարսալիճին և Իւանէի, եղբարք մերովք և որդովք, և ամենայն աղատօք հնազանդ եմք մահու շափ այսմ կտակիս: Մեր մեղուցեալ ծառայքս աստուծոյ Պապաքս և Էաշի, որդիք բարեկաշտ իշխանին Պոռշայ, մերով աղատովքս համակամ և համախոհ եմք ամենայն հնազանդութեամբ սուրբ հարցն աւանդութեանցս վերո գրելոցս ի նամակի աստ. և որք ոչ հաւանին, նդովեալ լիցին ի սուրբ հարցն մեր(ոց) և յաստուածարեալ եպիսկոպոսաց (ՀՍՍԹ Մատենագարան, ձեռագիր № 3276, էջ 58բ):

Սադո՛ւն, սիրած մեծ Ապաղա-ղանի  
 Գոված ընտիր յամէն հանդիսի.  
 Զաշերըդ բա՛ց զինչ Դամասկոսի  
 Տե՛ս ըզգաւառս ի յերերմանի,  
 Զեկեղեցիքս ի մեծ վըտանդի...  
 . . . . .  
 Աւա՛ղ, թէ զո՞րն տսեմ ի լալի,  
 Զայն հին ու նորքն ի գերեզմանի...

Այս պայքարի արձագանքն է նաև Ստ. Օրբելյանի «Ողբ էջմիածնի» հայրենասիրական պոեմը, որը դարձյալ ոչ պատահականորեն գրված է, ինչպես տեսանք խաչատուր Կեչառեցու հորդորանքով:

Սա ժամանակին անմիջական նպատակներ հետապնդող միերկ է եղել, որ այլևայլ միտումներից բացի, հակադրել է Հայաստանի հին օրերի անկախությունը Կիլիկիայի օտարադավան կաթողիկոսության օրոք ստեղծված հայերի ողբալի գրությունը:

Եթե ժամանակագրական տվյալներով հետևենք ի. Կեչառեցու գործունեությանը, ապա կտեսնենք, որ նա տարիներ շարունակ հետևողական ու համառ պայքար է մղել երբեմն անձնապես, երբեմն ուրիշներին հորդորելով ու զրդելով, հայ ժողովրդի ազգային ավանդները սերմանելու և պահպանելու ձգտումով:

Ավելի համեստ տեղեկություններ ունենք խաչատուր Կեչառեցու ուսուցչական գործունեության մասին: Այն չի եղել բազմակողմանի ու տարածուն, ինչպես Սասյի Նչեցունը կամ Գր. Տաթևացունը, բայց այնուհանդերձ ունեցել է իր գործունեության համեստ շրջագիծը: Նա թողել է երախտահատույց աշակերտներ, որոնց միջոցով մենք վերականգնում ենք Կեչառեցու գործունեության այս կողմն էլ:

Այսպես, 1314—15 թվականին գրված մի նկարագարդ ավետարանի հիշատակարանում գրչապետ և նկարագարդոջ Բարդաղը գրում է. «Աւարտեցաւ սուրբ աւետարանս... յամս յառաքելաշնորհ արհեստիսկոպոսի տեառն Յովհաննիսի մականուամբ Աւրպել կոչեցելոյ, ձեռամբ նուստ և ոսկեգիր գրչապետի Բարդաղի, աշակերտի մեծ բարունապետի խաչատուր Կեչառուեցոյ (ձեռ. Կեչառուեցի), գծագրեցաւ ի քաղաքիս Նղեգիս, ի տէրութեան արեաց վեհագունի իշ-

խանաց իշխեսցողի մեծ կոմսի և կողմնակալի Բուրթելին և նորին հարազատի Բուլտային ի խնդրոյ սրբասնունդ քահանայի Սահակայ»<sup>1</sup>:

Բացի հիշատակարանից ավետարանի ծաղկազարդ էջերից մեկի վրա վարդազարդի շուրջը գրված է «Բուլորակիս շրջապատի, գուր հիշեցէք զիմ<sup>2</sup> բարունի, զԽաչատուր Կեչառուեցի, թվ. 24 (1314)»:

Ճիշտ է նկատում Գ. Հովսեփյանը, որ այս քաղվածքներից երևում է ոչ միայն Կեչառուցու ուսուցչական գործունեությունը, այլ նաև նրա նկարիչ և գրիչ լինելու հանդամանքը, որ ավելի որոշակի երևում է Աղեքսանդրի սլաոմություն հետ կապված նրա աշխատանքներում:

Մի ուրիշ հիշատակություն, թեև ոչ այսքան հավաստի, վկայում է դարձյալ Կեչառուցու ուսուցչական գործունեության մասին: ՀՄՍՌ Մատենադարանի № 5443 ձեռագրում, որը Տօնապատճառների մի ժողովածու է, կա Խաչատուրի անունով պահպանված երկու նյութ: Մեկը «Պատճառք նոր կիրակէին և աւետարանացն կարդացման սակաւ» գլուխն է (էջ 386բ), երկրորդը «Իմաստութիւն հոգևոր վարդապետին Խաչատուրու ասացեալ» գլուխը (էջ 387): Այս երկու նյութի էջերը ժողովածուում խառնված են, հավանորեն կադմարարի կողմից: «Պատճառք նոր կիրակէի» առաջին էջին հաջորդում է «Իմաստութեան...» շարունակությունը, այնպես որ մինչև 390 էջը սրանք զնում են մեկ ընդ մեջ: Ամենից կարևորը այս երկու

<sup>1</sup> Այս հիշատակարանի մի ազնատ օրինակը բերված է Մ. Սմբատյանի «Նկարագիր ս. Կարապետի Վանից Երնջակոյ և շրջակայից նորա» աշխատություն մեջ (Տիփլիս, 1904, էջ 136): Սա լուրջ թյուրիմացությունների աղուներ է հանդիսացել: Հիշատակարանից դուրս են մնացել ընդամենը 2 բառ «Բարդաղի՝ աշակերտի», որով ողջ հիշատակարանը սխալմամբ վերագրվել է Կեչառուցուն: Փոխանակ «ձեռամբ նուաստ և ոսկեղիք զըշապետի Բարդաղի՝ աշակերտի մեծ բարունապետի Խաչատուր Կեչառուցու...» ստացվել է «ձեռամբ նուաստ և ոսկեղիք զըշապետի մեծ բարունապետի Խաչատուր Կեչառուցու», որի հետևանքով և աւետարանի գրիչ համարվել է Կեչառուցին, զըշապետի վայրը՝ Նդեղիս և այլն: Բարեբախտաբար Լ. Խաչիկյանի կադմած «ԺԳ դարի հիշատակարաններ»-ում (էջ 377), Լալայանի Ձեռագրաց ցուցակից ընդօրինակած լրիվ հիշատակարանը բացահայտում է այս ազնատումը:

<sup>2</sup> Ձեռագրի ազնատ եղիս բարունի» ձևը Լ. Խաչիկյանը միանգամայն ճիշտ ուղղում է՝ «զիմ բարունի»:

նյութին հաջորդող հիշատակարանն է, որտեղ Խաչատուրը հիշվում է իբրև ժողովածուի հեղինակ. ահա այն — «Զոր և իմ լուսաւորիչն և ամենիմաստն, անաւթն ընդրութեան և գերապայծառն, մաքուն և անարատն, սրբասէրն և հոգիանորոգն, աշխատասէրն և ամենաշնորհն, կենդանին և մշտնջենաւորն առ տէր, բանաւորն և առատարութիւն, լցեալն հոգւով և արգարախոհն, վսեմագոյնն և իմաստնալյնեղծն, ցանկալին և խոնարհն, բարեսէրն և Քրիստոսունակն, աղաւթականն և ընթերցասէրն, ուսումնասէրն և աստուածասէրն, քնարն հոգոյն, շառաւիղն ընդրութեան, աւթագնաց թռչունն, բարի արմատն, որին պաղաքեր, տաճարն բանին, տեղին աստուծոյ, աւթեանն սուրբ երրորդութեանն, հոգւոյն ընդունարանն, բանին բաւականն, բարձող խաչին, հեռուողն տեառն, սիրելին Քրիստոսի և սիրեցեալն ի նմանէ տէրն իմ և յոյս, ճնողն հոգևոր և երջանիկ վարդապետն, Խաչատուր գիտնականն ցանկացեալ աստուածագիծ տառիցս, բազում ջանիւ և աշխատութեամբ ի մի հաւաքեաց զբանս բազումս վարդապետաց, զոր և ես թակարդապատեալս մեղաւք ազէտս յարդարութենէ, գիտողս բազում շարեաց, ներգեւեալս անարեւելութեամբ. նուաստս տեսակաւ, ձերացեալս մեղաւք. անկեալս ի յորոգայթ որսողին, դաշնաւորեալս շարեաց, հեռացեալս յարդարութենէ, վիրաւորեալս յանցանաւք, ցաւանկեալս ծուլութեամբ և այլ բազում վնասիւք, զոր ոչ է ժամանակ ասել՝ Ստեփաննոս քահանայ անուամբ և ոչ վարիւք, ցանկացեալ աստուածեղէն իմաստից այսոցիկ, մեծաւ ցանկութեամբ զրեցի զպատճառ ճնրնդեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս որ ի համատարած ծովուն սակաւ ինչ ջուր առեալ՝ այսպէս և ես ցանկացեալ աղբերահոս վարդապետութեանս և մեկնութեանց տէրունական տօնից, ոչ կարացի զբնուն ամբարել, այլ յուսացեալ ի սուրբ յաղաթս ձեր յողորմութիւն Քրիստոսի, ձեռն արկի տնարժան անձամբ, գրեցի վոճք ի շատէ իմաստութենէ աստուածուոց վարդապետացն մերոց, զի եթէ աշխատասիրութեամբ և մտադիրութեամբ ընթեռնու՝ ուրախանա և բերկրի հոգով»<sup>1</sup>:

Խաչատուր վարդապետն այստեղ Ստեփանոսի հոգևոր ծնողն է, նրա «լուսավորիչը» այն է՝ ուսուցիչը: Հիշատակարանի վերջին մասից երևում է, որ այդ Խաչատուրը պետք է կենդանի եղած լինի, քանի որ Ստեփանոսն այդ գործն արել է ուսուցչին բերկրանք

1 ՀՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 5443, էջ 387:

պատճառելու ձգտումով, որ ուսուցիչը «ընթեռնու, ուրախանա և բերկրի հոգով»:

Այս հիշատակարանում նշված Խաչատուրին Գ. Հովսեփյանը<sup>1</sup> նույնացնում է Խաչատուր Կեչառեցու հետ: Այս ենթադրությունը մենք բաժանում ենք, ելնելով հետևյալ փաստերից:

Նախ, ձեռագիրը գրված է 13-րդ դարում: Այդ շրջանում մեզ հայտնի չէ մի այլ Խաչատուր վարդապետ գիտնական, որ վայելի աշխարհի հեղինակություն, ինչպիսին վայելել է Կեչառեցին: Այստեղ չի զգացվում միայն սերն ու զգացմունքը ուսուցչի հանդեպ, այլև վերջինիս ճանաչված ու հարգված լինելու անկասկած փաստը:

Երկրորդ, Գլաձորի գրիչների մեջ 14-րդ դարի 20—30-ական թվականներին մեզ իրոք հանդիպում է մի Ստեփանոս գրիչ, որ արտագրել է Ներսես Լամբրոնացու մեկնությունների ժողովածուն՝ Վերի Նորավանքում (Վայոց ձոր) 1329 թվականին:

Ինչպես երևում է հիշատակարանից, այս Ստեփանոս գրիչը բացարձակ նույն միջավայրից է, ինչ միջավայրից էր Խաչատուր Կեչառեցու Բարդաղ աշակերտը: Երկուսի հիշատակարաններում էլ հիշված են Սաայի Նշեցին, պարոն Բուրթելը, բարունապետ Դավիթը և այլն<sup>2</sup>:

Այս Ստեփանոսը կարող էր լինել Խաչատուր Կեչառեցու աշակերտը, որը և ուսուցչի՝ զանազան վարդապետներից հավաքած գործերը արտագրել էր երկյուղածությամբ, ավելացնելով նաև իր մասը:

Ընդունելով, որ № 5443 ձեռագրում հիշված Խաչատուր գիտ-

1 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, հ. Բ, էջ 35:

2 Բերում ենք հիշատակարանը հատվածաբար. «Որ ետ կարողութիւն մերում տկարութեան ժամանել յաւարտումն տառիս, իմոյ անարժան գրչի Ստեփանոսի, հրամանաւ և արդեամբ սուրբ բարունապետին Կիրիոնի, առաջնորդի մեծ մենաստանիս Վերի Նորավանք հոշեցելոյ... ի գաւառիս, որ հոշի Չոր Վայոյ, ի տերութեան տեղոյս և գաւառիս մեծահաւատ իշխանաց իշխանի պըն Պուրթելի... ի վարժապետութեան տանս արեւելեաց մեծաշնորհ հակտորի Սաայեայ՝ հօր և ուսուցչի վերասացեալ առնս աստուծոյ սուրբ բարունապետիս Կիրիոնի, սպասաւորի սուրբ զերեզմանի բարունապետին Դավիթ ի թուականութեանս հայոց 244 (=1329): (Նորայր եպ. Պողարեան, Մայր Ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, շորրորդ հատ., Երուսաղեմ, 1956, էջ 54):

նականը Կեչառեցին է, նրա աշակերտ Ստեփանոսի հիշատակարանից փորձենք որոշել Կեչառեցու այնտեղ նշված աշխատանքի էությունը, որով և որոշ շափով գաղափար կկազմենք նրա գործունեության էլի մի կողմի, այն է՝ գրական վաստակի մասին:

Գ. Հովսեփյանը, այս հիշատակարանից ելնելով, գրում է. «Կեչառեցին ինքն էլ յուր բաժինն է բերել տոնապատճառների գրականության մեջ. տարաբախտաբար այդ աշխատության միայն բեկորներն են հասել մեզ, կցված այժմ էջմիածնի № 753 Ն. Ժ. ձեռագրին (այս համարը այժմ համապատասխանում է մեր վերը բերած № 5443 ձեռագրին—Մ. Ա.): Այստեղ մի գլուխը վերնագրված է. «Իմաստութիւն հոգևոր վարդապետին Խաչատրու ասացեալ»... Մի ուրիշ գլուխ՝ 386ր «Պատնառք նոր կիրակէին և աւետարանացն կարդացման սակա»: Վերջում գրիչն ավելացնում է. «Զոր և իմ լուսաւորիչն և ամենիմաստն... Խաչատուր վարդապետ...» և այլն, ու բերում է հիշատակարանը, համարելով այն ընդհանուր հիշատակարան, իսկ Խաչատուրին այս գլուխների հեղինակ:

Ստեփանոսի հիշատակարանի հետևյալ բառերից, թե «Խաչատուր գիտնականն ցանկացեալ աստուածագիծ տառիցս, բազում ջանիւ և աշխատութեամբ ի մի հաւաքեաց զբանս բազումս վարդապետաց», նաև այն փաստից, որ «Իմաստութիւն Խաչատրի վարդապետի» գլուխը գտնվում է «Տօնապատճառ» ժողովածուի վերջում, պիտի ենթադրել, որ Խաչատուրը եղել է ժողովածուի կազմողը, հավաքողը կամ եթե ոչ այդ ժողովածուի, ապա ինչ որ այլ ժողովածուի, որ մեր ձեռքը չի հասել. անհավանական չէ, որ ինքն էլ եղել է որոշ գլուխների հեղինակ, ինչպես օրինակ՝ «Պատճառք նոր Կիրակէին» գլխի: Միայն այստեղ վերապահությունը այն հարցի կապակցությամբ է, թե «Իմաստութիւն հոգևոր վարդապետին Խաչատրու ասացեալ» գլուխը իրոք առանձին ինչ որ աշխատություն է: Այդ՝ իր բովանդակությունից ելնելով, ավելի շուտ մի ամփոփող վերջաբան է, ուր խոսվում է սուրբ հայրերի, երանելի վարդապետների գործունեության նշանակության մասին. «Որք զբանն կենաց սերմանեցին յոգին մարդկան՝ և խլեցին զորոմն դառնութեան. նայ և զհերձուած և զամենայն շարութիւն ի բաց քերեցին և մաքրեցին զանձինս աստուածասիրացն, որպէս և երանելի վարդապետն Պաւղոս, զՀին և զՆոր Կտակարանս, ընթերցուածութիւն Կիրդղի, զխորհուրդս տօնից և աղուհացիցն բացահայտեաց ամենեցուն և մեկնողորէն

բանիւք յառաջ բերէ ոչ ըստ կարգի դամենայնն մանրամասնարար, այլ համառօտարար, զի մի ազաւազեացի բանք առաջնայն հոգևոր արանցն, որ ճշգրտապէս իմացան և ծանուցին բազմաց ի ձեռն գրոյ. իսկ սա համառաւտագոյն զխրթին բանսն և զծածովան դարձեալ վերստին բանա և զիտուն տոնէ դամենեսեան, զի մի այլ ընդ այլոյ տեսեալ, այլազգ լսիցեն և իմանան, այլ, զի կայցեն հաստատուն ի վերայ հիման առաքելական և մարդարէական գրոց աստուածապատում բանից» (որից անմիջապէս հետո գալիս է «Զոր և իմ լուսաւորիչն...» և այլն):

Այս գլխի վերնագիրն իսկ ցույց է տալիս, որ այդ գրված է ուրիշի կողմից: Կարո՞ղ էր Կեչառեցին իր գործը վերնագրել «Իմաստութիւն» և իրեն անվանել «Հոգևոր վարդապետ»: Պարզ է, որ ոչ:

Նշանակում է Կեչառեցին «ի մի է հաւաքել» զանազան հեղինակների գործեր տոների վերաբերյալ, «բազում ջանիւ և աշխատութեամբ» ժողովածու կազմել, իր մասն էլ ունենալով, որի վերջում գրել է ամփոփող վերջաբան: Նրա Ստեփանոս աշակերտը, արտագրելով ժողովածուն, վերջաբանին վերնագիր է գրել, որը Հովսեփյանի կողմից առանձին գլուխ կարծելու սխալ տպավորութեան պատճառ է դարձել: Մերժելով, որ «Իմաստութիւն հոգևոր վարդապետին խաչատուր ասացեալ» գլուխը մի առանձին մաս է, համամիտ ենք Գ. Հովսեփյանի ընդհանուր եզրակացութեանը, թե Կեչառեցին «իւր բաժինն է բերել տօնապատճառների գրականութեան մեջ», մեր կողմից ավելացնելով իբրև ժողովող, խմբագիր, թերևս իբրև առանձին, բայց մեզ անհայտ, գլուխների հեղինակ:



Խաչատուր Կեչառեցու գիտական մակարդակը, ճաշակը և հետաքրքրութիւնները բնորոշելու համար մեծ արժեք է ներկայացնում ՀՄՍՌ Մատենադարանում պահված 13—14-րդ դարերի մի ձեռագիր, որի վերջին ստացողն է ինքը՝ Խաչատուր Կեչառեցին և իր սեփական ձեռքով ստորագրել է այդ ձեռագրի վրա. «ԶԽաչատուր վարդապետ Կեչառվեցի, ստացող սուրբ տառիս, յազուխս յիշեա»<sup>1</sup>:

Այս գիրքը, որ ձեռագրում վերնագրված է «Պատճառ լայն և

<sup>1</sup> Զեապիր № 1879 (ԺԳ—ԺԴ դար), էջ 16:



նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ բարունապետին Գրիգորի որդոյ Աբասայ», և որ մատենագիտութեան մեջ հայտնի է «Պատճառաց գիրք» անունով, 13-րդ դարի սկզբներին կազմել է Սանահնի վանահայրերից մեկը՝ Աբասի որդի Գրիգորը:

2. Տաշյանը «Պատճառաց գիրքը» անվանել է «բովանդակ հայ մատենագրութեան մէջ եզական երևոյթ<sup>1</sup>», իսկ Ն. Ակինյանը հայ ճոխ մատենագիտութեան մեջ իզուր է համարում որոնելը «Գրիգորի Աբասայ որդոյ ձեռնարկութեան համապատասխան երկրորդ երկասիրութիւն»<sup>2</sup>. «Մեր նախնիք,— գրում է Ակինյանը,— առհասարակ սիրած են «գրոց գիտութեան անեղր և անհաս ծովու (Գիրք պատճառաց—Յոջր) վրայ նաւել, կարգալ գրքեր, պատմագրել ժամանակակից կամ անցեալ դեպքեր, ուսումնասիրել Ս. գրոց մթին տեղեր և այլն, բայց՝ Գրիգորէն զատ, ոչ ոք, և այս կարելի է ըսել բացարձակապէս, խորհած է ուսումնասիրել գրքի պատմութիւնը, ի մի ամփոփել հեղինակի մ' անձին, գրութեանց, թուոյն, շարժառիթին (պատճառին) և այլն մասին, ցրիւ ըսուածները՝ աւանդութիւնն, պատրաստել քննական-համեմատական տեսութիւններ անոնց վաւերականութեան կամ անվաւերականութեան վրայ, կատարել վերջապես գործ մը, որ այսօր «Մատենագրութեան պատմութիւն» յօրինողի մը պաշտօնն կը համարուի: Ահաւասիկ տառաջինն Աբասայ որդի Գրիգորն կը հանդիսանայ այս ասպարէզն իջնողը— թեև շատ ուշ ժԳ դարուն և յայսմ կը կայանայ Պատճառաց գրոց եզրակացութիւնն»:

Աբասա որդի Գրիգորը, այսպիսով, մեր տառաջին բանասերներից է, որ ամբողջացրել, ի մի է հավաքել բազմաթիվ տվյալներ ճշտելու Հին ու Նոր կտակարանների կանոնական ու պարականոն գրքերի, ինչպես նաև եկեղեցու հայրերի՝ Եփրեմի, Եպիփանի, Գր. Նյուասացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Գրիգոր Նազիանզացու ճառերի ու մեկնությունների գրման ժամանակն ու առիթները:

Այսպես օրինակ. «Սկիզբն և պատճառ թագաւորութեանց գրոց և յառաջարան նախակարգեալ թագաւորութեանցն» գլխում նշվում

1 Հ. Տաշյան, Յուդեական ձեռագրաց, էջ 213—233:

2 «Հանդէս ամսօրեայ», 1907, էջ 132, 228, 271, ներսես Ակինյանի հոգ-վածաշարը: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1944, էջ 569:

են պարականոն որոշ գրքեր, որոնք դուրս են մնացած եղել երբայական կանոնական գրքերից. «Եւ Յեսու, Սիրաքա և Յուդիթ և Տովբայ և Հովիւն կոչեցեալ գիրք չեղեն արժանի ի կարգ ածիլ ընդ այլ կանոնեալսդ, բայց զՄակարայեցոց զառաջին գիրս գտաք գրեալ երբայեցերէն. և զերկրորդն յունարէն. որպէս և անդ արին, ի խաւսիցն է նշանակելի» (22ա—22բ):

Հետաքրքրական է սաղմոսների բնութագրումը «Յառաջարան Դաւթի մարգարէութեանն, Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացոյ. ամենայն Սաղմոսացն Դաւթի...» գլխից (էջ 34բ), «արժան է համբերութեամբ մատչել յերգս սաղմոսացն և խորհրդով շարժել զոգոցն մտաւորութիւնս... քանզի կայ և ի նոսա պատմութիւն, կայ և խրատութիւն առականց, և մարգարէութիւնք և աղաւթք, և խոստովանութիւնք»:

Հատկապէս հետաքրքրական է եկեղեցական օրհներգութիւնները՝ մարդու և աստուծո անմիջական առնչութեան հարցը, որ տրվում է այստեղ.

«Եթէ պիտոյ իցին մարդոյն՝ ապաշխարութիւնք խոստովանութեան, եթէ հասանիցէ նմա վիշտք և փորձութիւնք, եթէ հալածիցի յումէքէ և նենգիցի, եթէ խոռվեալ և տրտում իցէ և կամ թէ տեսանիցէ զիւր յառաջադիմութիւն և զթշնամոյն խափանումն, եթէ արհնել կամիցի կամ գոհանալ կամ փառս աստուծոյ մատուցանել, զամենայն զայս հոգեխառն լեալ դտանէ յերգս սաղմոսացն... և եթէ վշտանայցէ ոք ի նուագել զսաղմոս, մեծ մխիթարութիւն դտանէ, և եթէ ի փորձութիւնս անկանիցի, ընտիր և փորձ դտանի, լինի պահապան և ամբութիւն նմա ի տեսանէ... և ոչ երէ մարդ ոք լինի միջնորդ, այլ աստուածեղէն գիրքն...» (էջ 37ա—37բ):

Սա մի բաղմակողմանի ուսումնասիրութիւն էր, որ չէր կարող մատչելի լինել մի սովորական գրագետի կամ միջակ կուլտուրայի տեր մարդու համար<sup>1</sup>:

<sup>1</sup> Ի դուր չէ և պատահական, որ երբեմնի Մատենադարանապետ Սահակ Ամատունի Օջականցին «պատուական» մատյանի վերջում կազմել է բոլոր հոգվածների պարունակ ցանկը, և թե սկզբում, թե վերջում զգուշացրել ընթերցողներին խնայել գիրքը՝ չթերթել, այլ աշխատել ցանկով:

«Ընթերցող,— գրում է նա,— որպեսզի այս ծաղկաթիթ մատենք ամեն ժամանակ շարաշար չտրորուի քո ձեռքում՝ մի բանի համար տակն ու

Այս գիրքը ըմբռնելու համար հարկավոր էր անհրաժեշտ նախապատրաստություն և գիտելիքներ: Այդ ունեցել է խաչատուր Կեչառեցին: Նա ոչ միայն կարդացել է, ոչ թե եղել է մատչանի սուկական ընթերցողներից մեկը, այլ արել է նշումներ ու դիտողություններ, որոնցից ամենահետաքրքրականներից մի երկուսը կրեւորենք այստեղ: Նրա ձեռքով արված այդ դիտողությունները գանազան բնույթի են. կան և՛ լեզվական, և թե բովանդակության վերաբերող նշումներ:

Էջ 68բ. «Արրոյն Եփրեմի և սկիզբն Յորայ»... մեկնության մեջ գրված է. «Այր մի էր յերկիր յաւծ», այս բառերի կողքին նշան է արված և լուսանցքում խաչատուրի ձեռքով գրված է «Այսինքն ի պարարտ երկրէ»:

«Պատճառ և սկիզբն Աստուածաբանի յաղագս Քրիստոս ծնեալ ճառի» մեջ (էջ 162բ) գրված է. «Աստուածաբանք Գ (3) էին. Եսայի ի մարգարէսն, Յովհաննէս ի յառաքեալսն և յաւետարանիչսն, Գրիգոր ի հայրապետսն»: Կեչառեցին Գ (3)-ի վրա դնում է Գ (չորս), որով դուրս է գալիս «Աստուածաբանք շորս էին», որից հետո ծանոթագրության նշանով լուսանցքում ավելացնում է՝ «Պլատոնն յիմաստասէբսն»: Անկասկած է, ուրեմն, Կեչառեցու ծանոթությունը Պլատոնի երկերին: Այդ է ապացուցում նրա մի այլ արտահայտությունը, արված «Աղեքսանդրի պատմութեան» նախաբանում՝ «Ըստ իմաստնոյն Պղատոնի, որ գրեալ է ի Տիմէական տրամաբանութեան»: Խոսքը վերաբերում է, անշուշտ, Պլատոնի «Առ Տիմէոս, սակս բնութեան» տրամախոսությունը, որ պահպանվել է հայերեն հնագույն թարգմանությամբ<sup>1</sup>:

Առանձնապես հետաքրքրական են այս ձեռագրում պահպանված Գրիգոր Նազիանզացու ճառերի Նոննոսի մեկնությունները, որտեղ մեջ բերելով հունական դիցաբանության առանձին հատվածներ, նա քրիստոնեական տեսանկյունով ապացուցում է դրանց անհեթեթու-

---

վրայ անելովդ իրեն, և հետևապէս չգոսանայ քո ձեռքում աննման մատեանիս աննման էջերն ու թղթերը, անյադ շրջմբջկելովդ իրեն իբրև կալ գրեամբարեցի այստեղ իւր ամբողջ բովանդակութիւնն ըստ գլխոց, որ է ՃՂԶ (=196) դլուխ բան», որ անում է 376 թերթ, գումարած 7 թերթ նյութերի ցանկն ու Մահակ Ամատունու դիտողությունները:

<sup>1</sup> Տե՛ս Պղատոնի իմաստասիրի տրամախոսութիւնք, Վենետիկ, 1877:

թյունն ու տկարությունը: Այս գլուխը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հունական առասպելների պահպանման տեսակետից<sup>1</sup>:

Այս ամբողջ շարադրանքի վրա կան շտկումներ ու հավելումներ: Կեչառեցո՞ւնն են արդյոք դրանք, թե՞ ձեռագրի գրչինը, որ հետո ավելի լավ օրինակ գտնելով լրացրել և ուղղել է, զժվար է պարզել, բայց այդ շտկումների հետևանքով հունական առասպելները մեզ հասել են ավելի անաղարտ ձևով: Զեռագրում ուղղված և լրացված է Դափնու մասին պատմված առասպելը (էջ 225բ): «Դափնեա աղջիկ էր ի Լադոն՝ գետոյ և յերկրէ զծնունդն յունելով: Ապողոն տոփեալ նմա, և գիտացեալ աղջիկն առ մայր իւր փախեալ, զի պահեսցէ ըզկուսութիւնն, և մայր աղջկանն (երկիր պատառեաց և յինքն էառ և) տունկ սարգենի բուսոյց, և էառ Ապողոն զայն և զբաղեցաւ փոխանակ աղջկանն և (երբեմն ողբայր և երբեմն պատուէր)»<sup>2</sup>:

Փակագծում բերվածները լրացված են տողամիջում այլ գրչով:

Այս ձեռագրում կան հրատարակվածներից տարբեր պատմված առասպելներ. բազմաթիվ այդպիսիներից մեկն է Հեփեստոսի հետ կապված առասպելը (226ա). «Հեփեստոս կաղ էր երկու ոտիւքն: Բայց արուեստիւ դարբին: Եւ Արէս տոփեցաւ Ափրոդեա՝ կնոջն Հեփեստեա, զոր գիտացեալ արար որոգայթ Արէսի իւր փառաւոր արուեստիւ դարբնութեանն, և ըմբռնեալ բեռեաց ընդ որմ զԱրէս և կոչեաց զայլ աստուածսն ծիծաղիլ անշափ զԱրէսի թուլասիրութեամբ. արդ՝ Արէս ի նեղութեան էր բեռամամբն (222ա — Հեփեստոս դարբին էր, ետես զԱրէս տոփեալ կնոջ իւրում և զուգեալ որոգայթ կալաւ զԱրէս, կոչեաց զայլ աստուածսն ծիծաղիլ զԱրէսիւ որպէս յառաջդ այլ գրած է զայն կոչէ անշափուրիւն ծաղու) բայց Հեփեստոս փառաւոր և գոված էր արուեստին որ արար Արէսի»<sup>3</sup>:

«Եւ Թերսիտէ ողիմբացի կաղ էր իբրև զՀեփեստոս, և աշաւքն կոյր և խեղ, և լպրշի երեսաւք, այսինքն կոկ և լիրբ և յառաջախաւս.

<sup>1</sup> Հ. Մանանդյանը 1903 թվականին հրատարակել է Գր. Աստվածաբանի 5 հոսերի նոննոսի մեկնությունները. նրա ձեռքի տակ չի եղել Գրիգոր Աբասա որդու «Պատճառաց գրքի» այս օրինակը, որի բազմաթյունը կարող է մասնագետներին հետաքրքրական եզրակացությունների բերել: Տե՛ս A. Manandian, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, Marbyrg, 1903.

<sup>2</sup> Հմմտ. A. Manandian, Die Scholien..., էջ 71:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 61, 64:

սայ զհետ աստուածոցն շրջէր, ոչ վասն գործ ինչ կատարելո ալ սակա ծաղր ածելոյ ամենեցուն: Նախաաէ Աստուածաբան զՅովիանոս՝ Ահա այդ են Բո աստուածքն՝ Հեփեսոս կաղ և ծխոտեալ իւր արուեստին, և Թերսիտէ կաղ և կոյր և լիրբ ծաղրածո»<sup>1</sup>:

Այս գլխի վերջում խաչատուրի ձեռքով գրված է. «Վա՛յ սոցին պատուողացն»: Եվ թեև գրում է «Վա՛յ սոցին պատուողացն», բայց իր իսկ ժառանգությունից երևում է, որ նա շատ է սիրել և զբաղվել ոչ միայն հունական դիցաբանությունը, այլև առասպելախառն պատմություններով: Միանգամայն ճիշտ է նկատել Գ. Հովսեփյանը, թեև այլ կապակցությամբ, որ «Կեչառեցին արտակարգ սերունի դեպի վիպական-առասպելական նյութերը»<sup>2</sup>: Նրա այս հետաքրքրությունն արտահայտվել է նույնիսկ այնպիսի մի գործի մեջ, ինչպիսին է մոզերի գալստյան ավետարանական պատմությունը:

Առայժմ ամփոփենք մեր ասելիքը Խ. Կեչառեցու գրական հետաքրքրությունների և թողած ժառանգության մասին: Նրանից որևէ ամբողջական աշխատություն չկա մեր ձեռքի տակ, որ օգնի որոշակիորեն բնութագրելու նրա վաստակը: Առանձին՝ ցաք ու ցրիվ տվյալների համախմբումով միայն ուրվագծվում է նրա մասնակցությունը տոնապատճառների խմբագրությանը. մյուս կողմից իր սեփական ձեռագրի բովանդակությունից և արած նշումներից ամբողջացվում է նրա հետաքրքրությունների և գիտելիքների մոտավոր շրջանակը:

Խաչատուր Կեչառեցու գրական գործունեության մի անբաժանելի և հետաքրքրական մասն են կազմում «Աղեքսանդրի վարքի» հետ կապված նրա աշխատանքները:

Աղեքսանդր Մակեդոնացու կյանքի առասպելական պատմությունը շատ սիրված ու տարածված է եղել հին դարերում նաև հայ իրականության մեջ: Միայն ՀՄՍՌ Մատենադարանում պահպանված են այդ մեծածավալ պատմության 21 ձեռագիր օրինակ 17-րդ դարից այս կողմ գրված, էլ չենք խոսում մյուս մատենադարանների մասին, որոնց տվյալների հիման վրա Հ. Տաշյանը գրեց իր «Ուսումնասիրութիւն Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի» արժեքավոր աշխատությունը:

<sup>1</sup> Հմմտ. A. Manandian, Die Scholien..., էջ 72:

<sup>2</sup> Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, Բ, էջ 36:

Աղեքսանդրի պատմութիւնը գրված պետք է լինի 2—4-րդ դարերում, մեր թվարկութիւնից հետո: Հեղինակն անհայտ է: Շատերն են նրա հավանական հեղինակներ համարվել. Եզովպոս, Պտղոմէոս Լագիդացի, Արիստոտել: Ուշ աղբյուրները Կալիսթենէս Ողլունթացուն են վերագրում այս գործը, ելնելով մի շարք հիշատակութիւններից, թե սա ունեցել է նման մի աշխատութիւն: «Եւ շնայած,— ասում է Հ. Տաշյանը,— ամէն գիտնականք կը միաբանին յայնմ՝ որ Կալիսթենայ Ողլունթացոյ այն գործը՝ որ կը յիշուի շատ տեղ՝ շէ այս մատեանս, բայց վասն դիրութեան սովորաբար «Սուտ-Կալիսթենէս» (Pseudo-Callisthenes) անուամբ կը կոչեն քննիչք»<sup>1</sup>:

Աղեքսանդրի պատմութիւնը թարգմանվել է հայերեն 5-րդ դարում: Անհայտ է նաև թարգմանիչը: «Աներկբա երևի երանելի թարգմանչօք եղևալ թարգմանութիւն մատեանիս»,— գրում է «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ» գրքի հրատարակիչն առաջաբանում:

Մեր մի քանի բանասերներ՝ Սուբրյան<sup>2</sup>, Ն. Բուզանդացի<sup>3</sup>, Ալիշան<sup>4</sup>, Տաշյան<sup>5</sup> զանազան հիմքեր ընդունելով՝ «Պատմութեան» հավանական կամ հաստատ թարգմանիչ հայտարարում են քերթողահայր Մովսէս Խորենացուն, ի միջի այլոց բերելով նրա արտահայտութիւնը, թե՛ «զի և ես այր եմ ծերացեալ և հիւանդոտ և անպարապ ի քարգմանութեանց»<sup>6</sup>:

Հետաքրքրականն այն է, որ այս պատմութիւն հետ ամենից ավելի կապված է Խաչատուր Կեչառեցու անունը: Նա կարծես դարձել է մի երկրորդ հեղինակ: Եվ իրոք, մեր Մատենադարանում եղած 21 ձեռագրերի գերակշիռ մասը Պատմութիւն վերջում ունեն նրա հետևյալ հիշատակարանը. «Եւ արդ, զայս այսպէս համեմատեալ մի ստգտանիմք յոմանց, զի պատճառն վերագոյն ճառեցաք: Այլ ընթեռնելով զսա յիշման արժանի լիցի ի ձէնչ Խաչատուր Կեչառուեցիս, զի ի յարմարումն սակաւ բանից և ի գրչութիւն գրոցս քաւառով աշխատեցաք: Նա և զի հեթանոսական գրեանքն անմիաբան»

<sup>1</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք, էջ 13:

<sup>2</sup> Քննասէր, էջ 45, 48—56:

<sup>3</sup> Նույն տեղում, Բ պրակ, էջ 29—45:

<sup>4</sup> «Բաղմավէպ», 1846, էջ 153:

<sup>5</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք, էջ 71—73:

<sup>6</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, Գ. կետ

են և անվայելուչ՝ ի վերոյ շաղկապ բանիւք որակացեալ և ի ներքոյ լի սնոտի կարծեաւք և խաբէութեամբ, որպէս և առ զբասիրան Պողոտէոսիւ անպատուեցաւ: Իսկ պատմութիւն աշխարհակալին Աղեքսանդրու, զոր զրեցի իմով ձեռամբս, սրբազրեալ ի հնոց սակս աւգտի ինձ և այլ համբակաց, որք կամին աւգտիլ յԱղեքսանդրէ, զի թէպէտ ի հին և յընտիր արինակէ, այլ անհարմար և շաղփաղփ, որոյ զտեալ և քերեալ քերողարէն, արարի անխոտորնակ ճանապարհ, զի ի յընթեռնուլն իմասցին պուետիկոսք և քարտուղարք, և ապա գիտասցին զիմ աշխատանս ի սմայ, զոր լիապէս վաստակեցի»:

Այս հիշատակարանը բազմաթիւ ենթադրությունների, բանասիրական վեճերի տեղիք է տվել:

Այստեղից Ալիշանը ենթադրում է, թե Կեչառեցին Աղեքսանդրի պատմության խմբագրողն է, կամ մի երկրորդ հեղինակ՝ մի «վերջստին չերիւթող ռամկարար, քերող և քերթող»<sup>1</sup>, որը հնուց թարգմանված պատմությունը «ըստ իւրոյ խելամտութեան յարդարեալ կամ խանդարեալ է»<sup>2</sup>:

Հ. Տաշյանը, մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով պատմությունը, համեմատում է այն վաղ դարերում մեր մատենադրերի կողմից բավականաչափ օգտագործված հատվածների ու վկայակոչումների հետ, և հանգում է այն եզրակացության, որ Աղեքսանդրի պատմության բովանդակությունը Կեչառեցու ձեռքի տակ փոփոխության չի ենթարկվել: Խորենացու, Ստ. Տարոնացու, Թովմա Արծրունու և Գրիգոր Մագիստրոսի օգտագործած բոլոր մեջբերումները բացարձակ համապատասխանում են ժամանակակից տեքստին:

Ուրեմն ի՞նչ է արել Կեչառեցին, ի՞նչ աշխատանքի մասին է նա հիշատակում, ի՞նչով է կապվում նրա անունն այդ պատմության հետ:

Առանձին-առանձին վերլուծելով հիշատակարանի բառերը, Տաշյանը եզրափակում է, որ Կեչառեցին տվել է «Վ ա թ ու ը ց Ա զ ե ք ս ա ն դ ը ի ն մ ան ո ղ ա կ ան պ ա տ մ ո թ ի ն, ը ս տ որ ու մ ամ է ն հ ա տ ու ա ծ ի վ եր ջ ը կ ց ա ծ է ն ո յ ն ն ի լ թ ի ց վ ը ա յ ք եր թ ու ա ծ մ ը»<sup>3</sup>:

<sup>1</sup> Ալիշան, Սխուռան, էջ 399:

<sup>2</sup> Ալիշան, Այբարատ, էջ 267—268:

<sup>3</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրությունը, էջ 94:

Հետևաբար, ըստ Տաշյանի, Կեչառեցու անունը Պատմության հետ կապվում է այն բաղմամբով կաֆաներով, որոնք մտել են Պատմության մեջ:

Մ. Արեղյանը, հենվելով հիմնականում Հ. Տաշյանի բերած փաստերի վրա (քանի որ ինքն անձամբ հնարավորություն չունեցավ մանրազնին ուսումնասիրության ենթարկելու այն բաղմամբով ձևազրեբը, որ կան մեր Մատենադարանում), ենթադրում է, թե Կեչառեցու այս հիշատակարանը վերաբերում է Պատմության վերջում կցած 4 ողբ-բարանություններին: Ըստ Արեղյանի, այդ բարանությունների հեղինակը ինքը Խաչատուր Կեչառեցին է, և սխալվում են այն բանասերները, որոնք բարանության լեզվից ելնելով, այն համարում են Մովսես Խորենացու գործը<sup>1</sup>:

Առայժմ մի կողմ թողնենք Կեչառեցու հիշատակարանի վիճելի կողմերը և անդրադառնանք այնտեղ ասված բացահայտ ճշմարտություններին: Հիշատակարանի հետևյալ խոսքերից, թե «Ի գրչութիւն գրոցս հաւատով աշխատեցաք», սխալ է դառնում, որ Խաչատուրը, նախ և առաջ ձեռագրի արտագրողն է՝ գրիչը, իսկ եթե հիշենք նաև, որ նա ուսուցիչն է «ոսկեգիր գրչապետ» Բարդաղի, ապա, անհավանական չի լինի ենթադրել, որ նա թերևս եղել է ոչ միայն գրիչը, այլ նաև ծաղկողն ու նկարիչը, որն այս դեպքում այնքան էլ կարելի որ չէ<sup>2</sup>:

Այս փաստը միայն, որ Կեչառեցին իր ձեռքի տակ եղած բաղմատեսակ ու բաղմարովանդակ ձեռագրերից Աղեքսանդրի պատմությունն է ընտրել գրելու, արտագրելու, այնտեղ՝ հին ձեռագրում եղած «աղավաղ» և «շաղփաղփ» տեղերը «ի գրոց հնոց սրբագրելու»

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, էջ 539:

<sup>2</sup> Ձ ա ք ա ր ի ա Գ ն ու ն յ ա ն ց ի «Աղեքսանդրի պատմութեան» նկարագրողումների ուսումնասիրությունը Գ. Հովսեփյանին բերում է այն ենթադրություն, թե Կեչառեցին կարող էր Զաքարիայի նախորդը եղած լինել ձեռագրերը ծաղկելու և նրանց մեջ նկարներ ավելացնելու բնագավառում. «Արդյոք նկարչության օրինակի ծագումը մինչև Կեչառեցին չ'ի հասնում, ինչպես խմբագրությունը»,—գրում է նա (Խաղրակյանք, Ա, էջ 216):

Նույն հարցին նա անդրադառնում է և հետագայում. «Խաչատուր Կեչառեցին սրանց նախահայրն է կաֆաներ գրելու մեջ, բայց ի նկատի ունենալով նորա նկարիչ լինելու իրողությունը, անհավանական չէ, որ լինի նաև առաջին նկարագրողը և այն ավանդն անցած հետագա բանաստեղծներին (նույն տեղում, Բ, 37):



համար, վկայում է այն մասին, որ նա առանձին նշանակութուն է տվել այդ գրքին: Իսկ եթե ավելացնենք, որ նա բացի գրելուց, գրչութունը սրբագրելուց զատ, նաև մի հատուկ առաջաբան է գրել գրքին, որ ինքն անվանում է «Նախագրութիւն»<sup>1</sup>, ապա իրոք մեզ համար պարզ կլինի այն կարևոր նշանակութունը, որ Կեչառեցիին տվել է իր գործին: Դրա համար մենք պետք է կանգ առնենք առանձին-առանձին նրա նախաբանի ու վերջաբանի արծարծած հարցերի վրա, հասկանալու համար այդ աշխատանքով տարվելու նրա հասարակական-քաղաքական ակունքներն ու գրգայատճառները:

1 «Նախագրութիւն շարագրութեանց գրոցս աշխարհակալին Աղէքսանդրու թագաւորին ի զանգաւն խնդիր հարանց հոգևորաց և համշիրակ համբակաց և համակամ և մշտաշարժ սիրով ստիպէ զմեզ բարբառնական (մի ձեռ. ի բարբառնական) վիպասանութիւն բանին արուեստից արտանառել սակաւ պարութայիւ զաշխարհակալ իմաստունն, որ տիպ և գաղափար եղև նշմարիտ երկնաւոր բազաւորին և կուսածին աստուծոյն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի թէպէտ և տրամարանեալ պատմագրեցաւ ի Ստազիրացոյն Արիստոտէլէ, սակայն արդիւնքն շահաւետ որ տրամագրեցաւ ի տարմալուկ մտաց նորա, որպէս ամենայն տեսանողացն [յայտ է] ըստ ասացելոյ առաքելոյն՝ Իմաստութեամբն աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ զաստուած, զի կուրացան անմտութեամբ սըբախց նոցա: Աստանաւր նախաճառեմք զծնունդ նորա, որ եղև շարժմամբ և նշանաւք՝ բերելով զնկարագրութիւն ապենիազն աստուծոյն, որ եղև ի Բեղղահեմ աստեղն զուշակմամբ և զալըստեամբն արարացոց: Իսկ յաղթութեամբն խուժադուժ ազգաց յայտ առնէ զյաղթութիւն տեսուն խաչիւն ի վերայ խաւարասէր իշխանին. նաև քակտումն Ծուրա և Ծաղանա՝ զաւերման զժոխոցն բերէ զյիշատակ, իսկ զբնականին մահաբեր արբեալ նմայ արտայայտէ զճաշակումն լեզոյն և քացախոյն, վասն յառաջ[ա]ճաշակ պտղոյ նախաստեղծին, իսկ փայլակն, որ անկաւ ի ծով, և աստղն, զոր վերացոյց արծուին, ցուցանէ զաւանգումն հոգոյ հզաւրին, որ ի ծոց ծնաւղի նորա: Եւ զշանթն հրացեալ ի ջուր աղղէր զնսեմանալ լուսաւորացդ, իսկ շամանդազն՝ զխաւարն աշխարհատարած, որ ընդ բոամբն ամեալ շաւշափիւր իբրև զհանգերձ. նմանապէս ամք կենաց նորա լ՛Գ. նոյնքանիւ շափեալ զժամանակ կելոյ նորա աշխարհի աստուածըն բանի. իսկ լիապէս գացես ի կատարման կտակիս սոյն սարասիւ յիմ[մ]է արտաճառեալ յաւդուտ անձանց բանասիրաց:

Ե [ոչ] վերջանամք պատմեալ պայմանիւ զանսոյթաք քաղաքաւարութիւն կենաց նորա՝ յաւգուտ և յաւրինակ ամենայն բազաւորաց և իշխանաց, զի սկիզբն արիական և քաջահրմուտ արանց պատերազմ[ոց]աց Գ ևն արտազատումք՝ զիտութիւն, արիութիւն, համբաւ և դատաստան, այսպէս և ըստ այսմ արիականի վայել է արբայից և զաւրապետաց իմաստուն և հանճարեղս լինել, զի մի ազիտաբար կորուսցէ զբազն և զագատութիւն արիւրեան, զի մի

Նախադրույթունն սկսում է նրանով, որ այս գործին Կեչառեցին ձեռնամուխ է եղել զանազան մարդկանց «հարանց հոգևորաց» և «համշիրակ համբակաց» խնդիրքով: Այնպես, ինչպես Օրբելյանն էր իր Ողբը գրել Խաչատուրի հորգորանքով, այնպես էլ իր սննդակիցների ու ժամանակակիցների, հասարակական որոշ տրամադրույթունների արտահայտույթունը պետք է եղած լինիր Աղեքսանդրի պատմության թարմ մատուցումը հասարակույթյանը:

Այնուհետև Նախադրույթյան մեջ ակնարկով է խոսվում Աղեքսանդրի և Քրիստոսի կապի «մարգարէական խորհրդի» մասին, խոստանալով վերջում ավելի հանգամանորեն կանգ առնել նշված հարցերի վրա. «Իսկ լիապէս գտցես ի կատարման կտակիս սոյն սարասիւ յիմմէ արտաճառեալ յաւգուտ անձանց բանասիրաց», որ և կատարում է գրքի վերջաբանում:

Բայց Նախադրույթյան, ինչպես և ողջ գործի մեխը կազմում է այն գաղափարը, որ Աղեքսանդրի վարքը կարող է լինել «յաւգուտ յարինակ ամենայն թագաւորաց և իշխանաց... ըստ այսմ արինակի վայել է արքայից և զարապետաց իմաստուն և հանճարեղս լինել, զի մի տգիտարար կորուսանի զթագն և զազատութիւն արիութեան... որ պնդակազմեալ ի բաց զնէ հեղգութիւն և զծուլութիւն, գործ անձամբ արկեալ յահ և երկիւղ սպառազինաց համբաւ, զի բարի իրք է անուն բարի, քան զզանձս ոսկոյ և արծաթոյ... որ լաւ է երկաթ յօր մարտի քան յընչից բազմութիւն...»: Այս ուղեմաշունչ քարոզը, որով Կեչառեցին գերադասում էր երկաթը ինչքի առատությունից, քանի որ երկաթն է առավել պիտանի պատերազմում, և բարի գործ թողնելու խրատ կարգում հատկապէս երկրի տերերին, գեղեցկախոսություններ չէին, անշուշտ, այլ նրա քաղաքական տենչանքի արտահայտույթունը, տեսնել երկրի իմաստուն և հանճարեղ զեկա-

---

ստամբակ և զինարքու մովամբ մոռացումն գործէ, այլ պնդակազմեալ ի բաց զնէ զհեղգութիւն և զծուլութիւն, գործ անձամբ արկեալ յահ և յերկիւղ սպառազինաց համբաւ, զի բարի իրք է անուն բարի, քան զզանձս ոսկոյ և արծաթոյ, զոր ոչ կարեն աւգնել յաւուր բարկութեան, որ լաւ է երկաթ յօր մարտի, քան ընչից բազմութիւն, որ պարտ է թողուլ զյոռագոյն բղջախոհութիւն և բուռն հարկանել զյառաջադէմ նկրտմանն զյետոյսն մոռանալով, իսկ արգար դատաստանաւ, որ է մասն քառից խոհեմութեանց, ըստ իմաստնոյն Պղատանի, որ գրեալ է ի Տիմէական արամարանութեան, զոր իսկապէս ի սայ տեսանի լաւարխտ յաջողութիւն առ ասացեալ իրացս յայտարարութիւնքն» (ՀՍՍՌ Մատենագարան, ձեռ. № 1865, էջ 135բ):

վարներ, որոնք պատրաստ են կանգնելու հայրենի երկրի պաշտպանության դիրքերում: Միանգամայն ճիշտ է դիտված<sup>1</sup>, որ «Աղեքսանդրի հետ կապված կաֆաները բացառիկ արժեք ունեն ոչ միայն միջնադարյան հայ պոեզիայի, այլև հայ քաղաքական մտքի պատմության համար: Պոռչյան տոհմի ասպետական տրագիցիաներով սնված Կեչառեցին Աղեքսանդրին համարում էր առաքինության և արդար դատաստանի, գիտության և արիության կերպար... Նրա կերպարի մեջ մարմին էր առնում «պսակաւոր արքայի» քաղաքական պատկերը, մեծ և առաքինի համարված թագավորի իդեալը: Ըստ այդմ բոլոր թագավորների և զորապետների, բոլոր գիտունների և դատավորների համար՝ Աղեքսանդրն է, որ պիտի հանդիսանա կատարելության տիպար ու օրինակ: Բռնատերերի իշխանության վերջ է դնում, եթե ոչ ժողովրդի ցասկոտ կամքը, գեթ առաքինի թագավորի սուրը, որ անողոք բախտի պես կտրելու է իշխող բռնակալի կյանքի թելը»:

Իսկ եթե սրա վրա ավելացնենք նաև Արևելյան տան ղեկավարների նամակը Գր. Անավարզեցուն, ուր նրանք խոսում էին հայրենի երկրի դժոխքը հոռոմների երկնքից գերադասելու մասին, ապա նաև Օրբելյանի Ողբն ու Խաչատուրի «Ու՛ր են իշխանք մեր պանծալի» դառն խոսքերը, այն ժամանակ Աղեքսանդրի հետ կապված նրա աշխատանքները մեզ շեն թվա սոսկ դրական հետաքրքրություններ, այլ արտահայտություն ժամանակի տրամադրությունների, որոնք հանդում էին երկրի անկախության գաղափարին: «13-րդ դարի վերջերին և նույնիսկ Ղազան խանի օրով, որ բարեհաճ էր դեպի հայերը, դեռ կենդանի է եղել Հայաստանի քաղաքական անկախության գաղափարը, որ և անդրադարձվել է մեր բանաստեղծության մեջ», — գրում է Մ. Աբեղյանը Ստ. Օրբելյանի էջմիածնի Ողբի կապակցությամբ<sup>2</sup>:

Այս հիմնական գաղափարի արժարժման ամենահարմար կերպարը, թերևս հեթանոս արքա Աղեքսանդրն էր, հեռավոր պատմությունից հանված մի հերոս, որը հատկապես արևելյան ժողովուրդ-

<sup>1</sup> Ս. Չ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Ֆրիկը պատմաբանական լույսի տակ, Երևան, 1955, էջ 109—110:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին դրակոնության պատմություն, հ. 2, Երևան, 1946, էջ 222:

ների ամենասիրելի կերպարներից մեկն էր. այնքան սիրելի, որ նույնիսկ նրա ծագումը այդ փողովուրդները կապում էին Արևելքի՝ եգիպտացի քուրմ նեգտաներոսի հետ:

Հայ թագավորների մասին շկային այդչափ հետաքրքրաշարժ պատմություններ, ուր հայրենասիրությունից բացի, արտացոլվեր նրանց կենցաղային-մարդկային առաքինությունները, նրանց նվաճումները չէին տարածվում այնպիսի հեքիաթային-առասպելական երկրներ, ուր կային խոսող թռչուններ, կրիաներ, հրաշապատում անտառներ, բույսեր, կենդանիներ: Այս ամենին հազուրդ տալու ամենահարմար աղիւնքը աշխարհահռչակ Աղեքսանդրն էր... Բայց կար մի անհարմարություն: Բաղմաթիվ առաքինություններով օժտված Աղեքսանդրը քրիստոնյա չէր:

Եվ ահա խաչատուր Կեչառեցու մտահոգության հիմնական հարցերից մեկը՝ Աղեքսանդրի վարքի նախաբանության շարունակության մեջ (որ է վերջաբանը) այն է, որ կարողանա քրիստոնեական-միջնադարյան մթնոլորտում Աղեքսանդրին էլ «քրիստոնեացնել»: Նրա ջանքերի արդյունքն են 18 տնօրինականները—զուգահեռներ, որ նա տեսնում է Քրիստոսի կյանքի և Աղեքսանդրի ճակատագրի նմանօրինակ դրվագներում<sup>1</sup>: Այս համեմատություն-

<sup>1</sup> Այն բոլոր ձևազրկերը, որ Պատմության վերջում պահպանել են Կեչառեցու հիշատակարանը, ունեն նաև մի հատված դրանից առաջ, որն սկսում է «Ապենիազն աստուած բանն հայրական» բառերով: Այս անտիպ հատվածի կարևորագույն ու հետաքրքրական մասը բերում ենք ամբողջությամբ:

1. «Յայս Աղեքսանդրէ խարկանաւք եղիպտական մողին ծնաւ ի Մակեդոնիայ յՈլտմպիազայ, եւ տէրն մեր ծնաւ ի Բեզդէէմ ի Մարիամայ, աւետեօքն Գարբիէլի, առ կործանումն բանսարկուին (այս միայն մեկ ձևազրում):
2. Մա վարժեցաւ դպրութեամբն ասթենացւոց, եւ տէրն մեր հայրական իմաստութեամբ:
3. Մա տիրեաց Նդիպտոսի, եւ տէրն մեր կոչեցաւ յՆդիպտոսէ:
4. Մա յազթեաց Դարեհի, Իսկ տէրն մեր դաւրութեամբ սատանայի:
5. Մա հնազանդեցոյց զխուժագութան և զբարբարոսն, եւ տէրն մեր կոչեաց զհրէայս և զհեթանոսս:

ներում բանն այնտեղ է հասնում, որ Աստվածամայր Մարիամը զուգադրվում է «վավաշ և մոլի» Ուլիմպիադային: 13—14-րդ դարերում Կեչառեցին համեմատություններ է անում, որոնք շփոթեցնում են նույնիսկ 19-րդ դարի գործչին. «Դժբախտաբար միայն այս

6. Մա թագաւորք ի հեռաստանէ ընծայս մատուցանէին,  
եւ տեառն մերոյ՝ թագաւորքն Արարայ և Սարայ:
7. Մա դնաց յանմարդարնակ և ի դադանաւէտ աշխարհ,  
եւ տէրն մեր ելեալ ի հայրենի աթոռոյն եկեալ ի վայրենացեալ բնութիւնս մեր [բնակել ընտանեցոյց] իւր աստուածութեամբն և մարդեղութեամբն:
8. Մա ընկեց զգոռոզն զՊաւրոս,  
եւ տէրն մեր զիշխանն խաւարի:
9. Մա ըմբռնեցաւ ի Կանդակէ զըշխոյէն,  
եւ տէրն մեր կապեցաւ սիրով ի սիրտ եկեղեցոյ:
10. Մա եկն ի Բարելոն,  
Իսկ տէրն մեր ի ժողովս հրէից [և հեթանոսաց]. Յուդայ մատնեաց դնանդութեամբ:
11. Բարեկամք Աղէքսանդրու խորհեցան չարիս նմա. մատոյց Ուղղոս դեղ մահու,  
եւ տեառն մերոյ ետուն ըմպել քացախ և լեղի:
12. Նա ի ժամ մահուն ետ երկոտասան բարեկամացն երկոտասան թագաւորութիւն,  
եւ տէր մեր կարգեաց երկոտասան առաքեալսն [քարոզս աշխարհի]:
13. Նա զչորս սենեկատանս եղ սահալան արքունական դահձուցն,  
եւ տէրն մեր ետ զաւետարանն իւր և զաթոռ չորից աւետարանչացն:
14. Նա կարգեաց կտակ մահու,  
եւ տէրն մեր՝ գրեաց բանս խրատոյ և անդարձականի սլատուէր աշակերտացն:
15. Նա եղաւ յոսկիակազմ տասլանի,  
եւ տէրն մեր թաղեցաւ ի դերեզմանի:
16. Զնա բարձեալ [տարան] ի քաղաքն Սկանդարիայ,  
եւ տէրն մեր հայրական փառօք դնաց ի վերին աշխարհն լուսեղէն,  
[համբարձաւ ի վերին աշխարհն Երուսաղէմ]:
17. Նմա ելին ընդառաջ աշխարհն Եդիպտոսի, փողովք և քնարիւ զալարահրնչմամբ սղբով,  
եւ տեառն մերոյ ելին ընդառաջ բընակիւնք իմանալի աշխարհին հարցընելով թէ՛ Ո՞վ ես դու, որ դիմեալ դաս յնդովմայ:
18. Աղէքսանդրի անդր իւր սլատեկեր կազմեալ ընդ (չ)աստուածս սլատուեն չեկնացիքն,  
եւ տէրն մեր կուսական մարմնովն երկրպագի երկրաւորաց և երկնաւորաց...» ՀՄՍՌ Մատենադարան, ձեռ. № 1865, էջ 198ա:

կտորն, — գրում է Տաշյանը, — որ իւր հեղինակին մտաց լաւ վկայա-  
կան մը չէ, ապահովութեամբ Խաչատրոյ է...», իսկ քիչ վերը բերած  
18 համեմատութիւնների մասին գրում է. «Չէ տպուած (և ոչ եր-  
բէք ալ արժանի է) երկրորդը, որուն մէջ 18 համեմատութիւնք կան  
Աղեքսանգրու և Քրիստոսի գործոց»<sup>1</sup>: Տաշյանն այս համարում է  
Կեչառեցու «տկար մտքի արդյունք» և «դանդաշանք»:

Պետք է խոստովանել, որ Կեչառեցին բավականաչափ դժվա-  
բացած պետք է լինի ծայրը ծայրին հասցնելու աստծու մաքրակեն-  
ցաղ որդու և հեթանոս Աղեքսանգրի կյանքի նման դրվագները  
համեմատելիս: Անհաջող համեմատութիւնն ինքնին դրա բացա-  
հայտ արտահայտութիւնն է: Այդ է պատճառը, որ իր գործի անհա-  
ջողութիւնը գիտակցող հեղինակը տնօրինականները ավարտելուց  
անմիջապէս հետո գրում է. «Եւ արդ այսպէս համեմատեալ մի  
ստղտանիմք յոմանց, զի պատճառն վերագոյն ճառեցաք, այլ ըն-  
թեռնելով զսա յիշման արժանի լիցի ի ձէնջ Խաչատուր Կեչառե-  
ցիս...»:

Իհարկե Աղեքսանգրի պատմութեան նույնիսկ այս ձևով ներ-  
կայացնելու փաստի մեջ, բացի հասարակական որոշ խավերի քա-  
ղաքական տենչանքների արտահայտութիւնից, պետք է նկատել  
նաև աշխարհիկ կյանքի նկատմամբ եղած մեծ հետաքրքրութիւնն  
այդ ժամանակաշրջանում:

Այս համեմատութիւնների մեջ երևում է դարի ոգին. մի կող-  
մից այնտեղ արտահայտութիւն է գտել «միջնադարյան սքոլաստիկ  
մտածողութիւնը, — գրում է Մ. Արեղյանը, — մեր վարդապետները  
քրիստոնեական աստծու մարդեղութեան այսպէս ասած «տնօրինա-  
կանների» սիմբոլիկ պատկերները տեսել են ոչ միայն Հին կտակա-  
րանի մեջ, այլև Աղեքսանգրի պատմութեան... Բայց միայն այդ-  
քանը չէ Կեչառեցու գործի պատմական նշանակութիւնը, այլ դա  
միաժամանակ ցույց է տալիս, որ նույնիսկ սքոլաստիկ վարդապե-  
տըն ազատախոհ է եղել: Նա, որ ծանոթ է Պլատոնի, դուցե և ուրիշ  
փիլիսոփաների երկերին, առանց քաշվելու ազատ մեկնութիւններ  
է տալիս «Հավատով աշխատելով», այսինքն հավատալով իր ասած-  
ների ճշմարտութեանը, շմտածելով անգամ, թե դրանով պրոֆանա-  
ցիայի — սրբապղծութեան է ենթարկում իր կրօնի խորհուրդները: Եվ

<sup>1</sup> Հ. Տ ա շ յ ա ն, Ուսումնասիրութիւնք, էջ 101:

այդ անում է նա «աստվածազան հոգևոր հայրերի» ու «համշիրակ համբակների» խնդրելով՝ «յօզուտ ոմանց բանասիրաց»։ Այսպիսի ազատամտությունն, ուրեմն, լուկ անհատական շէր, այլ հատուկ էր եղել որոշ մտավորական խավի»<sup>1</sup>։

Թե ինչքան սիրված է եղել այս Պատմությունը հնում, պարզում է մեզ մի փոքր հիշատակարան.

«Ես անպիտան, ձեր ոտաց հող և մո[խ]իր, որ ոչ եմ արժանի անուանագրութեան, այլ միայն սուտ անուամբ Գրիգոր և եթ արեղայս որ ի բազմաց հետէ ցանկայի ամենայն ուրէք հարցանելով և որոնելով զպատմութեանց գրեանքն, որ ի նախկին վարդապետաց մերոց արարեալ են, ոչ կարացի գղանել, այլ ամենաբարին աստուած որ լցուցանօղն է ամենայն փափակս սրտից մարդկան. իրաւի լցոյց զփափակս սրտից իմոց, որ եկեալ ի քաղաքս Կաֆա գրիզայս արևայական գիրես աշխարհակալ բազաւորին Ալեքսանդրու յոյժ վայելուչ և զեղեցիկ շարադրանօք և ոսկեգօծ գրով ի վերա մախարարի զեղեցիկ շարադրանօք գրեալ. կարի ախորժ քեցաւ զպէս(?) նորին յաշս իմ, զերէ փոքր էր իբրև փոքրիկ ոսկանի սաղմոսարան և ես սակս փոքրութեան ցանկացայ գնել զնա դրամօք իմովք, շեղև հնար վաջառելոյ. ետ այնորիկ բազում աշխատութեամբ՝ ձեռօք իմօք գրեցի. բայց աղաչեմ զձեզ, ո՛վ ընթերցողք, սղալանաց իմոց ներումն արասջիք. զերէ անսղալ միայն աստուած է. և ես ոչ էի հմուտ արհեստին քերթողից և քերականութեան և շարադրութեան տառից, կար մեր այսքան էր, մի մեղադրէք զանպիտան զծողս, այլ եթէ կամիք սրբազրել, ըստ ձեր կամացն եղիցի»<sup>2</sup>... և այլն։

Այս պատմության վրա ստեղծվել են նորանոր մանր ու մեծ պատմություններ, որոնցից ամենահետաքրքրականը մեր Մատենադարանի № 7993 նաև № 6488 ձեռագրերում պահպանված օրինակն է։ Սա, ինչպես պատմում է գրիչը, «յարմարեալ շարադրեալ» պատմություն է։ Պահպանված է սյուժեի ամբողջականությունը հիմնականում, սակայն միանգամայն տարբերվում է նախօրինակից։

Նմուշի համար բերենք մի հատված միայն հենց սկզբից.

<sup>1</sup> Մ. Ա. Բ. և զ յ ա ն, Հայոց հին գրականութեան պատմություն, հ. 2, էջ 234—235։

<sup>2</sup> ՀՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 1781, էջ 61ա, բ։

Պատմութիւն մեծի աշխարհակային  
Աղեքսանդրի Մակեդոնացւոյ.

Իմաստունք եգիպտացւոց երկրի և  
ձովու չափոյ հասնալ և ղերկնի ասակոս  
թուեալ՝ աւանդեցին ամենայն աշխար-  
հի գօրութիւն, զկարգ և զգլխո բա-  
նից և զարհեստ գործոց:

Քանզի ասեն զՆեկտանեղոս վեր-  
ջին թագաւոր Եգիպտոսի, ըզկնի որոյ  
թագաւորութեանն պատուոյ անկաւ  
մողական կախարդութեամբ ամենեցուն  
յաղթել, մինչ զի աշխարհական տա-  
րերց հնազանդել նմա...» և այլն:

Պատմութիւն Աղեքսանդրու  
Մակեդոնացոյն ըստ № 7993  
ձեռագրի.

Կայր թագաւոր մի Փիլիպէ անուն: Եւ նոտէր ի Թեսաղոնիկէ քաղաքին՝ որ է Սելենիկ: Եւ նա շինեաց յետոյ զքաղաք Ֆիլիպեայ՝ և անուանեաց նորա Ֆիլիպուպոլիս ըստ անուան իւրոյ: Եւ ունէր թագաւորն այն թագուհի մի աննրման ղեղեցիկ և անուն նորա Օլոմպիագայ...

Գարձեալ կայր թագաւոր մի յԵգիպտոս Նեզզանիրոս անուն... Սա լուաւ զղեղեցիկութենէ Օլոմպիագայ, վասն որոյ յոյժ ցանկայր տեսանել զղեղեցիկ պատկեր նորա. և ըստմ ժամանակ խորհէր ի սրտի իւրում, թէ որպէս հասանիցէ ցանկութեանն...» և այլն:

Այս պատմությունը հիմք է դարձել նաև բազմաթիւ առակների: Այս առակների մի մասը, անպայմանորեն, ժողովրդական ստեղծագործության արդյունք է, հյուսված լեզենդար հերոսի շուրջը, բայց մյուս մասը գրքից քաղած դրվագներ են, որ առակների են վերածվել՝ ստանալով բարոյախոսական մեկնություններ:

Մառի ժողովածուում բերված են Աղեքսանդրին վերաբերող առակներ, որոնցից մենք իբրև նմուշ բերում ենք մեկը:

«Աղեքսանդր ու կրիայ.

Աղեքսանդր բազում զօրօք իջեալ ի կղզի ծովուն՝ ամենեքեան կրակ վառեցին: Եւ սկսաւ կղզին ի շարժիլ և իմացեալ ի նաւ մտին. զի կրիա էր: Զի ասեն իմաստասերք, թէ յաշխարհս երեք կենդանի կայ, որ քանի շատ ապրի, մեծանայ. մեկ կրիայն, մեկ՝ օձն, մեկ՝ ձուկն, որ վիշապ լինի»<sup>1</sup>:

Քիչ չեն նաև այն առակները, որոնք Աղեքսանդրի անունը չեն կրում, բայց ստեղծված են այս պատմության, հատկապես Աղեքսանդրի ճանապարհորդական նկարագրությունների, հիման վրա: Արանց նյութը մեծ մասամբ բուսական և կենդանական աշխարհն

<sup>1</sup> Ն. Մ ա ու, Ժողովածոյը աստիաց Վարդանայ, մ. 111, էջ 205—207, նաև 215:



է՛ անօրինակ թռչուններն ու ձկները, ծառերն ու ծաղիկները: Ի միջի ալոց ասենք, որ բոս երևույթին նկարիչներն էլ հատկապես այս մասերով են ոգևորվել. հեքիաթային բովանդակությունը անսպառ ազդյուր է եղել նրանց ստեղծագործական երևակայության համար, որոնք պատմությունը զարգարել են շեղած ու չսոված պատկերներով: Այս պատկերները երբեմն այնքան անըմբռնելի են եղել, որ ստիպել են գրիչներին ու ծաղկողներին բացահայտել պատկերների էությունը այսպես.

Այս ծառքս ի ջուրն աճողական  
Չկա ճար կարել ձեռօք մարդկան:

Կամ թե՛

Այս ազգ ձկան հրով շեփին  
Այլ ցուրտ ջրով խաշեալ լինին:

Եվ կամ՝

Այս են հսկայքն վայրենի  
Որ սնուցեալ են անառի

ու նման բազմաթիվ օրինակներ:

Շատ կարելի է խոսել Աղեքսանդրի պատմության և նրա հետ կապված դանազան երևույթների մասին, բայց սա առանձին տքնաջան ուսումնասիրության առարկա է և առաջժամ մեր նպատակից դուրս: Բավականանա՞նք ասելով, որ այս պատմությունը հուզել է նաև մեր միջնադարյան բանաստեղծներին: Շատերն են նրանցից ոտանավոր-կաֆաներ գրել Պատմության առանձին դիպվածներին՝ զուգահեռ, բայց ամենից ավելի՝ գրանցով զբաղվել են Գրիգորիա Աղթամարցին, Զաքարիա Գնունյաց եպիսկոպոսը և Հովասափ Սեբաստացին, որոնք ճոխացրել են Պատմությունը կաֆաներով՝ յուրաքանչյուրն իր ընկալման, ճաշակի և տաղանդի համեմատ:

Բայց ամենից ավելի Աղեքսանդրի պատմության կաֆաները դարձյալ կասվում են հաշատուր Կեչառեցու անվան հետ:

\* \* \*

Առաջին հանգամանքը, որ աչքի է զարնում Աղեքսանդրի պատմության ուսումնասիրությունից, ձեռագրերի արտակարգ զանազանությունն է: Զանազանություն ոչ թե պատմության շա-

քաղրանքի մեջ, այլ այնտեղ տեղադրված կաֆաների քանակի, լեզվի, շափի, ոճի ու տեղի առումով: Ոչ մի ձեռագիր նման չէ մյուսին: Տաշյանը Վենետիկի ու Վիեննայի, նաև ընդհանրապես իր օգտագործած Աղեքսանդրի պատմության ձեռագրերի մասին գրում է. «Դժվարավ կրնան երկու ձեռագիրք գտնվիլ, որ երգոցս կարգին, տեղվույն, շափին և այլ հանգամանաց լիուլի միարանություն ցուցընեն»<sup>1</sup>:

Նույնը դիտվում է նաև մեր Մատենադարանի 21 ձեռագրերում: Տարբերութունները մի քանի կարգի են:

1. Միևնույն կաֆան, որ կա համարյա բոլոր բնագրերում, տարբեր ձեռագրերում տարբեր տեղեր են ընկած, այնպես որ կաֆաները շատ հաճախ չեն առնչվում բնագրերին և նրա հետ մի ամբողջութուն չեն կազմում:

2. Միևնույն ձեռագրի մեջ եղած կաֆաները տաղաչափորեն բազմազան են:

3. Խիստ տարբերութուն կա միևնույն ձեռագրերում, երբեմն իրար հաջորդող, երկու կամ ավելի բտանավորների լեզվի մեջ: Կան գրաբարին մոտ, միջին հայերենով, բարբառախառն, նաև դրական լեզվով գրված կաֆաներ:

4. Միևնույն նյութի կամ դիպվածի մասին միևնույն ձեռագրում, մի էջի վրա գրված են մի քանի կաֆա, լեզվական, ոճական, տաղաչափական տարբերութուններով:

Ինչպես ճիշտ նկատել է Հ. Տաշյանը, «Այս ոտանաւորք յինքեան ամբողջ գրութիւն մը չեն կազմեր. այնպէս որ, եթէ քովէ քով քերվին անկապ և շատ անգամ անիմանալի կը մնան»<sup>2</sup>:

<sup>1</sup> Հ. Տ ա շ յ ա ն, Ուսումնասիրութիւնք, էջ 114:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 113:

Բացարձակապես այսպիսի մի հավաքածո է № 8482 ձեռագրում պահպանված կաֆաների ժողովածուն, որ Աշոտ Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաբնական լույսի տակ» աշխատության մեջ դիտվել է իրրե մի ընդարձակ պոնմ: Մինչդեռ այնտեղ ի մի են հավաքված Աղեքսանդրի պատմության որևէ տեքստից առանձնացված կաֆաներ, որ նշված են լուսանցքներում «ԿՖ» բառերով. նրանցից մի քանիսի կողքին (էջ 230բ, 247բ, 250ա, 252ա) ուղղակի նշված է «Գրգր», որ նշանակում է, թե դրանք Գրիգորի հօքինածն են: Ամենաբնորոշն այն է այդ ոտանավորների համար, որ նրանց մեջ կան նույնիսկ նկարների բացատրութուններ, հրահանգներ նկարչին, տարբեր հեղինակների երկերից անջատված կտորներ, քառյակներ և այլն:

Այս տարբերութիւնները միայն մի բան են ապացուցում, որ կաֆաները դրված են տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակների կողմից, հետևաբար և տարբեր լեզու, ոճ, բնույթ ունեն: Այդ են հաստատում կաֆաների կողքին երբևմն նշված «Զք», որ նշանակում է Զաքարիա, «Գրգր»՝ Գրիգոր, «Խշ»՝ Խաչատուր անունները, որոնք վկայում են մի շարք հեղինակների առկայութեան մասին: Այս նշումները ապացուցում են, որ կաֆաները տարբեր հեղինակների են պատկանում:

Ձեռագրերում պահպանված բազմազան ու բազմաթիւ կաֆաների ուսումնասիրութիւնը ընդհանրապես տարբեր հեղինակների առկայութիւնը ապացուցելով, հնարավորութիւն չի տալիս վերականգնել առանձին կաֆաների հեղինակներին: Չնայած ձեռագրերի լուսանցքներում, թեև ոչ հաճախ, նշվում են անուններ, բայց սրանք հավաստի չեն, մեծ մասամբ անվստահելի են և ոչ ճշգրիտ: Նույն կաֆան ձեռագրերում տարբեր հեղինակների է վերագրվում. այսպես. «Ազդեցէ՛ք ի տուն պարսից» առղով սկսվող կաֆան ըստ Մատենադարանի № 5472 ձեռագրի Խաչատուրինն է, իսկ ըստ № 8003 ձեռագրի՝ Գրիգորինը: Նույնիսկ պատահում է, որ մի ձեռագրում միևնույն կաֆան կրկնվում է մեկ իրրև անհեղինակ, մեկ իրրև որևէ հեղինակի գործ: Պատահում են և արտառոց դեպքեր: № 6451 ձեռագրի 185 էջի լուսանցքում երեք տեղ նշված է «Գրգր», որ նշանակում է, թե երեք կաֆան էլ Գրիգորինն են. այնինչ նրանցից միայն մեկի դիմաց կաֆա կա. մնացած երկու նշումի դիմաց ընկած է սոսկ Պատմութեան արձակ տեքստը:

Սրանք գրչութեան հետ կապված սովորական աղավաղումներ են, որ հատուկ են ձեռագրերին, այն էլ այնպիսի մի պատմութեան մեջ, ինչպիսին է Աղեքսանդրի վարքը: Այս պայմաններում, իհարկե, դժվար է որոշակի խոսք ասել ամեն մի կաֆայի հեղինակի մասին: Բացառութիւն կազմում են կաֆաներում հանդիպող երկու ոտանավոր, որտեղ նշում կա հեղինակի մասին. երկու հատվածում էլ հիշատակվում է Խաչատուր Կեչառեցու անունը: Սրանցից առաջինը մի շարք ձեռագրերում հանդիպող հետևյալ հատվածն է.

Առ ձեզ պաղատանք ընկնիմ  
Ընթերցողք զբոցս ի լրման  
դԿեչառեցիս տկար

Արարէք յիշման զիս արժան,  
Որ ոտանաւոր զամէն  
Առաջի զինչ ի սմա որ կան.  
Ազատ 'ւ իշխանաց ամէն,  
Այլք որք են արքայք պատուական<sup>1</sup>.

### Երկրորդը՝

Ոչ հիանայ ընդ վազն արի  
Քաջազնաբար յափն գետի,  
Այլ զներբողեան Հոմերոնի  
Բաղկացական բան դովեստի:  
Այսպէս և դո՛ւ առ ի մըտի  
Ծոյլ և ծանակ Կեչառեցի<sup>2</sup>:

Բերված երկու հատվածներն էլ կաֆայի քիչ են նման: Առաջինը որոշակի հիշատակարան է, իսկ երկրորդն էլ ինչ որ զուգադրություն մի բանի հետ, որ ավարտվում է «Այսպէս և դո՛ւ առ ի մըտի...» բառերով: Հավանորեն ձևագրելու համար հանդիպող այս կիսատ-պոատ տողերն են, որ Կեչառեցուն բոլոր կաֆաների հեղինակ ճանաչելու պատճառ են հանդիսացել:

Եթե այս հատվածները մեզ իրավունք չեն տալիս Կեչառեցուն բոլոր կաֆաների հեղինակ ճանաչելու, գոնե թելադրում են վստահորեն նրան կապել կաֆաներին առնչվող ինչ որ գործի հետ: Մեր ձևագրերը, բարեբախտաբար, հնարավորություն ընձեռում են բացելու կաֆաների առեղծվածային կծիկը, եթե ոչ ամբողջությամբ, ապա առնվազն հստակորեն պատկերացնելու այն մասը, որ կազմում է Խաչատուր Կեչառեցու ժառանգությունը:

Առաջինը, մեր Մատենագարանի № 7993 ձևագիրն է, որ Սուս-Կալիսթենեսի Աղէքսանդրի պատմությունը տալիս է համառոտաժ, շարադրելով նրա բովանդակության հիմնական մոմենտները իրրև հեքիաթ կամ ժողովրդական մի զրույց: Լինելով բացահայտորեն Կալիսթենեսի պատմության վերաշարադրությունը, սա միանգամայն տարբեր է թե՛ լեզվով, թե՛ ոճով, թե՛ կառուցվածքով ու ծավալով: Այս պատմությունը նույնպես ունի կաֆաներ<sup>3</sup>, միայն թե այստեղ

<sup>1</sup> ՀՄՍՌ Մատենագարան, ձև. № 3387, էջ 338, № 7709, էջ 218ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 98ա:

<sup>3</sup> Այս կաֆաները զրված են կարմիր թանաքով, ի տարբերություն տեքստի սև թանաքի:

կաֆաները տաղաչափորեն համընկնում են միմյանց, ծայրն ի ծայր  
զրված են 7—8 հայրենների շափով, միևնույն միջին հայերենով և  
սրոշ ամբողջական պատմության տպավորություն են թողնում:

Հետաքրքրական է, որ այստեղ եղած բոլոր կաֆաները կարելի  
է գտնել Աղեքսանդրի պատմության մյուս ձեռագրերի մեջ էլ, միայն  
ցրված, խառնված նրիշ շափերով ու լեզվով գրված կաֆաների հետ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ձեռագրի հիշա-  
տակարանը, որը որոշ տվյալներ է տալիս այդ ձեռագրում մեջբեր-  
ված կաֆաների ծագման մասին.

«Արդ կատարեցաւ պատմութիւնս Աղեքսանդր տիեզերակալ հը-  
զօր և անյաղթ թագաւորին՝ որդւոյն Փիլիպոսի արքային Մակեդոնա-  
ցւոյ, — գրված է հիշատակարանում, — ձեռամբ յոգնամեղ և յետնեալ  
գրչիս, Ներսէս իրիցուս Մեսրոբեանց. Զոր վաղուց հետէ ցանկայի  
պատմութեանս և ոչ կարէի գտանել ըստուգիւ. ոչ թէ վասն անձինս  
իմոյ յուսման, այլ վասն մանկանց յեկեղեցւոյ. զի մեք բազում  
անգամ լուեալ էաք ի այլազգեաց զբրոց պատմութենէ և ոչ յազգիս  
մերոյ: Բայց արդ, եղև զի եկն առ մեղ հիւրաբար Տէր Անդրէաս արհ-  
եպիսկոպոսն Պոլտանայ երկրին. և նայ զայս կարմիր տըներ  
ոտանաւորես ուսեալ էր ի մանկութեան իւրում. և ի բերան սերտ  
ունէր, զոր և մեր տեսեալ և լուեալ ուրախացաք հոգւով. ըստ այնմ  
զոր ասէ՝ Որ խնդրէ գտանէ, որ հայցէ առնու, կամ զԴաւթեան բա-  
նին, որ ասէ՝ Զկամս երկիւղացած իւրոյ առնէ տէր: Նոյնպէս և մե-  
ղաւորս զոր խնդրէի զըսայ. և սիրով ընկալեալ գրեցի զկարմիր  
ոտանաւոր կաֆայես ի վերա փարեզիս: Եւ զսև գծագրեալքն իմում  
տկարուրեանս զոր լուեալ էի այլոց գրոց նայ յարմարեալս շարա-  
դրեցի ի վերայ փարեզի, առ ի ուսումն մանկանց Սիրովնի: Բայց  
ազաչեմ որ չի մեղադրէք սըղալանաց մերոց. զի կար մեր այսքան  
էր. ըստ կարեաց մերոց այսքանս հազիւ յարմարեցաք. և Քրիստոսի  
փառք»:

Հիշատակարանն ուշագրաւ է մի քանի առումով: Նախ դրանից  
երևում է, որ ձեռագրում տեղավորված ոտանավորները միմյանցից  
անկախ անջատ-անջատ կաֆաներ չեն, այլ որոշ գծով միմյանց  
կապվող ոտանավորներ, որ անգիր ասել է Պոլտանա Անդրեաս  
արքեպիսկոպոսը: Երկրորդ, որ այդ կաֆաները մասնատել է միայն  
զրիջն ինքը և տեղադրել տեքստում:

Պուլտանա արքեպիսկոպոսի «կարմիր տներն» անգիր իմանալը նույնպես ուշադրավ է այն իմաստով, որ նա մանկուց ուսել է ինչ որ միատիպ չափածո պատմություն, որովհետև չի կարելի որևէ կերպ ենթադրել, որ նա անգիր իմացել է Աղեքսանդրի պատմության մեջ եղած խառն ու փնթոր բոլոր կաֆաները և իրեն դիմելուց հետո միայն արտասանել է ընտրովի նույնաչափ, նույն լեզվով ու բովանդակությամբ որոշ միասնականություն ունեցող կաֆաներ:

Որ եղել է Աղեքսանդրի չափածո մի մոտավոր պատմություն, ապացուցում է և մեր Մատենադարանի № 5623 ձեռագիրը, որ մի տաղարան է. այնտեղ մանր տաղերից ու երգերից զատ կան մի քանի բավական երկար ոտանավոր պատմություններ, պոեմատիպ ստեղծագործություններ, զրված զանազան պատմությունների ու հերոսների շուրջը (Բարաղամի և Հովասափի, Մարխա վաճառակահի ու Կոսբարի և այլոց): Սրանցից անմիջապես հետո գալիս է նաև Աղեքսանդր Մակեդոնացու մասին մի ոտանավոր պատմություն, որի վերնագիրն է «Տաղ Մեծին Աղեքսանդրի»: Սկսած 5-րդ տնից այս Տաղը հիմնականում համընկնում է № 7993 ձեռագրով Պուլտանա արքեպիսկոպոսի անգիր ասած ոտանավորին:

Այնուհետև, Աղեքսանդրի պատմության մի այլ ձեռագիր № 5632, որ լեցուն է բազմազան ու տարբեր կաֆաներով, ձեռագրի վերջում պահպանում է նաև Աղեքսանդրի շուրջ հյուսված ոտանավորների մի շարք, նույնպես թերի: Այս ոտանավորը նույնպես բազմաթիվ հատվածներով համընկնում է մեր ձեռքի տակ եղած Աղեքսանդրի Տաղին և Պուլտանայ եպիսկոպոսի անգիր իմացած «կարմիր տներ» կաֆաներին<sup>1</sup>:

<sup>1</sup> Աղեքսանդրի պատմության մի ձեռագիր կա Վենետիկում, որի նկարագիրը բերում է Հ. Տաշյանը. «Վենետիկյ թ. 1390 չունի բնագրին մեջ այս ոտանաւորները (խոսքը տարբեր ու բազմատեսակ կաֆաների մասին է—Մ. Ա.), սակայն նաև այս մասամբ միայն կրնանք ըսել, վասնզի 'Ի վերջ դրոցն այսպէս ունի. Մնացեալ կաֆայքն սորա են, զորս յետոյ գտեալ ատաւնօր գրեցար. և դնէ ոտանաւորս ինչ կեչառեցւոյն» (Տաշյան, Ուսումն., 113): Տաշյանի նկարագրած ձեռագրում, հետևաբար, նույնպես բուն տեքստում կաֆաներ չկային, այլ Պատմության վերջում միայն կցված ոտանավորներ, որոնց մեջ հիշատակվում է կեչառեցու անունը: Եվ ինչպես երևում է դրչի հիշատակարանից, զրանք հետո դռնված և տեղադրված ոտանավորներ և ն:

Վերոհիշյալ №№ 7993, 5623 ձեռագրերի հիման վրա հնարավոր եղավ մոտավորապես վերականգնել այդ ոտանավոր-պատմությունը կամ, ինչպես ձեռագրերում է անվանված՝ Աղեքսանդրի Տաղը: Իհարկե այդ վերականգնվածը չի կարելի համարել նախնական ճշտված տեքստը, քանի որ հատկապես սկզբի մասերում բավականաչափ խճողված են քառյակները, բայց, այնուամենայնիվ առայժմ այս ձեռագրերով վերականգնվում է Աղեքսանդրի կյանքի ոտանավոր պատմության մոտավոր կմախքը:

Ձեռագրերը պահել են և այդ ոտանավոր պատմության հեղինակի անունը:

Այսպես, ՀՄՍՌ Մատենադարանի № 3668 ձեռագրում (որն ամենավաղ ընդօրինակված ձեռագիրն է Աղեքսանդրի պատմության) հանդիպում ենք «ՅԱղեքսանդրի գրոցն» վերնագրի տակ արբվող՝ 30 տուն ոտանավորի, որը ավելի ամբողջական մի հատված է մեր կազմած տեքստից: «ՅԱղեքսանդրի գրոցն» բառերի կողքին ավելացված է. «Խաչատուր վարդապետի Կեչառեցոյ ասացեալ»:

Ինչպես տեսնում ենք, Խաչատուր Կեչառեցու անունը, իբրև Աղեքսանդրի ոտանավոր պատմության հեղինակ, պահպանվել է մի դեպքում վերնագրում, իսկ մի այլ ձեռագրում ոտանավորի հիշատակարանում.

Առ ձեզ պաղատանք ընկնեմ

Ընթերցողք գրբոցս ի լրման,

ԶԿեչառեցիս տկար

Արարէք յիշման զիս արժան... և այլն:

Ձեռագրական այս ավյալները մեզ իրավունք են տալիս ենթադրելու, թե Սուտ-Կալիսթենեսի Աղեքսանդրի պատմության հենքի վրա 13—14-րդ դարերում ստեղծվել է մի ոտանավոր-պատմություն, որի հեղինակը եղել է Խաչատուր Կեչառեցին:

Այս հաստատում է Կեչառեցին ինքն իր հիշատակարանով, որի մանրամասն վերլուծման մեջ Տաշյանը մութ մնացած կետեր էր տեսնում: Կեչառեցու ոտանավոր-պատմության գաղափարն ընդունելուց հետո միայն հասկանալի են դառնում այդ մութ կետերը:

Տաշյանը գտնում է, որ Կեչառեցին Պատմության տեքստը անազարտ է պահել, բայց միևնույն ժամանակ շէր կարողանում իր հա-

մար պարզել հիշատակարանում գործածած նրա մի քանի բառը: Բերենք հիշատակարանի այդ մասերը և փորձենք պարզել.

«Իսկ զայս Պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու, զոր գրեցի իմով ձեռամբս, սակս աւգտի ինձ և այլ համբակաց, որք կամին աւգտիլ յԱղեքսանդրէ. Զի թէպէտ էր ի հին և յընտիր արինակէ այլ անյարմար և շաղփաղփի, վասն որոյ զտեալ և ֆերեալ ֆերողորէն արարի անխոտորնակ ճանապարհ, զոր ի յընթեռնուլն իմասցին պուեաիկոսք և քարտուղարք»:

Այսինքն՝ գրչության աշխատանքներում սրբապրելով ընդօրինակվող ձեռագրի «շաղփաղփի և անյարմար» տեղերը, զտելով ձեռագիրը դրանցից, համեմատելով թերևս հին հեթանոսական զրույցներն Աղեքսանդրի մասին ձեռքի տակ եղած պատմության հետ, քանի որ «դհեթանոսական գրեանքն անմխաբան են և շաղփաղփի քանիւ որակացեալ», «քերել է քերողորէն», որ ըստ Տաշյանի և Հայկազյան բառարանի հոմանիշ է «քերթել» բառին, այսինքն չափածոյի է վերածել այն, որի արժեքը թող իմանան ու դնահատեն «պուեաիկոսներն ու քարտուղարները»՝ բանաստեղծները: Իհարկե այս հիշատակարանը չի բացառում նաև 4 ողբ-բարառությունների նրան պատկանելը, որոնք բանաստեղծական ավելի բարձրարվեստ ստեղծագործություններ են, բայց հավանականն, իհարկե, այն է, որ հիշատակարանի վերոհիշյալ խոսքերը ավելի կարող են վերաբերել Աղեքսանդրի ոտանավոր պատմությանը: Խնդիրն ավելի պարզ պատկերացնելու համար ասենք հետևյալը: Զեռագրերում պահպանված Տաղ Մեծին Աղեքսանդրի վերնագիրն ու վերը նշված փաստերը չենք բերում անսպաճմանորեն պնդելու ծայրից-ծայր մի ամբողջական պոեմի գոյությունը, բայց առնվազն մի քանի հատվածական մասերի: Այս ամբողջական մասերում գրեթե չկան մյուս կաֆաների վերացական դատողություններն ու խոհերը: Սրանք սյուժետային գիծ ունեցող ամբողջական դրվագներ են, որոնք միանում են հիմնական հերոսի՝ Աղեքսանդրի կերպարով: Զմոռանանք նշել, որ հենց բուն Աղեքսանդրի պատմության մեջ էլ զրույցի սյուժետային գիծը հետևողական չէ. բազմաթիվ տեղերում այն ընդհատված է, առանձին դրվագների տպավորություն է թողնում, այնպես որ Աղեքսանդրի ոտանավորի կցկտուրությունը կարող է բնագրից առաջացած լինել, մանավանդ որ դրանք մեղ հասել են դարերի ընթացքում. բավականաչափ խճողված ձեռագրերի միջոցով: Անշուշտ ավելի փաս-



տեր են հարկավոր այս ենթադրություններից մեկն ու մեկն անա-  
ռարկելիորեն ընդունելու համար, բայց առայժմ եղած փաստերը  
մեզ բերում են հետևյալ եզրակացության.

ա) Խաչատուր Կեչառեցին ստեղծել է Աղեքսանդրի ոտանավոր  
պատմություն, որ ձեռագրերում անվանված է Աղեքսանդրի Տաղ:

բ) Կարող է պատահել, որ Աղեքսանդրի Տաղը սկզբից մինչև  
վերջ գրված մի ամբողջական գործ չէ, բայց առնվազն մեծ հատ-  
վածներ կազմող սյուժետային ստեղծագործություն, որ շի կարե-  
լի նույնացնել քառյակ կամ ութնյակ կազմող խոհա-խրատական  
կաֆաների հետ:

գ) Կեչառեցին է Աղեքսանդրի պատմության մեջ ոտանավոր  
պատմության հատվածների առաջին կիրառողը, քանի որ իր Տաղի  
վերջում որոշակի հայտնում է, որ Պատմության մեջ եղող ոտանա-  
վորների հեղինակն ինքն է և խնդրում է ընթերցողներից հիշման  
արժանի անելու իրեն.

Առ ձեզ պաղատանք ընկնեմ

Ընթերցողք զըրոցս ի լման

ԸզԿեչառեցի մուլարս

Արարէք յիշման զիս արժան,

Որ ոտանաւոր ամէն

Ասացի, զինչ ի սմայ որ կան... և այլն:

Վերջին խոսքերն ապացույց են այն բանի, որ Խաչատուրից  
առաջ Աղեքսանդրի պատմության մեջ ոտանավորներ չեն եղել, ապա  
թե ոչ, նա չէր ասի «առանաւոր ամէն... զինչ ի սմայ որ կան». այս  
նշանակում է Աղեքսանդրի պատմության մեջ ոտանավոր հատված-  
ների առաջին կիրառողը եղել է Խաչատուր Կեչառեցին<sup>1</sup>, որը ժամա-  
նակակիցներին մատչելի դարձնելու համար պատմությունը, ոչ  
յուրաքանչյուր գլխի, այլ սյուժետային իմաստով մի ամբողջական

1 Գերմանացի հայագետ Հ. Յախերի կարծիքով Խաչատուր Կեչառեցին  
է եղել Աղեքսանդրի պատմության հայերեն բնագիրը հատվածների բաժա-  
նողը (մոտ 286), քանի որ հոլանդերը բաժանված է եղել ընդամենը երեք  
մասի (Տե՛ս Հ. Տաշյան, Ուսումնասիրությունք, էջ 96):

հատվածի բովանդակությունը ոտանավորով՝ յուրովի հասցրել է ընթերցողներին<sup>1</sup>:

Հետագայում այս ոտանավոր պատմության մեծ հատվածները (եթե սկզբնապես ամբողջական չեն եղել) Պատմությունից անկախ արտագրվել և Աղեքսանդրի Տաղն են կազմել. իսկ մյուս կողմից էլ, ընդհակառակը, մասնատվելով տեղագրվել են պատմության տարբեր մասերում:

Մի անգամ, որ չափածո խոսք է մտել Պատմության մեջ, այնուհետև այդ շավիղ է բացել հետագա բանաստեղծների համար: Պատմությունն աճել ու հարստացել է նորանոր կաֆաներով: Այն-

<sup>1</sup> Շատ սրամիտ է նկատել Մ. Արեղյանը, թե կեչառեցին, որ հիշատակարանի մի մասում հպարտորեն էր ներկայացնում իր աշխատանքը, որով նա անխոտորնակ ճանապարհ էր հարթել իր հեղինակություն համար, ոտանավոր մի հատվածում իրեն անվանում է ծաղր ու ծանակի առարկա: «Հետաքրքիր է, — գրում է Արեղյանը, — թե ո՞ր դեպքում է կեչառեցին իրեն անվանում «ծոյլ և ծանակ»: Երբ Ալեքսանդրը տեսնում է ոչ շատ լայն Սկամանդրոս գետը՝ որի վրայով ցատկել է Աբիլլեսն, բոս Իլիականի, նա (Ալեքսանդրը) Աբիլլեսի արածը մեծ բան չի համարում և երանի է տալիս Աբիլլեսին, որ արժանացել է Հոմերոսի գովքին: Այն ժամանակ մի քերթող ասում է նրան. «Ալեքսանդր, քան զՀոմերոս... լաւ ևս զբեցուք մեք զարարս քո»: Ալեքսանդրը պատասխանում է նրան. «Ըղձալի է ինձ ի Հոմերոսի պատմութեանն Թերսիտէս գոլ, քան ձերդ՝ Աբիլլես»: Կեչառեցին Աղեքսանդրի պատմության այս կտորի առթիվ գրել է.

Ոչ հիանայ ընդ վաղն արի  
Քաջագնարար յափըն դետի  
Այլ գներբողեան Հոմերոնի  
Բաղկացական բան զովեստի:  
Այսպէս և գո՛ւ առ ի մըտի  
Ծոյլ և ծանակ կեչառեցի:

Առաջին շորս տողի մեջ անփոփ դրված է կալիսթենեսի պատմածը. հետո մեր բանաստեղծն ավելացրել է վերջին երկու տողը: Ինչ է այս երկու տողի իմաստը:— Անպայման այն, որ ինքն էլ չպիտի զարմանա Աբիլլեսի ցատկելու (վաղն) վրա, այլ Հոմերոսի ներբողի, գովեստի վրա: Ապա թե Ալեքսանդրի ծաղրն իր արարքները գովել ցանկացող քերթողի վերաբերմամբ՝ համեմատութամբ Հոմերոսի գործի՝ վերաբերում է նաև իրեն՝ կեչառեցուն, որ ոտանավորներ է գրում Ալեքսանդրի գործերի վրա: Պարզ է, որ կեչառեցին մեծ կարծիք չունի իր քերթվածների վերաբերմամբ, բայց այսպես «ծաղր ու ծանակ» է համարում իրեն՝ համեմատութամբ Հոմերոսի, որին հավասարվելը երբեք չէր էլ անցել նրա մտքից» (Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, էջ 539—540):

տեղ են մտել անգամ այս պատմութեանը շառնչվող կաֆաներ, նկարների բացատրական քառյակներ, կաֆաներ՝ Պղնձի քաղաքի պատմութունից, ոտանավորների բեկորներ Ֆրիկից, Հովհաննես Պլուզից, Քուշակին վերագրվող «Հայրեններից»: Այսպիսով Աղեքսանդրի պատմութեան բնագիրը անաղարտ մնալով հանդերձ կրել է անձանաշելի փոփոխութուններ:

Հետագայում Նախադրութունն իր բարդութեան պատճառով միանգամայն անտեսվել է գրիչների կողմից և հետզհետե դուրս մղվել: Չնույնպէս համեմատաբար քիչ մասից դուրս է մնացել նաև Վերջաբանը, որն այնուամենայնիվ պահպանվել է իբրև պատմութեան մեկնութուն: Աղեքսանդրի Տաղը մատչելի լինելով տարածվում է, ասվում, գուցե և երգվում: Հետագայի գրիչները, արևելյան սովորույթի համեմատ արձակ պատմութեան մեջ են մտցնում ոտանավոր պատմութեան առանձին հատվածները իրենց ցանկացած մասում, որոնք բնագրի մեջ մտնելով, կաֆաների տպավորութուն են թողնում:

Այս ճակատագիրն է ապրել Սուտ-Կալիսթենեսի Աղեքսանդրի պատմութունը Խաչատուր Կեչառեցու գրական և գեղարվեստական մշակումներից հետո, և սրանով է Խաչատուր Կեչառեցու անունը կապվել Աղեքսանդրի պատմութեան և կաֆաների հետ:

Ամբողջութեամբ վերցրած Խաչատուր Կեչառեցու բազմակողմանի առնչութունը Աղեքսանդրի պատմութեան և կաֆաների հետ մեզ ներկայանում է հետևյալ կերպ. ենթարկվելով ժամանակի հասարակական որոշ խմբավորումների տրամադրութուններին, Աղեքսանդրին իբրև «Տիպ և գաղափար արքայից» ներկայացնելու միտումով, Կեչառեցին իբրև գրիչ արտադրում է Սուտ-Կալիսթենեսի ողջ պատմութունը, թերևս նաև նկարազարդելով ու ծաղկազարդելով ձեռագիրը: Ժամանակի հետաքրքրասեր և աշխարհիկ պատմութունների ծարավի ընթերցողներին գաղափարական ուղղութուն տալու նպատակով գրում է իր Նախադրութունը, այնուհետև 18 անօրինականներով «քրիստոնեացնում» Աղեքսանդրին: Այս ամենից հետո իբրև բանաստեղծ ոգևորված Աղեքսանդրի դյուցազնական կերպարով, գրում է իր Աղեքսանդրի Տաղը կամ, առնվազն, մեծագրվագ հատվածներ այդ հերոսական պատմութունից, որոնք պատմութեան մեջ են մտել, ակունք հանդիսանալով նորանոր կաֆաների: Անկախ այն բանից, թե ընդունելի է այս հատվածների ամբողջականութուն-

նը, թե անհամարելի, այն հնարավորություն է տալիս Աղեքսանդրի պատմության մեջ ցրված բազմազան կաֆաներից առանձնացնելու հաշատուր Կեչառեցու մասը, որով և հեշտացնում է հետագա ուսումնասիրությունը զատելու Ջաքարիա Գնունեաց եպիսկոպոսի և Գրիգոր Աղթամարցու կաֆաների շարքը:

Խաշատուր Կեչառեցու զրական ստեղծագործություններից է «Վասն գալստեան աստուծոյ առ մարդիկ» աշխատությունը, որը մեր պարականոն զրականության հետաքրքրական էջերից մեկն է և իր հատկանիշներով կարող է Կեչառեցու գեղարվեստական արձակ ստեղծագործությունը համարվել: Սա մի շարք ձեռագրերում պահպանված (№ № 2154 և 6995) մոզերի գալստյան պատմությունն է հետևյալ վերնագրով՝ «Խաշատուր Կեչառեցոյ ասացեալ ի ստոյգ օրինակէ. վասն գալստեան աստուծոյ առ մարդիկ, կուսածին թագաւորին Յիսուսի Քրիստոսի աստուծոյ մերոյ»<sup>1</sup>:

Վերնագիրն արդեն ասում է գործի բովանդակությունը: Սա Քրիստոսի ծննդյան պատմությունն է, հիմնականում մոզերի գալուստը Եգիպտոս, ապա Բեթղեհեմ: Ավետարանական այս նյութերը հաճախ են օգտագործվել մեր հեղինակների կողմից, մեծ մասամբ շափածո գործերի աղբյուր հանդիսանալով: Սրանք նաև արձակ պատմությունների նյութ են ծառայել: Սակայն վերջիններս երբեմն, շատ շեղվելով եկեղեցու կանոնական, սուրբ հայրերի ընդունված գործերից, պարականոն (ապոկրիֆ) զբույցների շարքն են դասվել:

Պարականոն հրատարակված գործերում մեզ հանդիպեց մոզերի գալստյան պատմության շորս փոփոխակ միայն, շնչին տարբերություններով<sup>2</sup>:

Բարսեղ Սարգիսյանն այդ առթիվ գրած ուսումնասիրության մեջ<sup>3</sup> նշում է հինգ ձեռագիր-փոփոխակ, որոնցից երեքը նման են մի-

<sup>1</sup> Սրան հետևում են «գոթամանակն և զթագաւորն համառօտիւք» բառերը, որ Փ. Հովսեփյանին թվում է անկապ և աղավաղված տեքստի արդյունք. սակայն դա հեղինակի ժամոթությունն է, որն իրոք թագավորների և նրանց տիրակալության ժամանակները տալիս է շատ համառօտ, պարականոն գրքերի, Վարդան Պատմիչի, Սերեոսի և այլոց համեմատությամբ: Վենետիկի № 56 ձեռագրում ասված է «գոթամանակն և զթագաւորն համառօտ»:

<sup>2</sup> Թանգարան հայկական հին և նոր նախնեաց, Վենետիկ, 1898, էջ 42, 278, 284, 296:

<sup>3</sup> Հ. Բարսեղ Սարգիսյան, Երեք թագաւոր մոզերու զբույցն հայկական մատենագրութեան մէջ, Վենետիկ, 1910:

մյանց և մեր նշածներին, շորթորդը՝ որ կոչում է Կեղծ Եպիփանու հիշատակարան, որում ի միջի այլոց է պատմված մոզերի գալուստը և վերջինը՝ տարբեր բույրից, Խաչատուր Կեչառեցու օրինակը: Սակայն Հ. Բարսեղ Սարգիսյանն ուշադրութեան է առնում երեք մոզերի անունների ու էութեան հարցը՝ իր նպատակից դուրս համարելով անդրադառնալ այդ պատմութիւնների մյուս կողմերին:

Մի կողմ թողնելով ժամանակագրական և դավանաբանական այլևայլ հարցեր, որոնք կարող են մասնագետներին հետաքրքրել, ծանոթանանք այս դործի գրական-գեղարվեստական առանձնահատկութիւններին:

Նախ ասենք, որ Կեչառեցին այս դործում պահել է մոզերի գալուստյան ավետարանական պատմութեան հիմնական կորիզը միայն, լրացնելով այն իր ոճի պատկերավորութեամբ, առանձին ինքնուրույն կամ լեզենդար պատմութիւններով, անգամ նաև ոտանավորով:

Պատկերացնելու համար նրա մշակումը, համեմատենք Ավետարանի, պարականոն գրքերից մեկի և Խաչատուրի բերած միևնույն հատվածները.

Աւետարան ըստ  
Մատթէոսի  
Յայնժամ իբրև  
եաես Հերովդէս թէ խա-  
րեցաւ ի մողուց անտի,  
բարկացաւ յոյժ. և ա-  
ռաքեաց կոտորեաց զա-  
մենայն մանկունս, որ  
էին ի Բեթղեհէմ և յա-  
մենայն սահմանս նորա՝  
յերկեմենից և ի խո-  
նար՝ ըստ ժամանա-  
կին, զոր ստուգեաց ի  
մողուցն<sup>1</sup>:

Պարականոն (որից  
օգտվել է Վարդան  
պատմիչը)  
Իսկ ի դնալ մո-  
ղուցն ընդ այլ ճանա-  
պարհս յաշխարհն իւր-  
եանց, կոտորեաց Հերով-  
դէս հազար չորեք հա-  
րիւր վարսուն և եր-  
կու մանկունս յերթալն  
տեաան յԵղիստոս...<sup>2</sup>:

Խ. Կեչառեցի  
Արդ մոզքն ոչ դար-  
ձան առ Հերովդէս. զի հրա-  
ման է հրեշտակի աստու-  
ծոյ, ընդ այլ ճանապարհ  
դնացին յաշխարհս իւր-  
եանց, զոր յետոյ իմաց-  
եալ Հերովդէս զկնի Բա-  
մաց հրամայեաց կոտո-  
րել զմանկունս Բեթղեհէմի  
յերկամենից մինչև ի խո-  
նար՝, զի թերևս և ընդ  
նոսին անարգել սպանցի  
մանուկն. իսկ զահճաց  
սուր եղեալ կոտորեցին  
մանկունս Թնկի՝ (1462) և  
վարդապոյն արեամբ նոցա  
լցան փողոցք ազարակաց-  
գեղաստանեացն, նոր ծը-  
նեալ մանկան դեռարոյս  
և նորարողոջ մարտիրո-  
սօք...<sup>3</sup>:

<sup>1</sup> Աւետարան, ըստ Մատթէոսի, Բ, 16:

<sup>2</sup> Վարդան վարդապետի Հավաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 34:

<sup>3</sup> ՀՄՍԹ Մատենադարան, ձեռ. № 6995, էջ 158բ:

Սա մի օրինակ է, երբ Կեչառեցիին նյութը պատմում է քիչ ճոխացնելով, գեղարվեստորեն: Ավելի են այն զեպքերը, երբ նյութը շկա ոչ մի տեղ, այնինչ Կեչառեցիին տալիս է հատուկ մանրամասնությամբ:

Միանգամայն ինքնատիպ է, այս առումով, Բեթղեհեմի մանկանց կոտորածի մեջ հետևյալ նկարագիրը, որ մեզ չի հանդիպել ոչ մի տեղ: Երբ վաղակալոր սուրը փայլատակում էր և «դեռաբոյս և նորաբողբոջ մարտիրոսների» արյունը հոսում «գեղաստանեաց» և «ազարակաց» փողոցներով, «յայնժամ երիտասարդ կին մի, զմանուկն իւր առեալ յտենէն և բարձրացուցանէր բազկօքն ասելով. Ո՛վ կուսածին մանուկդ, յուր և կաս. ընդէ՛ր այսքան արեան և խղճի տիրանաս: Արդ, եթէ երկնաւոր ես, որպէս ասեն, օգնեա սրտաբեկ և լերդակոտոր մարցս, միջնորդութեամբ մօր քո, որ գիտէ զաղէտ մանկանն»: Կնոջ բարձրագոչ պաղատանքի պահին ասածո հրեշտակը վերացնում է մանկանը երկինք: Կուրը տանում են Հերովդեսին, «Իսկ նա ամօթալից եղեալ հրամայեաց դարձուցանել զսուրն ի պատեանս իւր»<sup>1</sup>:

Մի փոքր գիծ է այստեղ ավելացված, մի մոր աղերսագին աղոթք, որը դուրս է բերում գործը էպիկ նկարագրի սահմաններից և դարձնում մի հուզիչ պատմություն: Նրբորեն նկատած հոգեբանական ճիշտ երանգը ուժեղացնում է հատվածի դրամատիկ շունչը: Երիտասարդ կինը գիմում է Հիսուսին, որը հանդուրժում է այսքան անմեղ մանուկների կոտորածն իր համար, և խնդրում օգնել «սրտաբեկ» և «լերդակոտոր» մայրերին իր՝ Հիսուսի մոր Մարիամի միջնորդությամբ, որը գիտե «զաղէտ մանկանն»: Միայն մայրը կհասկանա մոր կսկիծը:

Այնուհետև դարձյալ ոչ մի տեղ չի պատմված Հովսեփի և Մարիամի գալը Եգիպտոս—Հերմոպոլիս, այլ այն, որ մոզերը գալիս են և, Հիսուսին տեսնելով քարայրում կամ տանը, երկրպագում են նրան: Կեչառեցիին այդ մասին պատմում է հետևյալը. «Արդարն և անսխալն Յովսէփի առ Մարիամ և զմանուկն, երթայր յաշխարհն յԵգիպտոսի, ի քաղաքն Հերմոպօլիս. և հասեալ ի դուրս, յերկորեայ ի ժամ քնամտին, տեսին ասեալ կայր. ոչ կարացին մտանել, օթեցան առ այրի կնոջ մի ազգաւ զպտի: Իսկ նորա տեսեալ

<sup>1</sup> ՀՄՍՌ Մատենադարան, ձեռ. № 6995, էջ 158բ:

զըքնադագեզն Մարիամ. զի բարձեալ ունէր զլուսանկար մանուկն առնկալաւ զնա ի գիրկս իւր, իբրև զհինօրեայ քահանայն Սիմէոն, նմանեալ մաքուրն դստերն Փանուէլի Աննայի: Հարցանէր զծերունին Յովսէփ՝ Ուատի՞ գայք կամ յումմէ՞ իցէ աննման և անգաղափար մանուկս այս, զոր շէ ոք տեսեալ ի մարդկանէ: Եւ ծերն կայր լռելեայն. և ոչ տայր պատասխանի: Իսկ օտար և անծանօթի կինն արար մեծարանս մանկանն, և լցեալ զջուրն ի կոնքըն լըւաց ըստ օրինի դորովամիտ մարցասիրաց: Եւ ապա հանեալ ի ջրոյն նորագոյն մանդլով պատեալ և գրկեալ գըգւանօք, երգս քաղցրաձայն մատուցանէր և ասէր.

Նման է մայր քո արուեսկի, և դու նման արեգական.  
Նման է մայր քո ամպոց ցողելոյ, և դու նման ծիածանի՝  
գօտոյն Նոյի.  
Նման է մայր քո եղեմական դրախտին, և դու նման  
ծառոյն կենաց:  
Նման է մայր քո ծովուն Եսերոնի, և դու նման լուսափայլ  
և ոստրածնունդ մարգարտի.  
Նման է մայր քո աւուրց դարնայնոյ, և դու նման ծաղկին  
համասպրական.  
Նման է մայր քո մեծի թագուհոյ, և դու նման որդոյն  
Դաւթի՝:

«Արդ այսքան և առաւել քան զայս երգս գովեստից մատուցանէր և տայր զմանուկն ի գիրկս մօր իւրոյ, և ըստ իւր շափոյ նոցա սեղան մատուցանէր»:

Առավոտը Հովսէփն արթնանալով շնորհակալություն է հայտնում օտար կնոջը և, Մարիամին ու մանուկ Հիսուսին առնելով, մըտնում է քաղաք:

Սա մի գեղեցիկ հյուսված պատմություն է, որի մեջ մոռացվում է համարյա կրոնական բովանդակությունը բանահյուսությունից փոխանցված առանձին դրվագների, կենցաղային որոշ նկա-

1 Այս երգն իբրև առանձին տաղ՝ «Գովասանութիւն Քրիստոսի և մօրն իւրոյ սրբուհոյ կուսին», պահպանված է ՀՍՍՌ Մատենադարանի № 737 ձեռագրում, էջ 206ա:

րագրի, գեղեցիկ պատկերների ու սճի ներքո: Աշխարհիկ կողմը մոռացնել է տալիս կրոնական բովանդակությունը:

Եթե վերցնենք այրի կնոջ Հովսեփին ու Մարիամին հյուրընկալելը, իր հնարավորությունների շափով սեղան սպասարասուելը, Հիսուսին լողացնելն ու նրա ջուրը տաշտով պարտեղ շարտելը և այլն, ապա մեր առաջ կկանգնի ոչ թե մոզերի Հիսուսին երկրպագելու ավետարանական պատմությունը, այլ ավելի մեր ժողովրդական հեքիաթներից շատերից մեկը<sup>1</sup>:

Էլ շենք խոստամ այն գեղեցիկ երգի մասին, որ հյուրընկալ կինը ասում է Հիսուսին բարուրելուց հետո խաղացնելիս. այստեղ միացած են Կեչառեցուն հասուկ պատկերավոր ոճն ու ժողովրդական գովքի երգերի ամենարնորոշ գիծը՝ համեմատությունը, նաև համեմատության համար բնության օգտագործումը: Շատ չի տարբերվում մեջ բերված գովքը ժողովրդական երգից, որ ասում է.

Թագավոր, ի՞նչ բերեմ քե՛ նման

Քո կանաչ արևուդ նման...

Էն բալասան ծաղիկն՝ որ կբացվի

Բացվի արևուդ նման...

Թագավորին ծաղիկ պիտեր ծաղկունակ,

Ծաղիկ համասփյուռ պիտեր ծաղկունակ...<sup>2</sup>

Կեչառեցու պատմածը շատ է տարբերվում ոչ միայն ավետարանի ավանդած պատմություններից, այլև պարականոն գրքերում գետեղվածներից: Գեղարվեստորեն մշակվելով, այդ պատմությունը համարյա անճանաչելի է դառել Կեչառեցու մոտ: Չենք կարող հաստատապես պնդել հավելումների անպայմանորեն Կեչառեցուն պատկանելը, բայց եթե դրանք թեկուզ ժողովրդի մեջ պատմված գրույցներ են, որ օգտագործել է Կեչառեցին, այդ էլ չափա-

<sup>1</sup> Վերոհիշյալ ամբողջ գրույցի բանահյուսական մի գրառում սղագրված է Ն. Լալայանի «Բորչալուի դաւառ» ուսումնասիրության մեջ (Աղագրական հանդէս, 1903 թ., 10-րդ դիրք, էջ 216): «Յեւոյ Մարիամը վերցրել է Յիսուս երեխային և գնացել մի պառաւի տուն իջեանել: Պառաւը սիրով ջուր է տաքացրել և բերել, երեխային լողացրել. և երբ տարել է տաշտի ջուրը թափելու՝ տեսել է, որ թանձրացել, ոսկի է կտրել»:

<sup>2</sup> «Աղագրական հանդէս», 1901, 8—9-րդ դիրք, էջ 173:



զանց հետաքրքրական է իր դարում և կրոնական մի պատմութեան մեջ:

Կա մի հետաքրքրական փաստ, որ նկատել է Հ. Տաշյանը<sup>1</sup>: Նույն՝ մոզերի գալստյան պատմութեան համար Կեչառեցին օգտուել է Աղեքսանդր Մակեդոնացու պատմութեանից, մի ամբողջ հատված մեջ բերելով այստեղից. ահա այդ հատվածը.

Աղեքս. (է էջ 5, 1—4)

Ձեռ. 6995, էջ 161

«Քանզի են երազադէտք, նշանալոյժք, երազադատք, ամամիջադէտք և լախանադէտք, ծննդաբանք, բախտադիւտք, ճակատագիրք և որ կոչին մողք, ընդ որովք ամենայն դիւտական հարցմունք անկեսլ դնին»:

«Ժողովեցան... երազագէտք, նշանալոյժք, աստեղագատք, ամովնագէտք, լախանատեսք, ձննդաբանք, բախտագիւտք, ճակատագիրք մագակիւսէ, ըռամախօսք»:

Աստծու որդու գալուստը Մակեդոնացի Աղեքսանդրի պատմութեան հատվածներով:

Քրիստոնեական ավետարանը հեթանոսական արդուզարդով:

Չսկտք է կարծել, որ սա Կեչառեցու աչքից վրիպած, անգիտակցորեն մեջ բերված մի հատված է: Այսպես կարելի էր մտածել, եթե սա լիներ եզակի ու պատահական մի դեպք Կեչառեցու ստեղծագործութեաններում: Այնինչ Աղեքսանդրի վարքի ներածականում, ինչպես տեսանք, քննելով Քրիստոսի կյանքն ու գործերը, Կեչառեցին արտակարգ նմանութուն է գտնում նրա և Մակեդոնացու ճակատագրի մեջ:

Ավելին. Կեչառեցին իր «Ողբում» ցանկանալով ընդգծել հայ զորավար իշխաններից մեկի հեղինակութունն ու կշիռը մոնղոլական արքունիքում, Մ. Աբեղյանի խոսքերով ասած «գրում է միջնադարի համար մի անսպասելի համեմատութեամբ.

Հանց ուժընդակ էր ինքն յատենի  
Քան Քրիստոսի նըշանն ի բեմբի»<sup>2</sup>:

Այս ապացուցում է, որ 13-րդ դարում խախտվել էր արդեն երկյուղածութեանն ու մտավախութեանը աստվածաշնչական ճշգ-

<sup>1</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք, էջ 128:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին զրականութեան պատմութեան, հ. 2, էջ 230:

մարտությունների հանդեպ և դարաշրջանն ակամա «ազատախոհ» էր դարձնում նույնիսկ ժամանակի «սրբալաստիկ վարդապետներին»: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Կեչառեցին իր այս ստեղծագործությամբ, դժվար է որոշակի ասել. թերևս ներսև Շնորհալու նման սա էլ ուզում էր ժողովրդին եկեղեցուն մոտ պահելու համար եկեղեցական գրականությունը հրատարիչ դարձնել. բայց այս դեպքում կարևորը ոչ թե Կեչառեցու ցանկությունն ու նպատակադրումն էր, այլ այն, ինչ կատարում էր նրա ստեղծագործությունը գրականության աստիճանական աշխարհականացման ճանապարհին: Ինչպես մեր գրականության աշխարհականացման տարրերն սկսում են նարեկացու կրոնական տաղերից, այդպես էլ, բնականորեն, արձակի աշխարհականացման միտումը պաշտոնական գրականության մեջ պետք է սկսեր կրոնական ժանրերի առանձին տարրերի աշխարհիկ դրսևորումներից: Ծիշտ նույն ժամանակների արդյունք չէ՞ հենց Վարդանի եկեղեցական քարոզների մեջ առակների և այն էլ բուն ժողովրդական առակների հորդ ներհոսումը: Այդ սքանչելի առակների գրականության մեջ ներթափանցման փաստի գնահատության ժամանակ ո՞վ է անդրադառնում Վարդան Այգեկցու քարոզչական նպատակադրումներին: Ոչ ոք: Կարևորը ոչ թե այն էր, ինչ միջնադարյան հեղինակները քարոզում ու ցանկանում էին, այլ այն՝ ինչ փաստորեն նրանք կատարում էին. կատարում էին նրանք այն, ինչ պահանջում էր ժամանակը, իսկ ժամանակը տանում էր դեպի գրականության աշխարհականացում:

Մեզ մնում է սլարդել, թե ինչ է արել Խաչատուր Կեչառեցին իբրև գանձասաց և տաղերգու, քանի որ ձեռագրերում նա գլխավորապես հիշվում է իբրև այդպիսին:

Գժբախտարար այս հարցերից առաջինը մենք մինչև վերջ էլ չկարողացանք պարզել:

Գանձարանները հարուստ են «Խաչատուր» հոդոդ կամ ըստ Հ. Աճառյանի «Ծայրանուն կազմող» գանձերով: Որևէ այլ բան նրանք մեզ չեն ասում, եթե չհաշվենք գրիչների վայրիվերո ծանոթագրությունները, որոնք, ինչպես տեսանք վերը, երբեմն գործն ավելի դժվարացնում են, քան հեշտացնում: Իսկ Խաչատուր անունով գործիչներ որքան ասեք եղել են: Հր. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանում» բերում է 160-ից ավելի Խաչատուր-

ներ, որոնցից առնվազն 10—15-ը, եթե ոչ ավելին, գրական գործիչներ են:

Այդ բազմաթիվ հաշատուրներից բոլոր գանձերի հեղինակության պատիվը բանասերները թողել են միայն Տարոնացուն և Կեչառեցուն այն պարզ պատճառով, որ գանձարաններն իրենք ուշ շրջանի արդյունք են. նրանք հատկապես լայն տարածում են գտել 13—14-րդ դարերում, այնպես որ, բնականորեն այդ գանձերի հեղինակներ համարվել են Տարոնացին կամ Կեչառեցին. Չամչյանից սկսած մատենագիտության մեջ ավելի Տարոնացուն է վերագրվել գանձերի հեղինակությունը. դրանցից տարբերվում է Ֆ. Կոնիբերը, որ Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրաց ցուցակում բոլոր «հաշատուր» հոդող գանձերը դրել է հաշատուր Կեչառեցու անվան տակ՝ առանց տարակուսանք իսկ հայտնելու<sup>1</sup>:

Գ. Զարհրանալյանը իր «Պատմութիւն հայերէն դպրութեանց» աշխատության մեջ նշում է գանձարաններում պահպանված «հաշատուր» հոդող 40 գանձ, սակայն բերում է այդ գանձերի ցուցակը միայն, առանց որոշակի բան ասելու նրանց հեղինակների մասին. նա գրում է.

«Տաղարանաց մէջ յիշատակուած երգերը հետևեալներն են, յորոց ոմանք հաշատուրոյ Կեչառեցոյն են անշուշտ. բայց զանազանելը դժուարին ըլլալով՝ ամէնը մէկէն հարկ սեպեցինք նշանակել:

հայտացելոյն յորովայնէ. — Յովհաննու կարապետին.

հանդաղալից սրտիւ. — Քառասուն մանկանց.

\* հանդաղակաթ սրտիւ. — Բեթղեհէմի մանկանց.

\* հաշ կենաց նշան յաղթութեան. — Վարազայ խաչի.

\* հաշաբարձ արհի պանծալի. — Բարսղի.

\* հաշաքարող խաշելոյն. — Ոսկերեքանի.

\* հաշի քո Քրիստոս երկիր պագանեմք. — Գիւտ խաչի.

\* հնամք խորհրդոյն, դութ արարչական. — Յարութեան.

հնամք սիրոյ խնդիր փրկութեան. — Ծննդեան.

\* հնդա խորան Աստուծոյ բանին. — Ծննդեան.

հնդա Սիոն խորան խորհրդոյ. — Ծաղկազարդի.

հնդա տաճար, մայր տեառն Յիսուսի. — Ծննդեան.

<sup>1</sup> F. Conybeare, A catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, էջ 373:

Խնդահրաւէր դասք.— Ծննդեան.

\* Խնդահրաւէր մանկունք Սիոնի.— Արբոցն Թէոդորոսի և Գէորգեայ.

Խնդութեան ձայն, բարբառ աւետեաց.— Աւետեաց.

Խնդութեան ձայն բերկրական.— Տեառնընդառաջին.

\* Խնդութեան տօն այսօր կատարեմք.— Կիրակամտի.

Խնդութեան քարոզ՝ բարբառ կենդանի.— Ստեփանոսի.

Խնկաբեր ծառ, ծաղիկ անթառամ.— Ծննդեան.

\* Խոնարհեալ բանին Աստուծոյ.— Մարտիրոսաց.

Խոնարհիմք հոգւոյն հեղութեամբ.— Լուսաւորչի.

\* Խոստովանիմք զքեզ միածին.— Ոսկեանց.

Խորան փառացն Աստուծոյ.— Ծննդեան.

\* Խորան քեզ ողբայ.— Վահանայ Գողթնացւոյ.

\* Խորհուրդ անշարժ հայրաշարժ.— Թաղէի և Բարդուղիմէոսի.

Խորհուրդ անքնին անճառ.— Դաւթի և Յակոբայ.

Խորհուրդ ընտրեալ յառաջ գուշակեալ.— Խաչի.

Խորհուրդ հրաւիրմամբ քոյոյ.— Յովհաննու Երուսաղէմացւոյ.

Խորհուրդ հանգստեան.— Թաղման.

Խորհուրդ յառաջ քան զիսկզբանէ.— Ղազարու.

Խորհուրդ հրաւիրեալ կամաց.— Յարութեան.

Խորհուրդ սոսկալի անիմանալի.— Ասազ ուրբաթու.

\* Խորհուրդ որ ծածկեալ էր.— Ասազ ուրբաթու.

\* Խորհրդաբար պատուեալ պատկերին.— Սարգսի.

\* Խորհրդազգած քոյ մարդեղութեանդ.— Առաքելոց.

\* Խորք անքնին, անճառ անհասին.— Յովհ. և Յակոբայ.

Խրամատեալ կանոն օրինի.— Ղևոնդեանց.

\* Խրատ մարդասիրին.— Անտոնի<sup>1</sup>:

ՀՍՍԻ Մատենադարանի № 7853 ձեռագրում (1366 թ.), բացի վերոհիշյալ աստղանիշ գանձերից, կան «Խաչատուր» հոգող նաև հետևյալ գանձերը<sup>2</sup>.

Խնջոյս հաքսանեաց և նաւակատեաց...

Խորհուրդ անյայտ ծածկեալ յաւիտեանց...

<sup>1</sup> Գ. Ջ ա ր ր հ ա ն ա լ յ ա ն, Պատմութիւն հայերէն զարութեանց, Ա, Վենետիկ, 1865, էջ 569—572:

<sup>2</sup> Այս գանձարանի վրա ուշադրութիւն է հրավիրել Գ. Հովսեփյանը, Խաղրակյանք, Բ, էջ 40—41:

Խորհուրդ կենաց պատճառ գալըստեան...

Խնկանուէր մաղթանս արկանեմք առ քեզ...

Խումբ առեալ երկնից բազմութեան...

Խաղաղարար աստուած սուրբ հոգի...

Խորհուրդ զարդութեան հար անեղութեան...

Խորհուրդ իսկզբան անճառ միական...

Խորք անքննին անճառ անհասին (այս սկսվածքով երկու գանձ  
կա):

Խոնարհեալ բանին բանաւոր գառինք հրկիզեալ:

Գ. Հովսեփյանը՝ նշված ձեռագրում եղած բոլոր գանձերի հեղինակ համարում է Խաչատուր Կեչառեցուն:

ԶԺխտելով Խաչատուր Կեչառեցու նաև գանձասաց լինելու հավանականությունը, հրաժարվում ենք այդ մասին կոնկրետ եզրակացություններ անելուց, շունենալով ձեռքի տակ դրա համար անհրաժեշտ փաստական տվյալներ:

Իհարկե, ոճի, նյութերի համեմատության հիման վրա կարելի է գանձերը գանազան հեղինակների բաժանել, բայց այս կլինի խիստ պայմանական՝ հետևարար և բանասիրության համար ոչ սխիտանի: Պետք է երկարատև, լուրջ, մանրազնին ուսումնասիրվեն գանձարանները, Խաչատուր Կեչառեցու գանձերը որոշակիորեն տարբերելու և նրանց հիման վրա եզրակացությունների գալու համար: Առայժմ մենք այդ հնարավորությունը շունենք:

Անցնում ենք նրա՝ իբրև տնղասացի գործունեությանը:

Ձեռագրերում Խաչատուր Կեչառեցու անունով պահպանվել են հետևյալ բանաստեղծությունները.

1. Ես եմ կորուսեալ ոչխար
2. Այս կեանքս է յերազ նման
3. Եզրարք, ձեզ խրատ մի տամ
4. Թէ մարդ ես ու միտ ունիս
5. Կանանց ազգ, լացէք զձեզ
6. Յորժամ եղև զարուն
7. Ի գնալն վարդին
8. Ողբ վասն աւերման տանս արևելեան
9. Ողբ հայոց աշխարհին
10. Քրիստոս որդի աստուծոյ

11. Խարանֆիլ, նարկիզ, մենեշվայ

12. Աշխարհս է ի ծով նման

Սրանցից 4-րդը՝ «Թէ մարդ ես ու միտ ունիս» սկսվածքով, 44 տուն ոտանավոր է, որ ձեռագրերում «Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ տաղ ոգեշահ և պիտանի» մի ընդհանուր վերնագրի տակ է գնում: Սակայն այն բազմազան ու բազմատարր է իր բովանդակութեամբ և բանաստեղծական կազմով, ուստի հակված ենք այն մտքին, որ այստեղ Կեչառեցու մի քանի բանաստեղծություններն են հավաքված ու միասին արտագրված:

Այս եզրակացութեան գալու հիմքերը հետևյալներն են.

Նախ ոտանավորը միասնական բովանդակութեան շունի: Ընթերցման ժամանակ անընդհատ զգացվում է մտքից միտք, խոհից խոհ անցնելը: Խրատից անցնում է նկարագրութեան, այնտեղից երազանքի, հետո կանանց է քննադատում, խոսում է աշխարհի ունայնութեան մասին և այլն, և այլն:

Ավելի պարզ լինելու համար բերենք ոտանավորի նկարագիրը հիմնական գծերով:

Ոտանավորն սկսում է խրատական քառյակով.

Թէ մարդ ես ու միտ ունիս  
Ես տամ քեզ խրատ մի քանի.  
Դու բա՛ց ըզսրտիդ ականջն  
Եւ գրէ ի սի՛րտ ՚ւ ի հոգի.

Վեց տուն խրատներից հետո, վերջանում է.

Առ քեզ մի՛ փակեր զաշերդ  
Եւ դառնալ սրատես օտարի,  
Թէ ո՛չ հանց ի խոր ընկնիս,  
Որ շտեսնուա զլոյսն արևի.

Այս մտքի եզրափակումից անմիջապես հետո գալիս են հետևյալ տողերը.

Հոգիս դատախազ լինի մարմնոյս  
՚Ի եղով տայ սրտիս,  
Թէ՛ է՞ր կուտեցեր զչարիս  
Յանցաւոր այս սուտ աշխարհիս.

Մրանից հետո շորրորդ անով մարմինը պատասխանում է հոգուն.

Ես ձի, և դու տէ՛ր ձիոյս  
Ես ծառայ՝ և իշխան դու գերոյս  
Կամիլդ քո՝ գործ լինէր ինձ  
Մեզ է՞ր գնես հողածնոյս.

Իբրև շարունակություն գալիս է.

Աշխարհս էր ի ծով նրման  
Զիս ի վայր տարաւ յանդիման  
Կենցաղս էր յալեաց նման  
Զիս ի մէջ էառ քան զընդան...

Մտքի այսպիսի ակնհայտ թռիչքներից զատ, նույն հատվածները տարբեր են և իրենց վերջնահանգով, երբեմն նաև կառուցվածքով:

Մեջ բերելով, մեր կարծիքով անկախ հատվածների առաջին երկու տողերը, ուշադրություն ենք հրավիրում միաժամանակ և՛ նյութի, և՛ ստանալորնների ձևի վրա.

1. Թէ մարդ ես ու միտ ունիս  
Ես տամ քեզ խրատ մի քանի...
2. Հոգիս դատախազ լինի մարմնոյս  
Ի եղուկ տայ սրտիս...
3. Աշխարհս էր ի ծով նման  
Զիս ի վայր տարաւ յանդիման...
4. Ի շորս տարերաց երկրի  
Հողեղէն մարդ հաստատեցայ...
5. Աստուած է վկայ բանիս  
Զատ պատանքն այլ իրք չի տանիս...
6. Կանանց ազդ, լացէք զձեզ  
Դու էք զէն ի սատանայէ...
7. Խաչատուր առնել լաւ է,  
Քան գիտել և ոչ կատարել.
8. Եկին ընդ իս հանց ասին  
Թէ գնաց օրերդ ի ձեռաց...

9. Աւաղ թէ հանց բան լինէր  
Որ զգալ մահուն գիտնայի...

Վերոհիշյալ հատվածներից երկուսը՝ «Հոգիս դատախազ լինի» օգտագործել է Ն. Մառը իր «Ամառնային ճամբորդություններ» աշխատության մեջ, բերելով այն իբրև առանձին բանաստեղծություն, միայն երրորդի շարունակությամբ:

Չեռագրերում մեզ հանդիպել է նաև «Կանանց ազգ լացէք» հատվածը, իբրև առանձին բանաստեղծություն:

Այսպիսով «Թէ մարդ ես ու միտ ունիս» սկսվածքով 44 տուն ոտանավորները մենք դիտում ենք իբրև Կեչառեցու մի շարք բանաստեղծություններ, որոնք և բնագրում դնում ենք առանձնաբար:

Մնացած տասն և մեկ ոտանավորներից երեքը նրանը չեն:

Նրանք չէ «Քրիստոս որդի աստուծոյ» ոտանավորը, գրված № 2939 ձեռագրում «Խրատ հոգոյ Խաչատուր Կեչառեցույ ասացեալ» վերնագրով: Սա ոճով ու լեզվով միանգամայն տարբեր է Կեչառեցու ոտանավորներից: Գրված է խիստ բարբառային լեզվով, համարյա ոչ մի շափ շունի և որ կարևորն է, վերջին տան մեջ տալիս է հեղինակի անունը.

Թաթոսն լայ ողբալի  
Ի վերայ մեզսն որ ունի  
Տէրն ողորմած ամէնի  
Բազմամեղքս զթասցի<sup>1</sup>:

Նրանք չէ նաև «Խարանֆիլ, նարկիզ, մենեշվայ» ոտանավորը: Նրան է վերագրվել հեղինակների նույնանունության պատճառով: Ոտանավորի հեղինակն է ոմն Խաչատուր երեց:

12-րդ ոտանավորը, որ սկսվում է «Աշխարհս է ի ծով նման» տողով (ձեռ. № 7039), ոչ այլ ինչ է, բայց եթե Կեչառեցու «Ես եմ կորուսեալ ոչխարը», միայն՝ սկզբում կցված է Հովհ. Պլուզի երկտուն ոտանավորը, որ անցել է այստեղ հավանորեն հետագա գրիչների կողմից:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Մնացականյանի հոդվածը. «Տեղեկագիր» ԳԱ. Հաս. բաժանմունքի, 1946, № 2—3, էջ 80:



Մեր կարծիքով նրան շի պատկանում նաև «Յորժամ եղև դարուն» բանաստեղծությունը: Սա վարդի և բլբուլի մի գեղեցիկ պատմություն է, շատ նման հենց Կեչառեցու «Ի գնալն վարդին» բանաստեղծությանը: «Յորժամ եղև դարունը» Կեչառեցու անունով կա միայն մի ձեռագրում՝ № 1636, այն էլ երբ սրան նախորդել է իրոք Կեչառեցու «Ի գնալն վարդին» բանաստեղծությունը:

Ձեռագրերի մի խմբում (№№ 7707, 2394, 3411, 8968) սահանգեղինակ է: Իսկ № 7717 ձեռագրում և Կ. Կոստանյանի սեփական տաղարանում, ինչպես նաև 1617 թվականին գրված մի այլ տաղարանում, որի մասին խոսում է Կոստանյանը, բանաստեղծությունը բերված է հաշատուր հարբերդացու անունով:

Կ. Կոստանյանը «Նոր ժողովածու»-ի Գ հատորում տպագրել է այս բանաստեղծությունը հետևյալ ծանոթագրությամբ. «Տաղիս բնագիրը մեր սեփական տաղարանից է հանած, որի թուականն է 1695 թ., նույնը տեսել ենք և 1617-ին գրած: Վերնագիրն է «Յարմարեալ բանս ուրախութեան ի հաշատուր վարդապետէ հարբերդացոյ». տնագլուխները հիւսում են «Յարմարեալ բանս ուրախութեան»... հարբերդացու տաղի մեկ տունը հայերեն է, միւսը նորա թուրքերեն թարգմանութիւնը, ոտանավորով»<sup>1</sup>:

Հ. Մ. Պոտուրյանն էլ, խոսելով նույն տաղի մասին, ճիշտ նկատում է, որ «Տաղիս ոճը և լեզուն, որ այնքան կուռ չէ, վավերականութեան մասին կասկածելի է (Կեչառեցունը լինելու վավերականության մասին է խոսքը — Մ. Ա.) և կը թուի վեշտասաներորդ դարու տաղասացի մը գործն ըլլալ»<sup>2</sup>:

Հետաքրքրական է, որ Մ. Արեղյանը ևս Կեչառեցու ստեղծագործությունների մասին խոսելիս բնութագրում է այս տաղը, վերջում, սակայն, հայտնելով իր տարակուսանքը. «Կասկածելի է, — գրում է նա, — թե այս տաղը Կեչառեցունը լինի»<sup>3</sup>:

Հ. Աճառյանը հաշատուր հարբերդացուն գնում է հենց 16-րդ դարում, թեև հարցականով, երևի թե լեզվից ու սճից պատելով:

Մենք էլ հարազատություն չգտնելով այս գործի և Կեչառեցու ստեղծագործությունների միջև, նշված փաստերն ու կարծիքներն

<sup>1</sup> Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, Գ հատոր, էջ 65:

<sup>2</sup> Բազմավէպ, 1907, էջ 401:

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց հին զրականության պատմություն, հ. 2, էջ 241:

էլ նկատի առնելով «Յորժամ եղև գարուն» բանաստեղծությունը հանեցինք Կեչառեցու ստեղծագործությունների ցանկից:

Մեր կարծիքով, Խաչատուրինը չէ նաև «Ողբ Հայոց աշխարհին»<sup>1</sup> բանաստեղծությունը. իր ոճով և ստեղծագործական հատկանիշներով միանգամայն տարբեր այս ոտանավորը Խաչատուրին վերագրվել է հավանորեն դանձարաններում իշխանաց տոնի օրը իրոք Կեչառեցու «Վասն աւերման տանս արևելեան» ոտանավորից հետո տեղագրվելու պատճառով:

Որպես Խաչատուր Կեչառեցու անկասկած գործեր մնում են հետևյալները.

1. Ես եմ կորուսեալ ոչխար
  2. Այս կեանքս է յերազ նման
  3. Թէ մարդ հս ու միտ ունիս
  4. Հոգիս գատախազ
  5. Աշխարհս է ի ծով նման, զիս ի վայր տարաւ յանդիման...
  6. Ի շորս տարերաց երկրի
  7. Աստուած է վկայ բանիս
  8. Կանանց ազգ, լացէք զձեզ
  9. Խաչատուր, առնել լաւ է
  10. Եկին ընդ իս հանց ասին
  11. Աւազ, թէ հանց բան լինէր
  12. Ի գնալն վարդին,
  13. Ողբ վասն աւերման
  14. Եղբարք, ձեզ խրատ մի տամ  
նաև եկեղեցական երեք տաղ.
15. Վասն ծննդեան
  16. Տաղ խաչելութեանն
  17. Վասն ծննդի և ջրաւրհնէից

Այս բանաստեղծությունների և նրանց գեղարվեստական արժանիքների մասին կխոսվի ստորև:

Բացի նշված ստեղծագործություններից, ըստ Ղ. Ալիշանի,

---

<sup>1</sup> Այս ոտանավորն հրատարակված է Ս. Չոպանյանի «Հայ էջեր»-ում, (էջ 13) անհեղինակ:

Կեչառեցու գրչին է պատկանում Հին և Նոր կտակարանի մի ոտանավոր պատմութիւն: Թվարկելով Խ. Կեչառեցու ստեղծագործութիւնները նա գրում է.

«Երկարագոյն քերդուածն է նովին ոճով «Սկսեալ յաշխարհարար ներածմանց, կարճ ի կարճոյ համառօտ պատմութիւն Հին և Նոր կտակարանաց, յարարչութենէ մինչեւ ի գալուտ ս. հոգւոյն»<sup>1</sup>:

Այս ստեղծագործութեանն անդրագանում է նաև Հ. Տաշյանը Աղեքսանդրի պատմութեան Սսի օրինակը նկարագրելիս. նշելով պատմութեան հիշատակարանի առանձին մասերի հերթականութիւնը՝ ասում է. «Բարեաց գործոց» կտորին անմիջապէս կհաջորդէ Ոտանաւոր պատմութիւն մը հին և նոր կտակարանի, որ կը սկսի «Նորհուրդ արար հայրն արարիչ» խոսքով: Քերթուածիս սկզբնատառք նախ «Խաշատուր» անունը կկազմեն, և յետոյ կը սկսին այբուբենական կարգաւ շարունակուիլ մինչև Շ., ապա խառն սկզբնատառով կյառաջանա: «Այս քերթուած, կը յաւելու գերապ. Ս. Վ. Պարոնեան, որչափ գիտեմս՝ ցարդ անգիւտ է այլուր, եւ կարծեմ որ նաև այն յիշատակութիւնը՝ զոր կընէ Այրարատ, այս ձեռագրէն առած է ամօք յառաջ հաղորդած լինելովս զայն ի Վենետիկ»: Քերթուածին ծայրը կայ յիշատակարան մը Կեչառուեցոյ, որ կը յայտնէ թէ ՇԶ (580) տուն է բովանդակը»:

Այնուհետև ծանոթագրութեան մեջ Հ. Տաշյանը բերում է այս ոտանավորի հիշատակարանը. «Յերեսս անկեալ աղաչեմ կարաւ և կաթնոգի Խաշատուրս Կեչառեցի. որք հանդիպիք ոտանաւոր շարաբանութեանս, որ սկսեալ յսկզբան արարչութեանցն. գան անցանիլ համառաւ տրամաբանութեամբ մինչև իջումն հոգոյն սրբոյ. երկու յեղանակաւ ոտամբ բաղադանեալ տունս. Շ. եւ Զ. յիշեսջիք անբամբաս. եւ աննախանձ սրտիւ. զիս որ յարիներցի եւ զգրեցի. իմ բազում մեղացն թողութիւն հայցեցէք յաստուծոյ. ամէն եւ եղիցի»<sup>2</sup>:

Դժբախտաբար այս երկը մինչև այսօր մնում է մեզ անհայտ: ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերում այդ սկսվածքով ոտանավոր առայժմ մեզ չի հանդիպել, իսկ ցուցակներն էլ այս առթիվ որևէ նոր բան չեն ասում:

<sup>1</sup> Գ. Ա. Ի. Զ. ա. ն, Այրարատ, էջ 268:

<sup>2</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք, էջ 157:



## Ս Տ Ե Ղ Ժ Ա Գ Ո Ր Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Խաչատուր Կեչառեցին գործել ու ստեղծագործել է մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում: Սակայն «մոնղոլական տիրապետություն» արտահայտությունը չի սպառվում հայ հասարակական կյանքի բնութագրումը: Ճիշտ է, սելջուկ, ապա նաև մոնղոլական արշավանքների և տիրապետության հետևանքով խախտված էր արտադրական հարաբերությունների նորմալ ընթացքը Հայաստանում, բայց մինչև այդ արդեն այն հասած էր զարգացման մի այնպիսի մակարդակի, որը գաղափարական նոր խմորումների անխուսափելի պատճառ էր հանդիսացել: Հայաստանի որոշ շրջանների զարգացած գյուղատնտեսության հիմքի վրա բավականաչափ բարձր աստիճանի էին հասել առևտուրն ու արհեստագործությունը: Միջազգային առևտրի կարևոր մագիստրալները, որ անցնում էին Իրանի և Հայաստանի վրայով, ստեղծել էին վաճառաչաֆ քաղաքների, առևտրի ու արհեստագործության այնպիսի կենտրոններ, ինչպիսիք էին Անին, Կարինը, Երզնկան, Արծնը և այլն: Այս քաղաքային կյանքի բարգավաճման հիմքի վրա ստեղծվել էր մի նոր գաղափարախոսություն, որն արտահայտվում էր միջնադարյան ողջ մշակույթի և՛ բովանդակության, և՛ ձևի մեջ: Հայ գրականությունը՝ արձակն ու բանաստեղծությունը աշխարհականացման ուղին էին բռնել. եկեղեցա-ֆեոդալական գաղափարախոսության մեջ ճեղքեր էին բացվել, և բնության կազդուրիչ օդը սկսում էր ներթափանցել դարեր հարատևող եկեղեցական գրականության մեջ:

Մոնղոլական տիրապետությունը խիստ բացասաբար անդրադարձավ նվաճված երկրների, որոնց թվում և Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման ընթացքի վրա: Ավերածության մատնվեցին զարգացած գյուղատնտեսական շրջաններն ու վաճա-

ուաշահ կենտրոնները: Հայ կյանքի առաջընթաց զարգացումը այս ժամանակաշրջանում ոչ միայն խախտվեց, այլև զգալիորեն նահանջեց: Երկրի բարեբեր դաշտավայրերում և արոտավայրերում բնակություն հաստատեցին տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող քոչվոր հորդաններ, ամայացնելով բարձր զարգացման հասած և շուկայական հարաբերությունների ոլորտի մեջ մտած երկրագործական շրջանները: Տնտեսական անկման ուղին բռնեցին, բնականաբար, նաև Հայաստանի և հարևան երկրների քաղաքները, իրենց զարգացած արհեստագործություններ և առևտրով:

Բայց հասարակության զարգացման նախորդ շրջանն արդեն իր գաղափարախոսությունն էր սերմանել: Վաճառաշահ քաղաքներում ստեղծված նոր աշխարհըմբռնողությունն ու մտայնությունը հասարակական ճանաչում էին ստացել: Հասարակության նյութական հիմքի քայքայումը, որ մոնղոլական տիրապետության հետևանք էր, չէր կարող անմիջապես ու մի հարվածով ետ մղել մարդկանց գիտակցության մեջ մտած նոր հասկացությունները, մարդկանց հայացքը կյանքի նկատմամբ փոխվել էր: Մարդիկ նոր պահանջներ էին առաջադրում և նոր սպասելիքներ ունեին նրանից: Հասարակական նորմալ զարգացման ուղուց խաթարված հայ կյանքում վերնաշենքային խմորումներ էին տեղի ունենում: Այս գաղափարների խմորմանը նպաստում էին մոնղոլական տիրապետության օրոք օգտագործվող միջազգային առևտրական ուղեգծերի վրա իրենց գոյությունը որոշ շափով պահպանած մի շարք քաղաքներ ինչպես Կիլիկիայում, այդպես էլ բուն Հայաստանում: Սակայն Հայաստանի միջազգային առևտրական ուղեգծից հեռու ընկած բոլոր վայրերում, թե՛ տնտեսաձևի և թե՛ գաղափարախոսության իմաստով տիրում էր խոր միջնադարը: Վաճառաշահ Երզնկային կամ հատուկ կենտ այլ քաղաքներին գոյակցում էին տիպիկ ֆեոդալական Սյունիքն ու Վայոց ձորը և բազմաթիվ այլ շրջաններ ու նահանգներ:

Վաճառաշահ միջավայրն ստեղծում էր իր գաղափարախոսությունը (Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, առակների մի զգալի մասը), որն արտահայտում էր հասարակական նոր խավերի մտայնությունն ու վերաբերմունքը կյանքի նկատմամբ. մյուս կողմից՝ քաղաքներից հեռու ընկած վայրերում շարունակվում էր եկեղեցա-

Ֆեոդալական գաղափարախոսությունը իբրև ժամանակի տիրապետող՝ բնութագրական գաղափարախոսություն:

Խաչատուր Կեչառեցու ստեղծագործության մեջ արտացոլված է իր ժամանակաշրջանի այդ իրարամերժ գաղափարների առկայությունն ու խմորումները:

Մեծ չէ Խաչատուր Կեչառեցու բանաստեղծական ժառանգությունը, բայց հարուստ իր բազմակողմանիությամբ: Նրա համեստ ժառանգության մեջ արտացոլվել է ժամանակի խոհերը աշխարհի ունայնության, վերջին դատաստանի ահեղ օրվա մասին. ժամանակի խոհերի հետ կյանքի վաղանցիկության միաժամ է նրան ալեկոծել, հոգու և մարմնի անվերջ սլաքարին է նա անդրադարձել, խրատներ տվել, սիրո երգեր է ասել, ողբացել հայրենի երկրի դառը վիճակը, երազել Ալեքսանդր Մակեդոնացու նման մի դյուցազնի դուրսը իր օրերում:

Ինչպես գործունեությամբ, այնպես էլ իր ստեղծագործության մեջ Կեչառեցին կյանքից կտրված մի բանաստեղծ չէ. իր անձնական զգացումների ու մտորումների հետ մեկտեղ նա խիստ վերապրում է հայրենի երկրի ծանր վիճակը: Ճիշտ է, նա այդ հարցերին քիչ է անդրադառնում իր առանց այն էլ ոչ հարուստ ժառանգության մեջ, բայց անդրադառնում է մեծագույն անմիջականությամբ և ծանրոր հոգեվիճակով:

Գանձարաններն իրենց էջերում պահել են Խ. Կեչառեցու «Վասն աւերման տանս արևելեան» բանաստեղծությունը, գրված, ինչպես ճշտված է, մոտավորապես 1298/99 թվականներին: Այս հենց այն տարիներն են, երբ «արևելյան տան» իշխանները, հոգևորականներն ու գործիչները թուղթ ուղարկեցին Գրիգոր Անավարդեցուն, վտանգված համարելով իրենց հայրենիքի անկախությունը: Միևնույն մտքերի ու հուզումների արտահայտություն է Խաչատուրի Ողբը, համարյա միևնույն վերնագիրը կրող: «Արևելյան տան» կողմից էր թուղթն ուղարկված Անավարդեցուն և այժմ էլ «արևելյան տան» ավերումն էր ողբում Կեչառեցին: Նա ողբում էր ոչ միայն մոնղոլական տիրապետությունը, այլ նաև հայ եկեղեցու պառակտումն իբրև մի վտանգավոր սեպ հայ ժողովրդի ճակատագրում մխված: Նա վճռականորեն դեմ է Անավարդեցու քաղաքականությանը, բայց միաժամանակ վերապրում է այն դառն իրականու-

Թյունը, որ պառակտում կա «հոգևոր հայրապետի» և ենթակա եկեղեցիների միջև.

Տայա ահագին աւուրս որ հասաք,  
Ժամանակիս՝ որ պատահեցաք,  
Զքաղցր արարիչըն դառնացուցաք  
Զերկիրս արեամբ մեղօք ներկեցաք...  
Զեկեղեցեաց դրունս փակեցաք...  
Զաւազանին խորհուրդն ուրացաք...  
Որբ և զայրին մեք դառնացուցաք...  
Հովիւ հօտիս մեր բամբասեցաք... և այլն:

Այս մեղքերի հետևանքով անօգնական է մնացել մեր երկիրն ու ժողովուրդը.

Մեռան իշխանքն մեր ցանկալի  
'Ի իւրեանց որդիքն ի աղայ հասակի,  
Սուղըն տիրեաց մեզ Իսրայէլի,  
Լաց 'ւ աղաղակն մեծ Հոաքելի...

Հարցը նրանց մեռնելը չի սոսկ, այլ այն, որ նրանք հետևորդներ չունեն. իսկ առանց գործունյա իշխանների, միջնադարյան բանաստեղծը չի պատկերացնում երկրի բարեկարգ վիճակ: Նա սրտի մորմոքով խոսքն ուղղում է մոնղոլական տիրապետության օրոք հեղինակություն վայելող և երկիրն ասպատակություններից հեռու պահող Սաղուն Աթաբեկին, և Շնորհալու նման, կյանքի կոչում անցած օրերի գործչին, ականատես լինելու երկրի վիճակին և ձայնակից լինելու իր Ողբին.

Սաղուն՛ն, սիրած մեծ Ապաղանի  
Գոված ընտիր յամէն հանդիսի,  
Զաչերդ բա՛ց, զինչ Գամասկոսի,  
Տե՛ս ըզգաւառքս ի յերերմանի,  
Զեկեղեցիքս ի մեծ վրտանդի.  
Ու զբահանայքս ի տարտարոսի...

Բանաստեղծը շերժ համակրանք է արտահայտում մոնղոլների դեմ ապստամբություն նախապատրաստող Խուժու-բուղայի և վրաց Դեմեոտրե թագավորի նկատմամբ: Նա առանց հուզմունքի չի կարող հիշել մոնղոլների դաժան դատաստանով զլխատված՝ «արյան հալախ» հազած Խուժու-բուղային և «աալասերես»՝ գեղեցիկ Դեմեոտրեին:

Ջարքայն շիշխեմ չիշել զվրացի՝  
Ջատլասերեսն զԴեմեոտրէի,  
Որ դեռ քրտունքն ի վայր կու հոսի.  
Սիրտըն քաշած ու դեռ կենդանի:

Հերոսական այս կերպարները մեկ կամ երկուսը չեն. սրանց շարքումն են Պոռշ իշխանն իր որդիներով: Պոռշի անձնավորությունը հեղինակին գրավել է ռազմական կորովով, ուժով ու խիզախությամբ.

Չսարոն Պոռշն՝ զարդ հեծելի,  
Որ զերկաթի դուռն առնէր փոշի,  
Աշու բազուկ էր նոր Սիոնի,  
Հիմըն հաստատ հայոց հաւատի:

Նա կարող էր ժողովրդական հերոս Դավթի նման «երկաթե դուռը փոշի դարձնել», նա հեծյալի՝ զորքի զարդն էր և եկեղեցու ու կրթական գործի հովանավորը:

Սրանց շարքումն են Տարսայիճ աղզն «վեհազգի», Հասան Խաչենցին և մյուս Հասան Դոփյանը՝ «հավատարիմն ու երկյուղալին», որի ձայնը մոնղոլական ատյանում ավելի զորավոր էր, քան Քրիստոսի նշանը՝ խաչը եկեղեցում:

Կեչառեցին ցավով ու կսկիծով է հիշում անցյալի այդ խիզախ գործիչներին: Մեռել են, չկան նախկին հզոր ու հեղինակավոր դեմքերը, որոնց հետ աղամա հաշվի էին նստում մոնղոլները. ժամանակակից «սուա կենդանի» գործիչներն անտեսված ու արհամարված են մոնղոլների կողմից, սահմանափակվել են նրանց իրավունքները, ուժեղացել հալածանքները, չկա նախնիների հզոր ուժն ու «կենդանի» շունչը. բայց ո՞րը ողբա բանաստեղծը.



Աւա՛ղ, թէ՛ զո՛րն ասեմ ի լալի,  
Զայս հին ու նորքն ի գերեզմանի,  
Վա՛յ զմնացորդքս՝ սուտ կենդանի  
Մակա՛ր շէաք ծնեալ յաշխարհի:

Այնքան դառնացած է նա իր ժամանակի իրադրություններից, որ երանի է տալիս մեռելներին և ցավ հայտնում իր ծնված լինելու համար: Բայց նրա մեջ չի մեռել ապագայի հույսը. նա իր Ողբը վերջացնում է մի աղոթք-մաղթանքով, որտեղ խնդրում է աստվածամորը բարեխոսությամբ հիշել հայոց արի ու քաջ իշխաններին, սրանց հետ մեկտեղ և Ստեփանոս Օրբելյանին՝ «զլուաւորիչն հայոց ազգի»: Բայց որ ամենակարևորն է՝

Սոքօք հանդերձ աղաչեա զորդի  
Փրկել ըզմեզ յազգէն հագարի,  
Զրագ և զարոճ մեր հայոց ազգի  
Բարձր առնելով մինչ յաւրըն վերջի:

Ահա որոշակի այն քաղաքական դավանանքը, որին զինվորագրված է Խաչատուր Կեչառեցին:

Իր գաղափարներին ավելի լայն ասպարեզ ու հեղինակութուն տալու նպատակով նա հորդորել է մետրոպոլիտ Ստ. Օրբելյանին գրելու նմանօրինակ «էջմիածնի Ողբը»: Սրանք քաղաքական միևնույն տենչանքներն արտահայտող ստեղծագործություններ են, որոնք ներծծված են հայրենիքի անկախության և ինքնուրույնության գաղափարով: Սոցիալական այլ ակունքներից եկող, բայց նմանատիպ մի ստեղծագործություն է Ֆրիկի «Վասն Բուղային և Արղուն զանին» պատմական պոեմը, գրված մոտավորապես նույն ժամանակահատվածում, որի մեջ դարձյալ արտացոլում է գտել հայ ժողովրդի՝ մոնղոլական ծանր լծից ազատագրվելու բուռն տենչանքը:

Խաչատուր Կեչառեցու մյուս ստեղծագործությունները դարձյալ իր ժամանակի արտահայտություններն են, բայց սրանց մեջ ավելի արտահայտված է բանաստեղծի անձնական մտորումներն ու ասլրումները և վերաբերմունքը կյանքի հանդեպ: Այս վերապրումներն ու խոհերը անձնական լինելով, բնութագրական են նաև իր դարաշրջանի մարդկանց մեծագույն մասի համար:

Ընդհանրապես նրա ստեղծագործությունը մի անդրադարձում է իր կյանքին, որի մեջ քիչ ժպտացող կետեր է տեսնում նա. դա մեծ բանաստեղծի խոսքերով «տանուշ տված» կյանքի տխուր և մարմանդ ողբերգությունն է.

Աշխարհս էր ի ծով նրման,  
Զիս ի վայր տարու յանդիման,  
Կենցաղսս էր յալեսց նման,  
Զիս ի մէջ էառ, քան զընդան:

Մարդկային կյանքի ու երազանքների բիրտ հակադրությունն ու կյանքի անողորմ կարճատևությունն է, որ արձագանքել է նրա հոգում.

Հողի հրեղէն էի  
Յանփարատ խաւար դնացի...  
Անուշ քաղցր աղբիւր էի  
Զիս ի ցելս մեղաց խառնեցի...

Ընդհանուր մեղքերի այս անվերջ կրկնության հիշատակության մեջ պետք է տեսնել մարդկային աշխարհիկ կյանքի թաքնված առկայությունը: Վերջին հաշվով ի՞նչ են մեղքերը. մեկին սիրելը, մեկին խաբելը, մեկից հրասթափվելը, մեկին բամբասելը. չէ՞ որ կյանքի այդ մանր ու մեծ երևույթները առկա են եղել՝ նույնիսկ ամենափակ ճգնակենցաղ կյանքում: Մարդկային փոխհարաբերություններում արտահայտված զանազան աշխարհիկ կամ հակահասարակական արարքը մեղք է անվանվել աստծու և նրա պատվիրանների դեմ: Այժմ՝ առանց եկեղեցական աշխարհըմբռնողության շղարշի, հասկանալի է այդ «մեղքերի» էությունը:

Բանաստեղծը որոշակի պատմում է իր ողբերգության ակունքը.

Ի շորս տարերաց յերկրի  
Հողեղէն մառդ հաստատեցայ,  
Կենօքս իմ խաւար կացի  
Շատ լացի, շատ հորդորեցայ,  
Շատոց ես կրակ դրրի

Եւ շատոց հըրով վառեցայ,  
Հանց անգերծ ցաւի գիտայ,  
Որ բընաւ գճարն շիմացայ...

Նա իր ողբերգութեան ակունքը տեսնում է իր հողեղեն մարդ ստեղծված լինելու մեջ: Նա, նարեկացու նման, անվերջ ձգտում է մաքրման, բայց և անվերջ դիտակցում է դրա անհասանելիութունը: Բայց նրա ողբերգութունը միայն աստվածային պատկերին հասնելու անհնարինություն մեջ չէ, այլ հենց կենսական-առօրեական մարդկային զգացումների տվյալտանքների մեջ: Շատերն իրեն են վիշտ պատճառել, շատերին ինքն է վշտացրել, որ անուղղակի, կյանքում զգացած ու վերապրածի ճիշտ անդրադարձումն է:

Միջնադարյան մարդու ողբերգութեան մյուս ակունքը ահեղ դատաստանի սարսափն է, հաշիվ պահանջելու օրը, երբ մարդը պետք է իր լավ ու վատ արարքները արդարադատության նժարներին դնի: Դատաստանի օրվա ահեղ սարսափը ստիպում է միջնադարյան բանաստեղծին իր արարքների նկատմամբ արթուն հայացք ունենալ, անդրադառնալ իշ կյանքի լավ ու վատ պահերին:

Խ. Կեչառեցին այդ կոնկրետ զգացողություններն իսկ արտահայտում է ոչ նկարագրորեն, այլ միշտ անց է կացնում մտորումների, խոհերի միջով, որից հետո միայն, իբրև անհատի զգացում, տալիս է գրչին: Սրանով նրա բանաստեղծություններն օժտվում են երկու գրավիչ հատկությամբ՝ խոհով և զգացումով: Միջնադարի մեր մյուս բանաստեղծներին վերջին դատաստանի օրը գրավել է նաև իբրև նյութ, որ առատ հնարավորություններ է տալիս ստեղծագործական երևակայության: Առանձնապես ուժեղ է ներսես Շնորհալու նկարագրած դատաստանի ահեղ օրը, որի նկարագրության ժամանակ Շնորհալին օգտագործել է ահռելի երկրաշարժից ստացած իր տպավորություններն ու ասլրումները:

Յորժամ տարերքըն դըղըրդին  
Հաստատութիւնքըն սասանին,  
Իբր ըզծովու կոհակը կուտին  
Ի յեռանդանըն կաթսային.

Լերինք հիմամբքք զարհուրին

Եւ ուժգնակի բախմամբ թընդին,  
Կարծր բնութիւնք վիմաց հալին  
Եւ ամենայն նիւթք հըրդեհին...

Այնինչ Կեչառեցին մի կողմ է թողնում դատաստանի նկարագիրը և ինչպես միշտ՝ զբաղվում ավելի երևույթի հոգեկան կողմով։ Ի՞նչ կլինի իր գրությունն ահեղ դատաստանի օրը.

Ով Կեչառեցի, մեղօք  
Անդ շունիս ճար պատճառանաց.  
'Ի ոչ խաբ տայ լեզուիդ խօսից  
'Ի ոչ հընար քեզ ներգործանաց

գրում է «Եկին բնդ իս հանց ասին» բանաստեղծության մեջ։ Իսկ մի այլ տեղ («Աւա՛ղ, թէ հանց բան լինէր...») ասում է.

Վա՛յ գիս աներեկ աւուրն  
Ուր ամէն ծնեալ ժողովի

Ի դատողական աթոռն  
Նըստի՛ ի կալն յՈւռնայի.  
Եւ գաղտնիք գործոցն յայտնին  
Յանկաշառ մեծ հրապարակին:

Այս բանաստեղծություններով Կեչառեցին բացահայտում է միջնադարյան մարդու հոգեվիճակներից մեկը։ Այժմ դրանք անհասկանալի կարող են թվալ, բայց իր ժամանակ՝ միջնադարի աշխարհայեցողությունից բխող այս երկյուղը ընդհանրական է եղել, և Կեչառեցին իր այս խոհերով արտահայտել է դարի ճշմարիտ մտայնությունը։ Չրիկի պես ազատախոհ բանաստեղծն իսկ իր բանաստեղծությունների մեջ բազմիցս անդրադառնում է իր կյանքի «հաշվեհարդարին», էլ շենք խոսում նարեկացու և մյուսների մասին։ Այլ կերպ չէլ էլ կարող լինել։ Որքան էլ ազատախոհ լիներ միջնադարյան բանաստեղծը, նա իր դարաշրջանի զավակն էր և չէր կարող զերծ լինել ժամանակի տիրող աշխարհըմբռնողությունից։

Խ. Կեչառեցու մտահոգութեան մյուս առարկան, որ բանաստեղծական կերպարանք է անուն՝, կյանքի վաղանցիկութեան գաղափարն է.

Այս կեանքս է նրման ձիւնի,  
Որ ի դալ գարնան կու հալի

Կամ՝

Շաղկեալ ես, տերև ունիս  
Յայտից այլ շուտով տի թափիս,  
Կանաչ ես վայելչ կենօք,  
Փոխի գոյնդ և շուտ մեռանիս...

Խորհում է նա տարբեր առիթներով:

Կյանքի կարճատևութեան այս գիտակցութեանը հետևում է Կեչառեցու եղբակացութունը ոչ թե կյանքը վայելելու (ինչպես Հովնաթան Նաղաշի ստեղծագործութուններում է), այլ կյանքը իմաստավորված անցկացնելու մասին: Կյանքի վաղանցիկութունից մարդուն մնում է միայն լավ անունն ու լավ գործ կատարելը: Դեռևս իր Աղեքսանդրի պատմութեան առաջաբանում Կեչառեցին հայտարարում էր, թե՛ «Լաւ է անուն բարի, քան ընչից բազմութիւն», քան ունեցվածքը, որ հետզհետեւ շափանիչ էր դառնալու երևույթների ու մարդկանց գնահատութեան հարցում. այժմ էլ իր բանաստեղծութուններում նա նույն մտքին է հանդում.

Խաչատո՛ւր, աննել լաւ է,  
Քան ասել և ոչ կատարել,  
Աղքատ և արդար լաւ է,  
Քան գիտուն և յոյժ մոլորել:

Այստեղ խոսքը գործ անելու մասին է, պիտանի դառնալու աղքատն ու արդարն են լավ և ոչ թե այն գիտունները, որ մոլորված ոչ մի պիտանի բան չեն անում: Այս միտքը նա շարունակում է հաջորդ քառատողում.

Սակաւ գիտութիւն լաւ է,  
Քան գիտել և ոչ կատարել.

Մին ձեռօք չերկինս լաւ է,  
Քան երկու ձեռօք դեղերել:

Այսինքն՝ լավ է քիչ գիտութիւն ունենալ և գործադրել, քան շատ գիտութիւն անգործադրելի թողնել, որին հետևում է միջնադարյան մտայնութիւնը, թե մի ձեռքով, այսինքն թեև թերի՝ կիսատ-պոստ երկնքում լինելը լավ է երկու ձեռքով երկրում անիմաստ դեղերելուց: Այդ խորհուրդն ու խրատը կեշառեցու սանդժագործութիւններում արծարծվում է մարդկային անցած սերունդների վերհուշումով:

Ե՛կ, որ օրինակ բերեմ դառաջին մարդիկն որ անցան,  
Զինչ գործեցին զայն տարան՝ թէ բարի կեցան թէ մեղան...  
Թագաւորք այլ շատ կային յԱդամայ զարմիցն, որ ծնան,  
Ժամանակն ի հատ երեկ, և մտան ի նեղ գերեզման...

Բայց գերակշիռ չափով նրա խրատները զուգակցվում են քրիստոնեական բարոյախոսութեամբ՝ պատվիրանների կատարման և դատաստանի հիշեցումով:

Դատաստանին ակն կալ, զի տալոց ես անդ պատասխան...  
Կամ՝

Հիմիկ դուք ձեզ պէտ արէք  
Թողէք զչարն, գնացէք հետ բարուն  
Չարին ատեցող լերուք,  
Որ չլինիք բաժին գեհնուն:

Բարեացըն սիրող լերուք,  
Գործեցէք ՚ւ արէք ձեզ անուն,  
Գէմ քան ըղթարթել ականն  
Մահն ի մօտ է ադամորդուն:

Այս զգաստացումը ամենից շատ վերաբերում է իրեն՝ հեղինակին.

Խաշատու՛ր, դարթի՛ր ի քնոյ -  
Զի քեզ ժամ է աշխարելի,  
Այս կեանքս է նըման ձիւնի,  
Որ ի գալ գարնան կու հալի:

Երազ է, վճար ունի,  
Կու տանի ի հուրն, որ այրի  
Յոզոց հա՛ն, մեղայ ասա՛  
Եւ կանգնիր, ա՛յ ողորմելի:

Սակայն Խաչատուր Կեշառեցու խրատները ոչ միայն ժամանակի աշխարհըմբռնողությունից բխող խրատներ են այն իմաստով, որ արդար դատաստանին «սպիտակերես» գուրս գալու հորդորներ են կարգում, այլ նաև խրատներ, որոնք կապվում են կենցաղային-մարդկային առնչությունների հետ. նա ոչ միայն զգաստացնում է պատվիրաններով, ոչ թե ահաբեկում է աստվածաշնչով ու ավետարանով, ոչ թե սպառնում է հանդերձյալ կյանքով, այլ խրատում «լեզուն արծակ շթողներով» մասին, լսելու «խելօք իմաստուն» խոսքերին, հեռու պահելու այն արարքներից, որոնք մարդկանց ամոթ են բերում՝ հայհոյանքից, բամբասանքից, իրեն չվերաբերող հարցերում անպատշաճ ավելորդ հետաքրքրասիրությունից: Սրանք մարդուն հասցնում են պատուհասի: Ճիշտ է, մեր միջնադարյան գրականության մեջ տարածված աֆորիստիկ խրատականքներից սրանք շատ հեռու են և փոքր, բայց ավելի կենցաղային-անմիջական են, հետևարար և ավելի մտաշելի կարդացողի համար: Սրանք շեն կարող խրատներ անվանվել, այլ ավելի շուտ փոքր հորդորներ:

Վաղանցուկ կյանքում բարի անուն և դործ թողնելու միջնադարյան հասկացողությունները շէին համադրվում «հողեղէն մարդու» խառնվածքին: Այս երկուսի գիտակցությունը բանաստեղծի հոգում ստեղծում էր ողբերգություն, ինչպիսին ստեղծվել էր միջնադարի բոլոր ստեղծագործողների հոգում, որովհետև ինչպես նրա ժամանակակից Կոստանդին Երզնկացին էր ասում, թե՛

Հոգիս է խիստ յօժար բանից իմաստնոց լըսել,  
Մարմինս է հեշտասէր, զի աշխարհէս է ինք ծընել...  
Ի յերկուքիս միջին մամ եմ ի մէջ հըրոյն վառել.  
Անհիմն և անհաստատ՝ եմ անհանգիստ ի շուրջ եկել...

Այսպես էլ Կեշառեցին էր ողբում իր անելանելի հոգեվիճակը.

Ի՞նչ առնեմ ես այս գերիս,  
Որ խաբած եմ յառօրէիս

Ինձ շատ մեղանք մի դրնէք  
Զի դիպայ անզերծ վտանգիս.

Նա իրեն հիվանդ է տեսնում, այսինքն անկարող ենթարկվելու միջնադարյան «առողջ» պատվիրաններին. միջոցներ է որոնում այս «անզերծ վտանգից» փրկվելու, ուրիշներին է դիմում, գուցե որեէ մեկը միջոց կսուլորեցնի նրան ապաքինվելու աշխարհիկ ցավերից.

Հիանդ եմ, ի տես եկէ՛ք,  
Միթէ գեղ առնէք խոցերիս.  
Ահ ու դող պատեց զհոգիս,  
Պատճառ ի՞նչ դնեմ տանողիս:

Թեև շատ տեղ և շատ որոշակի նա շի ասում իր ողբերգությունն աշխարհիկ ակունքների մասին, բայց քանի որ նա բանաստեղծ է, որքան էլ միջնադարյան հայացքներով սնված, նրա անկեղծ խոսքի մեջ սպրդում է նրա անձնական թախիծը. կյանքի բանաստեղծական ընդհանրացման հետ մեկտեղ նա կոնկրետացնում է նաև իր անձնական վերապրումն ու տրամադրությունը.

Սէրն էր անդրնդոց նրման  
Զիս ի վայր քարշեց փոշիման  
Աւուրքս էր ծաղկի նրման,  
Որ անցաւ երազի նրման:

Այս տրամալից բանաստեղծության կողքին ստեղծված «Կանանց ազգ, լացէք զձեզ» ոտանավորն, անշուշտ, մի արձագանք է ոչ միայն սրբակրոն մտայնության, այլ թերևս նաև անձնական հիասթափությունների. այնտեղ արգահատանքի խոսքեր է ուղղված ողջ կանանց ցեղի դեմ, որը «տուն շինէ իսկի, բայց քակէ ողորմ ու լալի».

Ում որ բարեկամ դառնայ  
Զընդանէ անզերծանելի.  
Զինչ զավլ ու երդումն ուտէ  
Ոչ մինն ի հուն շի հանէ,  
Անկուշտ է կրակի նման,  
Զինչ ի յինքն առնու, զայն այրէ:



Վերջապես սիրո զգացման ամենախոր արտահայտութիւններէ  
րից մեկն է վարդի ու բլբուլի շափածո սիրավեպը, որ թերևս  
արեւելքի ազդեցութեամբ հայ բանաստեղծութեան նյութ դարձրեց  
միջնադարյան բանաստեղծ Կոստանդին Երզնկացու հետ միասին և  
Խաչատուր Կեչառեցին:

Այս վերապրած զգացման մի արտահայտութիւն է, մի գեղեցիկ  
երազանք, որ իրեն հատուկ ներքին թախիծով ու ջերմութեամբ  
տվել է Կեչառեցին.

Տրտում կամ և տխուր ի յայսմ աշխարհիս,

— գրում է սիրակեղ սոխակը վարդին, —

Ալեկոծեալ ծփիմ ի մարմնոյ նաւիս,  
Կամ տատանեալ ալեօք ի մէջ ծովակիս  
Եւ եղեզան նման հողմըն շարժէ զիս...  
Նամակիս արասցես շուտով պատասխան,  
Եւ ինձ ծանուցանես զժամ քո գալստեան,  
Զի կարացից գիտել ի մըտաց քո բան,  
Թէ չէ ինձ հասանի շուտով օր մահուան:

Եթե վարդի ու բլբուլի սիրո պատմութեան ակունքը դալիս է  
արեւելքից, որով Կեչառեցին զրկվում է այս սիրավեպի բովանդա-  
կութեան և սյուժիի հեղինակութիւնից, ապա նյութի մշակման  
առաջնութիւնը և հայ գրականութեան թեմա դարձնելը անվերա-  
պահորեն պատկանում է Խաչատուր Կեչառեցուն, որի հետևութեամբ  
և նմանութեամբ, թերևս անմիջականորեն ժողովրդական պատմու-  
թիւններից օգտվելով, վարդի և բլբուլի սիրավեպի մի ամբողջ շարք  
ստեղծեցին միջնադարյան մեր հետագա բանաստեղծներ՝ Գրիգորիս  
Աղթամարցին, Զարարիա Գնունյաց կախկոպոսը, Խաչատուր Խար-  
բերդացին, Առաքել Բաղիշեցին և ուրիշ անանուն հեղինակներ:

Կարծես սիրո տրամադրութիւնների արգասիք է Կեչառեցու մի  
բանաստեղծութիւնը, աշխարհիկ զգացումների հետևանքով վերա-  
նայած մի հայացք, որտեղ միջնադարյան բանաստեղծի ողբերգու-  
թիւնը տեղի է տալիս տարակուսանքի և նույնիսկ նուրբ երգիծան-  
քի. եթե մինչ այժմ նրա բանաստեղծութիւններում արտացոլված էր  
մարդու անելանելի վիճակը հոգու և մարմնի անվերջանալի պայ-

քարում, ապա այստեղ արտահայտվում է նրա տարակուսանքը բնորոշված ճշմարտությունների նկատմամբ: Մարդկային հորինվածքից բխող, բնությունից մարդուն արված հատկանիշների և արարքների համար, ոչ թե մարդու մարմինն է մեղավոր, այլ նրա ստեղծվածքը, բնությունը, մարդկային էությունը, հոգին: Մարմինը մարդու արտաքին ձևավորումն է, մարդուն՝ մարդկայնությունն ավելը նրա բանական միտքն է և հոգին, հետևաբար մարդու մարմինը նրա բանականության և մարդկային բնույթի կամահատարն է և մեղադրանքի առարկա չի կարող դառնալ: Այս դեպքում բանաստեղծը ոչ թե ողբերգություն է ապրում, այլ, ընդհակառակը, թեթևացած իր ներքին տարակուսանքներից և կարծես թե արդարացած երգիծում է.

Հոգիս դատախազ լինի մարմնոյս  
'Ի եղուկ տայ սրախս.  
Թէ՛ է՞ր կուտեցեր շարիս  
Յանցաւոր այս սուտ աշխարհիս.

«Դատախազ» հոգու մեղադրանքին սրամիտ պատասխան է տալիս մարմինը.

Մարմնոյս պատասխանն է այս,  
Որ ի տալ մըտացս և հոգոյս՝  
Զիս պարտաւոր է՞ր առնես.  
Այս սուտ է զուր իմ խոցերոյս.  
Ես ձի, և դու տէ՛ր ձիոյս.  
Ես ծառայ, 'ւ իշխան դու գերոյս.  
Կամիլըդ քո՝ գործ լինէր ինձ,  
Մեղ է՞ր դընես հողածնոյս:

Մարմինն այստեղ պաշտպանությունից մեղադրանքի է անցնում և արդարացնում մարդկային խառնվածքի բնական ձգտումն իբրև մարդկային էության անհրաժեշտ դրսևորում:

Գիտակցե՞լ է արդյոք Խ. Կեչառեցին, որ իր ստեղծագործություններում, իր տարակուսանքների, սիրո առաջին թոթովանքների, հոգու և մարմնի վեճի, Աղեքսանդրի և Քրիստոսի համեմատությունների մեջ արտացոլվել են այնպիսի ընկալումներ ու տրամադրություններ, որոնք ինքնին ապացուցում էին հին մտայնությունների

ու աշխարհայացքի անկարողութիւնը նորի հանդեպ: Հավանորեն ոչ: Բայց նա անկարող է եղել իր ստեղծագործութիւնների առջև փակել կյանքի առաջընթացի անխուսափելի ներգործութիւնը:

Հայ միջնադարյան սքոլաստիկ գրականութեան հիմքերը խարխուրեցին ոչ միայն ազատախոհ հեղինակներն իրենց առաջավոր գաղափարներով, այլև այն հեղինակները, որոնք իրենց ստեղծագործութիւններում կամա թե ակամա արձագանքեցին ժամանակի պահանջներին՝ ենթարկվելով հասարակական գիտակցութեան նոր ընկալումներին ու նոր մտայնութիւններին:

Առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում Կեչառեցու Աղեքսանդրի ոտանավոր պատմութեան այն մեծադրվագ հատվածները, որ պահպանվել են ձեռագրերում: Սա հետաքրքրական է այն առումով, որ առաջին պոեմատիպ ստեղծագործութիւններից մեկն է, որի հերոսը պատմական կոնկրետ անձնավորութիւն՝ մարդն է իր ներքնաշխարհով, պետական գործունեութեամբ ու փոխհարաբերութիւններով: Մինչ Կեչառեցին էլ ոտանավոր պատմութիւններ եղել են, բայց պետական գործիչն իր անձնական կյանքով, բազմապիսի փոխհարաբերութիւններում հանդես չի եկել: Այստեղ ընդգծված է նախ Աղեքսանդրի իբրև գործչի արժանիքները: Աղեքսանդրը, թեև հարկատու է Դարեհին, բայց նա Սասունցի Դավթի նման հրաժարվում է երկրի վրա դրված հարկից և պատգամավորներին էլ սպառնալիքով կտ ուղարկում.

Փիլիպոս նստեալ յաթոռ  
Դարեհի դեսպանք առաջի,  
Որք ուզողք եկին հարկին  
Պահանջել ըզգրամն արքային:

Աղեքսանդր յառաջ եկեալ  
Խօսեցաւ բան զարմանալի,  
Ասաց թէ՛ այլ ոչ տամ հարկ  
Ըզտուեալն առնում Դարեհի:

Գնացէք և ջուսպ տարէք  
Դարեհի պարսից արքային,  
Թէ՛ Փիլիպոսի որդին  
Աղեքսանդր զայս բան կու խօսի:

Երբ որ ես տղայ չէի,  
Հայրեն իմ հարկ տայր քեզ՝ Դարեհի.  
Այժմ որ ես որդի եղայ  
Պահանջեմ զհարկն իմ հայրենի:

Ընդհանրապես այս եղած հատվածներով զփլար է որոշակի բան ասելը, քանի որ այդ պատմության շարժած հատվածներից մի երկուսն են համեմատաբար ամբողջական՝ Աղեքսանդրի և Դարեհի, Պովրոսի և Աղեքսանդրի մասը, մնացածները բավականաչափ կրցկրտուր են ամբողջության մեջ: Ինչպես ասվեց, բավականաչափ կրցկրտուր է հենց պատմությունն ինքը, դա կարծես Աղեքսանդրի կյանքից վերցրած առանձին միջադեպերի համախմբում լինի. նրանց բոլորին միացնող գիծը Աղեքսանդրի կերպարն է: Այդ պատճառով իսկ այս ոտանավոր պատմության որոշ կցկտուրությունը անպայման նշան չէ, որ դրանք առանձին-առանձին հորինված կտորներ են՝ նկատի պետք է առնել, որ մոտ 400 տարի տևող ձեռագրական գրչությունների մեջ նրանք և՛ մասնատվել են, և՛ խառնվել մյուս կաֆաներին, այնպես որ բավականաչափ աղճատված վիճակով են մեզ հասել. բայց, շնայած դրան, մնացած համեմատաբար ամբողջական հատվածների մեջ պահպանվել է նախնական շարադրությունը: «Տաղի» հետաքրքրական հատվածներից են Յլագուխ ձիու ծննդի պատմությունը, Նեղդաներոսի սպանության մասը, որ միանգամայն տարբեր են պատմությունից: Բնագրում ոչ մի խոսք չի ասվում Աղեքսանդրի ձիու ծովային ծագման մասին. «Եւ յայնմ ժամանակի,— գրված է պատմության մեջ,— եկեալ ածին Փիլիպպոսի մատակապանքն ի կուտիցն ձի կարի մեծ յոյժ և ածին կացուցին առաջի այսպէս ասելով. «Տէր արքայ, զայս ի կոյտանքո գտաք ծնեալ գեղեցկութեամբ և արագութեամբ առաւել, քան զՊեգասիոս և քան զԱրիովնայն. զի և ի Լամոմենտեայ բերեալ մատուցանեմք քեզ. նորա տեսեալ զայնքան գեղեցկութիւն և զմեծութիւն զարմացաւ յոյժ և ասէ. գեղեցիկ է, երգուեալ յիմ փրկութիւն: Բայց, ասեն, տէ՛ր, մարդակեր է...» և այլն<sup>1</sup>:

<sup>1</sup> Պատմութիւն Մեծի աշխարհակալին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ, 1842, էջ 16:

Այնինչ ոտանավոր սլաոմության մեջ Յլագլուխ ձին ծովային  
ծագում ունի.

Յորժամ, որ ծընաւ զտղայն  
Զերթ լուսին և արեգական,  
Յըլայգլուխ ձին ծովէն ելաւ  
Եւ եկեալ դուռն արքունական.

Աղէքսանդր որ զայն տեսաւ  
Եւ ասաց՝ Փառք քեզ տիրական  
Ինձ պարտ է հեծնուլ զնայ,  
Եւ տիրել զաշխարհս ամենայն:

Այնուհետև, Պատմության մեջ Աղէքսանդրը սպանում է Նեգ-  
զաներոսին, բայց իմանալով, որ իր հայրն է՝ թաղում է մեծահո-  
գորեն. «Եւ ուսեալ Աղէքսանդրէ, եթէ հայր նորա է, որ վախճանե-  
ցաւ, երկեաւ թողուլ զնա ի խորխորատին, զի մի գազանակուր լի-  
ցի, վասն զի գիշեր էր և ամայի վայր. գուր խանդաղատանաց  
առեալ առ սերմանողն իւր՝ բարձեալ բերէր զնա ի վերայ ուսուց  
իւրոց արիաբար մինչ ի ներքոյ դրացն. և մտեալ առաջի մօրն պատ-  
մեաց նմա զամենայն... Եւ Ոլոմպիոս հիացեալ զարմանայր և  
ստգտանէր զանձն իւր, զի մոլար խարկանօք և հնարիւք մոգութեամբ  
շնութիւն կրեաց: Ապա թաղեաց զնա վայելչաբար զնոյն Նեգրա-  
ներոս իբրև զհայր որդոյ իւրոյ, և գերեզմանս արարեալ անդ եբարձ  
ևդ զնա...»<sup>1</sup>: Այնինչ ոտանավորի մեջ Աղէքսանդրն սպանում է Նեգ-  
զաներոսին և կարած գլուխն ուղարկում իր մորը՝ Ոլոմպիային ի  
նշան վրեժի հատուցման.

Առաւ զթաջն ու զթախտն զամէն  
Ու աւեր էած զԵգիպտոս  
Սփռեաց և ի ձեռն էած,  
Ու սպանեց զՆեգզանիբոս.

Զգլուխըն բերել երես,  
Եւ տարաւ առ Ոլոմպիոս.

<sup>1</sup> Պատմութիւն Մեծի աշխարհակալին Աղէքսանդրի Մակեդոնացւոյ,  
Վենետիկ, 1842, էջ 18:

Մա՛յր, մա՛յր դու ճշմարիտ խաւսիր  
Սայ է իմ հայր նեղզանիրոս.

Այս մէկ բանըս լաւ եղաւ,  
Որ շարին աղանդն յայտնեցաւ,  
Իւր մեղքն բռնեց ըզինքն  
Յիր ծընած յորդուն սպանեցաւ...

Սրանք մանր, բայց օժանդակ փաստեր են ապացուցելու, որ  
Խաչատուր Կեչառեցու գրածը ոչ թէ բովանդակութեան կառչած կա-  
ֆաներ են, այլ համեմատաբար ինքնուրույն ամբողջական հյուս-  
ված հատվածներ, եթէ ոչ ամբողջական մի պատմութիւն, որոնց  
մասին դարերի ընթացքում աղճատված բեկորներով այժմ դժվար է  
դատել:

Համեմատաբար ամբողջական է Պովրոսի և Կանտակէ տիրու-  
հու հետ կապված միջադեպերի պատմութիւնը, բայց պետք է ասել  
որ, իհարկե, այդ բոլոր հատվածները հասկանալի են լինում սոսկ  
Պատմութիւնը լավ իմանալուց հետո: Առանց բուն Պատմութեան  
այս Տաղը ներկա վիճակով կիսով շափ անհասկանալի է թւում:  
Յածր է և Տաղի արվեստը: Ճիշտ է, այն գրված է մատչելի, թարմ  
«հայրենների» տաղաչափութեամբ, սակայն շատ թույլ է իբրև գե-  
ղարվեստական ստեղծագործութիւն. ինչպես երևում է Կեչառեցու  
բանաստեղծութիւններին դեղարվեստական շունչ տալիս է իր զգա-  
ցումների գրսևորումը, իր ներքինի բանաստեղծական վերարտա-  
գրումը, և Աղեքսանդրի Տաղի մեջ էլ ուժեղ են այն հատվածները,  
որտեղ կա գրամատիկ դրութիւն և մարդկային զգացում. գեղեցիկ  
հատվածներից է մոր ողբը Աղեքսանդրի մահվան լուրն առնելուց  
հետո, հուզական Դարեհի դուստր Հոռքսիանեի ողբը Աղեքսանդրի  
շիրմի վրա.

Ազգեցէ՛ք ի տուն պարսից,  
Եւ ասէք հօրն իմ Դարեհի,  
Դուստրն քո եղուկ դարձաւ  
Ու լալոյ եղև արժանի:

Ամբողջութեան մեջ սա մի թույլ գործ է, սակայն հետաքրքրա-  
կան իր ժամանակին:

Ձեի իմաստով էլ՝ մատչելի լեզվով ու տաղաչափությամբ սա առաջին գործերից մեկն է եղել, որ միջնադարյան գրականությունը մոտեցրել է ժողովրդական ստեղծագործությանը: Այստեղ կիրառված գրական հնարները նորություն էին մեր գրականության համար: Նախորդ բարձրարժեք, բայց սյուժետային միապաղաղ ողբերի կողքին, Կեչառեցին բերում է բազմաթիվ դեպքերով ու գործողություններով, բազմաթիվ հերոսներով հարուստ մի ուսանավոր պատմություն: Եթե նույնիսկ Խաչատուրի ուսանավոր Տաղը չէր գրված իբրև ծայրե ի ծայր ամբողջական մի ստեղծագործություն, այլ մեծադրբվազ հատվածական, այդ միևնույն է. նա հարթել է մի ճանապարհ, որով անհրաժեշտորեն պետք է ընթանար մեր միջնադարյան պոեմի զարգացումը:

Սա պոեմի զարգացման այն ճանապարհն էր, որով հետո գնացին մեր մյուս տաղասացները. Առաքել Բաղիշեցին տվեց Հովասափի-Բարազամի ուսանավոր պատմությունը, հանդես եկավ Կոսպարի և Մարխա վաճառականի հետաքրքրական պատմությունն առած վկայարանություններից, Առաքել Մյունեցու «Ագամգիրքը», հյուսված պարսկանոն պատմությունների վրա, Թլիուբանցու «Քաջ Լիպարիտի տաղը», «Պատմութիւն Ֆարման մանկանն» և այլն: Աղեքսանդրի Տաղը նորություն էր մեր գրականության համար իբրև գրական արտադրանք, գրական տեսակ: Մի ճյուղով այն գնաց դեպի պոեմի ստեղծումը, մյուս կողմից՝ կաֆաների ներխուժման ահունք հանդիսացավ:

\* \* \*

Երեք հիմնական գծով է տարբերվում Կեչառեցու ստեղծագործությունը նախորդներից և այդ երեք կողմով էլ նա կապված է ժամանակակիցներ՝ Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու հետ:

Առաջինն այն է, որ նրա բանաստեղծությունների գերակշիռ մասը գրված է հայրենիների՝ 7—8 յամբանապեստյան շափով: Սա հայ ժողովրդի ստեղծագործության սիրված ու հարազատ այն ուրիշիկ և երաժշտական շափն է, որով հավասարապես գեղեցիկ է հնչում և խոհր, և վիշտը, և սերը, և դաղափարը, և ողբը:

Այս շափի կիրառումը բանաստեղծության մեջ նշանակում էր խախտել մինչ այդ եղած հոգևոր երգերի միապաղաղ ձևերը, տալով գրականությանը ժողովրդական ստեղծագործության առաջին

շունչը: Պատահական չէ, որ այդ շափի տոաջին օգտագործողը հոգևոր բանաստեղծության մեջ եղաւ Գրիգոր Նարեկացին 10-րդ դարում.

Ես ձայն առիւծուն ասեմ  
Որ գոչէր ի քառաթևին.  
Ի քառաթևին գոչէր,  
Ձայն առնէր ի սանդարամետսն՝:

Այս շափի կիրառումը հայ գրականության աշխարհականացման այն նախնական և անհրաժեշտ տարրերից մեկն էր, որին զուգահեռ գրականություն է մտնում աշխարհիկ պատկերների օգտագործումը սկզբում կրոնական, ապա հասկանալիորեն նաև աշխարհիկ բանաստեղծության մեջ:

Եվ իրոք, այդ շափի օգտագործմամբ Նարեկացու հետևորդը եղաւ Ներսես Շնորհալին իր հանելուկների մեջ, որին հաջորդում են Յրիկը, Կոստանդին Երզնկացին, Խաչատուր Կեչառեցին և մյուսները: Սա այն սերունդն է, որ հայ միջնադարյան գրականության մեջ վտակ բացեց ժողովրդական ստեղծագործության հետզհետե ուժեղացող հոսանքի ներթափանցման համար:

Հայրենի շափով են գրված Կեչառեցու ոտանավորների գերակշիռ մասն ու Աղեքսանդրի Տաղը: Բանաստեղծությունների մեջ հիմնականում հայրենի շափն օգտագործելով, Կեչառեցին այլ հնարներով՝ յուրահատուկ լեզվի ու պատկերների, նմանապես և բազմահանգության միջոցով միօրինակությունից հանել է իր ստեղծագործությունը և ստեղծել տարբեր ու հարուստ տպավորություններ:

Այսպես, հայրենի շափով է գրված նրա հայտնի ողբը՝ «Ես եմ կորուսեալ ոչխար»-ը, միևնույն հայրենի շափով է գրված նրա խրատը.

Առ քեզ մի՛ փակեր դաշերդ  
Եւ դառնալ սրատես օտարի,  
Թէ ոչ՝ հանց ի խոր ընկնիս  
Որ շտեսնուս զլոյսն արևի:

1 Մ. Ա. Բ. և Ղ. Յ. ն., Տաղաշափություն, Երևան, 1933, էջ 380:



Միանգամայն այլ շափի տպավորութիւն է թողնում նրա հոգու  
և մարմնի էպիկ նկարագիրը.

Հոգիս գատախաղ լինի մարմնոյս  
'ի եղունկ տայ սրտիս,  
Թէ՛ է՞ր կուտեցեր զշարիս  
Անցաւոր այս սուտ աշխարհիս:

Դիմումի մեջ էլ նույն շափն է կիրառում կեչառեցին.

Կանա՛նց ազգ, լացէք զձեզ՝  
Դուք էք զէն ի սատանայէ.  
Դըստէր էք այն մօրն ձեր,  
Որ եհան ըզհայրն ի դրախտէն:

Ավելի ուշագրաւն Աղեքսանդրի Տաղի հայրենի շափով գրելու  
հանգամանքն է.

Գնացէք և ջուսպ տարէք  
Դարեհի պարսից արքային.  
Թէ Փիլիպոսի որդին  
Աղեքսանդր զայս բան կու խաւարի:

Սա հեղինակի խելամուտ վերաբերմունքն է իր գործին: Աշ-  
խարհիկ բովանդակութիւնն ունեցող, ժողովրդականացած պատմու-  
թյանը նա տվել է համապատասխան թեթև ու մատչելի, ժողովրդ-  
դական բանաստեղծութիւններին հարազատ ձև:

Հայրենների շափի լայն օգտագործումը կեչառեցու բանա-  
ստեղծութիւնների առաջին կողմն է:

Նրա ստեղծագործութեան մյուս՝ ավելի բնագծված հատկու-  
թիւնը պատկերավորութիւնն է, կապված դարձյալ ժողովրդական  
բանահյուսութեան ակունքների հետ: Այստեղ կեչառեցին անհամե-  
մատ հարուստ է, քան նախորդում: Նա կիրառում է ժողովրդական  
ստեղծագործութեան բազմազան ձևերը՝ սկսած պարզ համեմատու-  
թիւնից՝ անձնավորում, մետաֆորա, զուգադրութիւն, հակադրու-  
թիւն և այլն: Չափազանցրած շենք լինի, եթե ասենք, որ կեչա-  
ռեցին ուղղակի մտածում է պատկերներով: Ամբողջ ստեղծագոր-

ծության մեջբերումից խուսափելու համար հաշտի տանք լսի մի քանի օրինակներով:

Նա ունի սովորական պարզ համեմատություններ. իր հոգեկան մի դրությունը կամ կյանքի ընթացքը, կամ որևէ երևույթ համեմատում է մի այլ երևույթի հետ պատկերավոր և կենդանի դարձնելու համար ասածը.

Աշխարհս էր ի ծով նրման  
Զի ի վայր տարաւ հանդիման...

Աուրքս էր ծաղկի նրման,  
Որ անցաւ երազի նման:

Նկատենք, որ այս երկրորդ օրինակում մի երևույթ բնորոշելու համար Կեչառեցին բերում է երկու համեմատություն. օրերը և զեղեցիկ էին ծաղկի նման, և վաղանցուկ երազի նման:

Այս կարգի համեմատությունների ավելի ամբողջական օրինակ է մոզերի գալստյան պատմության մեջ Հիսուսի գովքը.

Նման է մայր քո արուսեկի, և դու նման արեգական.

Նման է մայր քո ամպոց ցողելոյ, և դու նման ծիրանի,  
դատոյն Նոյի...

Նման է մայր քո աւուրց դարնայնո, և դու նման ծաղկին  
համասպրական...

Բայց Կեչառեցին ավելի զիմում է համեմատության բարդ ձևին՝ մետաֆորաներին, որոնք առարկային կամ երևույթին տալով միանգամայն օտար հատկություն, ուժեղացնում են հեղինակի խոսքը.

Թէ մարդ ես ու միտ ունես  
Նս տամ քեզ խրատ մի քանի.  
Դու բա՛ց ըզստիդ ականջն  
Եւ զըրէ ի սիրտ, ւ ի՛ հոգի....

Կամ՝

Տո՛ւր ինձ բնութիւն բարի,  
Կակղացո՛ զսիրտ իմ փառեղէն...

Մի այլ տեղ՝

Նկին ընդ ինձ հանց ասին,  
Թէ՛ զընաց օրերդ ի ձեռաց

Նւ կամ թե՛

Դու ես հոգոյս հոգի, յիսնէ հեռացար...

Պատկերավոր մտածողության մի այլ ձև է, երբ հեղինակն իրեն փոխանակ համեմատելու որևէ երևույթի հետ, ուղղակիորեն իրեն դիտում է իբրև այդ երևույթը, կիրառելով զուգադրության կամ հակադրության հնարները.

Հոգի հրեղէն էի  
Յանվարատ խաւար զընացի...  
Անուշ քաղցր աղբիւր էի,  
Զիս ի ցելս մեղաց խառնեցի...  
.  
.  
.  
Մաղկեալ ես տերև ունիս,  
Յայտից այլ շուտով տի քափիս...

Բնության և մարդու պոետական այսպիսի զուգադրությամբ բանաստեղծը հարստացնում է մարդու կերպարը, օժտելով նրան նաև բնության գեղեցկություններով, բազմազանությամբ ու գույներով:

Կանաչ ես վայելչ կենօք,  
Փոխի գոյնդ, և շուտ մեռանիս...

Ավելի ուրույն և հետաքրքրական է Կեչառեցու կերտած պատկերների մյուս առանձնահատկությունը: Նա ոչ միայն սոսկական համեմատություն է անում, ոչ միայն զուգադրում կամ հակադրում է իր հոգեվիճակը բնության որևէ կոնկրետ երևույթի հետ, այլ համեմատության համար վերցնում է ամբողջական երկարատև մի գործառնություն, և այն իր արդյունքով համեմատում իր վիճակի հետ: Այս տեսակետից անդերազանցելի հատվածներ ունի նրա լայն տարածում ստացած «Ես եմ կորուսեալ ոչխար» բանաստեղծությունը.

Հանցգորուն զինչ բուանի տերեն  
Եւ ծաղկի դարունն ի ծառէն,  
Տէր իմ, ծաղկեցո՛ հոգով,  
Զիս ի սէր քո աստուածեղէն:

Հետզհետե ուժեղանում է շարժումը.

Հանցգորուն զինչ աշնան քամին,  
ՈՐ քափէ գտերենն ի ծառէն,  
Հողմով մեղանաց իմոց  
Զրկեցայ անանց պսակէն...

Մի քանի տուն հետո նա ոչ միայն բնությունն է տալիս ի շարժման մեջ, այլև այդ շարժման ավարտը փոխանցում է իր հոգուն, կամ իր հոգու երևույթը համարում բնության երևույթի շարունակությունը.

Հանցգորուն զինչ ելնէ ժամ ժամ  
Թանձրացեալ քուխ ամպն ի ծովէն,  
Ի յորումանէ նորա  
Սասանի ամէն մսեղէն,  
Իմ մեղքն է խաւար կամար,  
Կու բերէ կարկուտ հրեղէն,  
Քանի կու յիշեմ ըզնա  
Կու դողայ ոսկերքս իմ ամէն...

Մի այլ տեղ նկարին պատկեր է տալիս կեշտոնցին, օգտագործելով կենցաղային մի մոմենտ:

Հանցգորուն զինչ հանեն մարդիկ  
Հնարիւք զձուկն ի ծովէն,  
Որ պահ մի տըտանըն տայ  
Ու մեռնի կարօտ ի ջրեն,

Ես արտաքսեցայ մեղօք  
Յիմաստից անհուն քո ծովէն  
Հոգիս թալկացաւ դէմ քեզ  
Զիս կեցո՛, ծնեալդ ի կուտէն...

Կեչառեցու բանաստեղծությունների պատկերավորության առանձնահատկությունը նրանց գինամիկ էությունն է. բնությունը շարժման մեջ, ծովը, ծաղիկները, ծառերը, ծովում կենդանիները (հիշենք նրա գարնան նկարագիրը, վարդի ու բլբուլի պատմության մեջ):

Պակաս արտահայտիչ չեն այս տեսակետից նաև նրա եկեղեցական տաղերը, իսկ հատկապես Խաչելության տաղը.

Ամենայփրկչին կերպին, դրոշմեալ պատկերին,  
Գառն ի Գողգոթայ զենեալ ի սուրբ սեղանին,  
Դասքըն դողային վերին, ինչ տէրն ի խաչին,  
Նրերէք երկիր ու երկին, ինչ բևեռէին...

Այս տաղում երևում է Կեչառեցու կիրառած մի այլ հնարը: Տաղը գրված է այբուբենի կարգով և ծայրից ծայր առաջին և երկրորդ բառերի ալիտերացիայով.

Ժանդ ժողով հրէից գնդին ի յահեղ պահին.  
Ի էլի-էլին ձայնէն, սասանէք երկիր.  
Լուա լուսաւորաց ծագեաց հոգոցն ի բանդին.  
Խոր խաւար ծածկեաց երկիր, ինչ բևեռէին...

Տաղաչափական նոր ձևերի և ժողովրդական մտածողության օգտագործման հետ մեկտեղ, Կեչառեցին սրանց համապատասխան լեզու է բնորել՝ միջին հայերենը: Բայց, ինչպես ասվել է արդեն վերը, Կեչառեցու կիրառած միջին հայերենը Ֆրիկի հայերենը չէ: Այն անհամեմատ զերծ է նեղ բարբառային բառապաշարի օգտագործումից. ամբողջ ստեղծագործության մեջ հանդիպում ենք «ճար», «փողջիման», «հանց», «հանցդուն», «պաղչայ», «ի լման», «ահոկ», «ելամ ու զուսայ», «ճոհար» հատ ու կենտ բառերին: Իսկ գրական ձևեր, որքան ուղեք: Սակայն, գրաբարյան բառերի օգտագործմամբ Կեչառեցու բանաստեղծությունները չեն դառնում գրաբար: Նրանք գրված են ժողովրդական մտածողությամբ. հետևաբար և աշխարհիկ լեզվի շարահյուսությամբ և ավելի՛ բայերի բարբառային ձևերի կիրառումով. այսպես «մտնուլ», «տի թափես», «կու շահիս», «դիպայ», «կու տանի», «գիտնալ» «քարշեց» բայաձևերը նրա բանաստեղծությունների մեջ քիչ չեն պատահում:

Կեչառեցին ոչ միայն գրում է ժողովրդին հասկանալի ու մտա-  
շելի ձևով, նրա լեզվով ու մտածողութեամբ, այլ նաև մտցնում է  
ժողովրդական ոճեր ու դարձվածքներ.

«Զարթի՛ր, շուտով, ճար արա» — ճար անել  
կամ՝

«Ոչ խար տայ լեզուիդ խօսից» — խար տալ  
Եվ կամ՝

«Թէ գնաց օրերդ ի ձեռաց» — ձեռքից գնալ,

իսկ մի տեղ նա օգտագործում է ժողովրդական առակից ասացվածք  
դարձած արտահայտությունը, թե՛

«Նման այնոր մի լինիր, որ շափէ զքամին ի սարի»:

Այս հատկությունների կողքին Կեչառեցու ստեղծագործություն-  
ները օժտված են և այլ նշանակալից կողմերով: Նրա բանաստեղ-  
ծությունները ձգտում են փոքր մասշտաբների: Նա կարճ ոտանա-  
վորի առաջին ստեղծողներից է, որը, դուրս նույնպես պետք է դի-  
տել իբրև հայրենիների ազդեցություն: Սա, երբեմն նվազագույնի  
հասնող այն շափն է, որ հետագայում պետք է քառյակ դառնա.

Խաչատո՛ւր, առնել լաւ է,  
Քան ասել և ոչ կատարել.  
Աղքատ և արդար լաւ է,  
Քան գիտուն և յոյժ մոլորել:

Սրանք հատկանիշներ են, որոնք ապացուցում են Խաչատուր  
Կեչառեցու փոքր, բայց իսկական բանաստեղծ լինելու փաստը: Նրա  
բանաստեղծությունների ամենամեծ արժանիքը անկեղծությունն է:  
Նա մի բանաստեղծ է, որ արտահայտում է իր սեփական զգաց-  
մունքը, ի՛ր խոհը, ի՛ր վերաբերմունքը, ի՛ր հոգու տվյալանքը. նրա  
բիշ ոտանավորներն են գրված «յաւուր պատշաճի»: Նրա ստեղծա-  
գործությունները, թեև քիչ, բայց գողարիկ, անկեղծ խոսքեր են  
ուղղված ոչ այնքան ընթերցողին, որքան ինքն իրեն: Կեչառեցին  
նուրբ քնարերգու է, և նրա բանաստեղծությունն ավելի ջերմ է թվում

իր խոսքի մատչելիությամբ, ժողովրդական լեզվին հատուկ պատկերավորությամբ, հստակությամբ, շարահյուսությամբ և տաղաչափությամբ:

Այնքան նշանակալից են Կեչառեցու բանաստեղծությունների «ձևական» նորամուծությունները, որ դրանք շին կարող սոսկ արտաքին երևույթ համարվել. այդ նորամուծությունները փոխել են միջնադարյան բանաստեղծության դեմքը. միջնադարյան բանաստեղծության «արտաքին» փոփոխություններից հետո մի քայլ էր մնում այդ ձևից անցնելու նոր բովանդակության արտահայտմանը: Գրականության մեջ այս միանգամից կատարվել չէր կարող: Միջնադարյան բանաստեղծության «ձևական» փոփոխություններն իրենք արգասիք էին նոր մոտեցումների, նոր գաղափարների խմորման և անխուսափելի ճանապարհներ ու անցուղիներ էին, որոնցով պետք է անցնեի միջնադարյան գրականությունը նոր գաղափարների արտահայտմանը հասնելու համար:

\* \* \*

Խաչատուր Կեչառեցին հայ մշակույթի համեստ, բայց հետաքրքրաբերական դեմքերից մեկն է: Նրա ստեղծագործություններում բեկվել են ժամանակի հասարակական հարաբերություններն իրենց հակասություններով: Նա իբրև գործիչ վերապրել է իր ժողովրդի ծանր վիճակը, իր գործունեությամբ ու ստեղծագործությամբ փորձել է արթուն պահել իր ժողովրդի հայրենասիրական զգացումները, պայքարել է նրա ինքնուրույնությանը վտանգող ռոնձգությունների դեմ, երազել է հայրենիքի ազատությունը օտարների բռնակալական լծից: Նրա ստեղծագործություններում արտացոլում է դտել միջնադարյան իշխող գաղափարախոսությունը, բայց միաժամանակ այնտեղ երբեմն-երբեմն առկայծել են միջնադարից տարբեր՝ մարդկային մտքի տարակուսանքները ու վերապահումները, մարդկային էությանը հատուկ կենսասիրությունը, սերը և վերջապես կենդանի մարդն իր անկեղծ մտորումներով: Եվ չնայած իր աշխարհայացքի որոշակի միջնադարյան լինելուն, նրա ստեղծագործությունները միշտ զարք զգալի կողմերով կամա թե ակամա կապվում են հայ դրակախության այն նոր հոսանքի հետ, որը սկզբում աննկատելի վտակներով, իսկ հետագայում հորդ հոսանքով ազգարարելու էր մարդկային իրավունքը՝ ֆեոդալական կաշկանդիչ կապանքների դեմ:





# ԲՆԱԳՐԵՐ





«Բնագրեր» բաժնում զետեղված են Խաչատուր Կեչառեցու անունով Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռագրերում պահպանված բոլոր ստեղծագործությունները՝ չափածո երկերը, որոնք ժողովածուում «Տաղեր» ընդհանուր վերնագրի տակ են տրրված, «Վասն գալստեան աստուծոյ առ մարդիկ» ճառը, որ ներկայացված է Իրրե Խաչատուր Կեչառեցու արձակի մի նմուշ և Աղեքսանդրի սլաոմության հետ առնչվող ոտանավոր հատվածները, որ ձեռագրերից քաղված «Յաղբքսանդրի գրոց» վերնագրով է տրված:

«Բնագրեր» բաժնում տրված են նաև Խաչատուր Կեչառեցուն կասկածելիորեն պատկանող Աղեքսանդրի սլաոմության կից հրատարակված Բարաոնությունները: Վերջիններս թեև Հ. Տաշյանի «Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի» մեծարժեք աշխատությունից հետո գրեթե անառարկելիորեն խըլվեցին Կեչառեցուց և հավանականորեն համարվեցին այդ պատմության թարգմանչի՝ Մովսես Խորենացու ստեղծագործություններ, Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության սլաոմության» II հատորի հրատարակումից հետո, նորից Խաչատուր Կեչառեցունը համարվելու հիմքեր ստացան: Այս հարցին այժմ որոշակի պատասխան տալ չկարողանալով, անհրաժեշտ համարեցինք հավելվածում ընթերցող հասարակությանը ներկայացնել Խաչատուր Կեչառեցուն վերադրվող այդ Բարաոնությունները նույնպես:

Բնագրերը կազմելիս աշխատել ենք հիմնականում հարազատ մնալ ձեռագրերի գրչությանը: Իրրե սկզբունք «ա» գրությունը փոխել ենք «օ»-ի, «ը» ձայնավորի ավելորդ գրությունը հանել ենք, սրահպանելով միայն ոտանավորի չափի համար անհրաժեշտ վանկատեղծ գործածությունը: Տողատակի տարբերակների մեջ չեն նըշված բացահայտ վրիպակներն ու գիմորոշ «դ» հոդի «տ» գրու-

թյունը և նման գրչական տարբերություններ: Բացառություն կազմում են ձ (հիմնական) բնագրերը, որոնց ճիշտ պատկերը տալու համար տողատակում նշում ենք դրանց նույնիսկ սխալ գրչությունները: Երբեմն պահպանված են գրության թեև սխալ, բայց լեզվական հետաքրքրություն ներկայացնող դեպքերը (օրինակ՝ զըմբըռնեալ, զընպըռնեալ, զընբպըռնեալ և այլն): Կետադրությունը հարմարեցված է ժամանակակից գործածությանը:

Տաղերի վերնագրերը քաղված են ձեռագրերից՝ մեր նախընտրությամբ: Ձեռագրերում վերնագիր չունեցող տաղերի համար իրրև վերնագիր փակագծերում տրված է այդ բանաստեղծությունների սկսվածքը:

Բնագրերից յուրաքանչյուրն ունի տարբերակների առանձին ցանկ, որ տրվում է վերջում՝ Ծանոթագրություններ բաժնում:



**1 ՈՂԵ ՎԸՄՆ ԸԽԵՐՄԸՆ ՏԸՆՍ ԸՐԵԻԵԼԵԱՆ**

- Յայս ահագին աւուրս որ հասար,  
 Ժամանակիս, որ պատահեցար,  
 Զքաղցր արարիչըն դառնացուցար,  
 Զերկիրս արեամբ մեղօք ներկեցար:
- 5 Զմայրն աստուծոյ մեր տրտմեցուցար,  
 Զմեր բարեխօսն բարկացուցար.  
 Զեկեղեցեաց դրունս փակեցար,  
 Զկանոնական գիրըն մոռացար:  
 Մեր մեր ձեռօք մեղ դահիճ եղար.
- 10 Հայհոյութեամբ զբերանս մեր լըցար,  
 Յանդեղջ շարիքս շաղախեցար  
 Զաւազանին խորհուրդն ուրացար:  
 Ըզկիրակին սուրբ ոչ պահեցար,  
 Այլ շար գործովք մեր պատառեցար,
- 15 Զժամն և զաղօթս բնաւին մոռացար,  
 Ի պատարագն անգամ չնայեցար:

1 ac Զայս հաւուրքս 3 d արարիչ մեր, beg արարիչն մեր 4 bfg զեր-  
 զիր 5 bdefg ըզտիրամայրըն փխ զմայրն աստուծոյ մեր, c Զմայր աստուծոյ  
 մեղ 6 bdefg բարեբարբըն c բարեբարբըն 7 bfg զեկեղեցեաց 9 bdefg  
 ձեռաւքս դահիճ եղար, h ձեռօքս 10 c ազբերանքս 11 c կարիքըս փխ շա-  
